ցա բանակը խորսութեց և Ղոլտն աղատեց՝
միանդամայն շատ զերի ու աւար առաւ : Ահա
այն ատեն Սալէմայ թագաւորը Մելչութէ՛ի՝ որ
Աստուծոյ քահանայ մ'էր, Սորումայ թագաւո-
րին հետ Աբրահամու ընդ առաջն ելաւ, զանի
օրհնեց և նմա հաց ու զինի մեծարեց՝ ի նշան
շնորհակալութեան : Այս Մելքիսեդէկը Յիսուս
Քրիստոսի մէկ նախատիպ պատկերն էր :

Սուրբ, Գոմորի կրծանումը . — Պենդեսոլսի
(Ճնշ + աղա) բնակիչները յետին ծայր մոլի ու
ամբարիշաւ էին : Աստուած ուղեց այս քաղաք-
ները կարծանել . բայց որովհետեւ նոցա մէջ ահ-
մեղներ կային երկու հրեշտակ ուղարկեց, որ
պարզ ճամբարդներու պէտ Սորոմիջան և Ղոլ-
տի տունը զնալով ըսին նմա որ շուտ մ'իր
ընտանիքն առնու և քաղքէն գուրս ելնէ որպէս
զի վերահաս պատուհասէն աղատի, ապսոլե-
լով միանդամայն որ ետ չհային խոյս տալու
ատեն : Ղոլտ այս հրամանը կատարեց և իր
ընտանիօք ճամբար ելաւ : Արդէኑ Սորոմ քաղ-

քէኑ բաւական հිතուացեր էին՝ երբ յանկարծ-
ահուելի որոտումներ լսեցին՝ ի յետուսա : Յեր-
ինից հուր ու ծծումք տեղալով՝ բոլոր ուն-
գեպօլիսը, այսինքն Սորոմ, Գոմոր և ուրիշ ե-
րեք մօտաւոր քաղաքներ՝ այրեցան մոխիր գար-
ձան : Ղոլտի կինը հրեշտակին պատուէրը մոռ-
նալով՝ ետին նայեցաւ և իսկոյն աղի արձան ե-
ղաւ : Ղոլտ՝ թէ ն վշասհար՝ իր ուղին շարու-
նակեց և լերան մը վրայ համնելով՝ անդ բնա-
կեցաւ և բազմաթիւ ընտանեց հայր եղաւ : Իր
երկու Մովաք ու Աման որդւոցմէ Մովկարացիք
ու Ամմնանայիք սերեցան, որ վերջէն Աբրահա-
մայ սերունդին թշնամի գարձան :

Այնուհետև Պենդեսոլսի գտնուած վայրը
Մերեւեւ ծովն եղաւ, կամ Աստուածութեան լիճ, ու-
րու եղերքն աւազուտ ու ամայի և ջրերը դառն
են ու անհամ :

Իւմայէլ. — Աբրահամ՝ Սառայէኑ զատ՝ Ա-
հար անուն եղիստացի կին մ'ունէր, որմէ ծնաւ
Խամայէլ որդին : Խոկ Սառա՝ որ ամուլ էր, երկ-
նային աղդաբարութեան համեմատ՝ պառաւու-
թեան ժամանակը որդի մ'ունեցաւ որու անունն
էր Խամայէ, որ ըսել է ուրախութեան զաւակ :
Եւ իրաւի Խամայէ մեծ խնդութիւն պատճա-
ռեց իր ծնողաց, վասն զի իրմով պիտի ծաղ-
էկը Աբրահամայ սերունդը : Բայց Խամայէլ
սկսաւ նախանձէլ իր փոքր եղար վրայ և խա-
զու ատեն զանի կ'նեղէր և կ'ծեծէր : Սառա
այս նախանձէն չարեք գուշակելով՝ աղատեց իր
ամուսինն որ Իւմայէլը մօրը հետ անկից հեռա-
ցընէ : Ծանր էր Աբրահամու այս խեղճ կինը

Ճամբել, բայց ստիպուեցաւ ինոջը ինդիրը կառտարել, վասն զի Աստուած այսպէս կամեր և յայտներ էր թէ Խսահակին պիտի ծնէր իր բազմաթիւ սերունդը, նոյնպէս աշխարհի Փքէւաւ, և թէ Խսմայէլն ալ երեսէ չպիտի ձգէր:

Աւստի Աբրահամ առաւօտ մը կանուխ՝ Աղարն իր Խսմայէլ որդւոյն հետ վրանէն գուրս հանեց և պատուիրեց նմա որ բնիկ երկիրը գառնայ: Աղար վշտաղին հնազանդեցաւ այս հրամանին և Խսմայէլն առնլով անապատմն Ճամբան բունեց որ Աբրահամ կ'տանի: Բաւական ժամանակ քամելէն ետև՝ իր հետն առած հայն ու ջուրը սպառեցան, և Խսմայէլ՝ որ անօթութեանէ կ'հալէր և ծարաւէ կ'պապակէր, ընկաւ չնչասպառ ծառի մը ներքեւ: Աղար տեսնելով որ իր որդին հոգին պիտի փչէր՝ սկսաւ լալ և նոյն տեղէն հեռանալ, գառնութեամբ դուելով. — Ա՛յ, չեմ ուզեր տեսնել իմ որդւոյս մահը! — : Բայց Աստուած այս ողորմիլի մօր վրայ զթալով իր հրեշտակն ուղարից և նմա ջրի աղմիր մը ցոյց տալով խոստացաւ վերստին Խսմայէլը մեծ ժողովրեան մը հայր ընել:

Ի վերջէ Խսմայէլ իր ոյժը դանելով՝ մօրը հետ Ճամբան շարունակեց և հասաւ Ապառագ Աբրահիս Փառաւուա գաշար, և սպատերազմանէր ժողովրեան մը Հիմնադիրն եղաւ: Այս ժողովրդն Խսմայէլոցին կամ Աբրահամին կոչուեցաւ:

Խսահակ. — Աստուած՝ Աբրահամու հնաղան գութիւնը փորձելու համար հրամայեց նմա որ մօտակայ լեռ մ'ելնէ և իր որդին իրեն զոհ ընէ: Հին գարերու մէջ՝ Աստուածոյ ոչ միայն եր-

կըի ընտիր բերք, բոյս, պտուղ, ծաղկի կը մատուցանէին իրեն նուէր, այլ և կենդանիներ՝ զոր կ'մորթէին և ապա փայտակոյափ մը վրայ դնելով կ'այրէին: Այս տեսակ զոհն ողջէն կ'ըստէր: Սակայն ինչ դառն և մեծ զոհ մ'է մարդ ողջակիղել՝ Աստուածոյ հաճելի լինելու համար, մանաւանդ որդի մ'որ հօր համար նաշխարհիկ զանձ մ'է:

Ահա Աստուած այս ողջակէզը պահանջեց Աբրահամէն՝ որ՝ թէ սաստիկ կ'վշտանար այս ծանր հրամանին վրայ՝ բայց կ'հնազանդիրէ: Ուստի ծերունի նահապեսն իր հետն առնլով Խսահակ որդին՝ որու կռնակը բեւնաւորեր էր ողջակիղին համար փայտը, Ճամբայ եւսու: Խոկ Խսահակ կ'ըսէր՝ լեռն ՚ի վեր եւնելու ատեն՝ — Հայր իմ, աւասիկ դանակը զոհը մորթելու համար, աւասիկ փայտն ու կրակը զայն այրելու համար, բայց ո՞ր է զոհը: — Աստուած պիտի հոգայ, որդեակ իմ, կ'ըսէր Աբրահամ, և իր արտսուքը ծածկելու կ'ջանար:

Երբ լեռան զաղաթը հասան (Գողդուայ) Աբրահամը սեղան մը շինեց, վրան փայտ դրաւ և ապա որդին կապելով փայտակոյտին վրայ դրաւ որ մորթէ ու այրէ: Այն ինչ թեր վերցուց որ զաւակը զարնէ, երկնառաք հրեշտակի մը ձայնը լսեց որ կ'ըսէր. — Աբրահամ, Աբրահամ, մի սպաններ որդիկ, Աստուած քեզ փորձել կ'ուզէր և զոհ է քու հնազանդութենէդ: Պիտի ապրի Խսահակ և նորա սերունդն երկնից աստղերուն պէս պիտի բազմանան — :

Խսահակը ու բախութեամբ լի՛ իր զաւակը զրկեց, և նոյն պահուն խոյ մը տեսմելով որ

եղջուրներէն մացառէ մը կախուեր էր, բունեց զայն և արդէն պատրաստուած սեղմնին վրայ զենլով՝ Աստուծոյ զոհ մատոյց :

Աբրահամ՝ որ խոր ծերութեան հասեր էր, Խսահակը կարգել կամելով՝ իր հաւատարիմ ծառան Եւլուտու՝ Միջաղետաց Խարուն քաղաքը դրկեց ուր իր Կամակը եղայրը կ'բնակէր, որպէս զի անկից կին մ'առնու բերէ, Եղիազար Խառան համնելով՝ քաղքէն դուրս ջրհորի մը մօտ կայ առաւ իր ուղտերով՝ Քիչ առենէն միշ շատ աղջիկներ նոյն ջրհորին մօտ եկան որ իրենց խաշանց ջուր տան : Կոյցա մէջ Կապովիդի թուր Ռեքէկս ամենէն առելի կ'փայլէր իր համեստութեամբն ու զեղցիութեամբը : Եղիազար այս աղջիկան մօտենալով ջուր ինդրեց որ խմէ : Ռեքեկա յօժարակամ տաւաւ իր կոյժն և Եղիազարի ուղտերուն համար ալ ջուր քաշեց : Այն ատեն Եղիազար դիտեց որ իր ուղած աղջիկն է այն, և պարկէն ապարանջան ու օղեր հանելով՝ նմա ընծայեց : Ապա Ռեքեկայի եղբօր՝ Լաբէնուս տունը զնաց, ուղերութեան նպատակն իմացուց և անոր հաւանութեամբը Ռեքեկան տաւաւ ու Խսահակին բերաւ :

Խառնակայ որդիկը . — Խսահակ երկու որդի տանեցաւ, Եսաւ ու Յակով, որ երկուորեակ էին : Սոքա ևս՝ Աղամայ երկու որդուց պէս՝ բնութեամբ իրարոտ չէին նմանէնք : Եսաւ առջնակը չէկ էր ու թաւամորթ, վայրենամիտ ու դուռող, որսորդութեամբ դաշտերը կ'անցընէր իր ծնողքէն հեռու, մինչդեռ Յակով հեզ, ընտանէս և ծնողացը հլու զաւակ մ'էր :

Օր մը Եսաւ՝ յոկնած և անօթի որսէն տունը բառնալով՝ աղաչեց իր Եղայրն որ եփած ու պեթանն իրեն տայ որ ուտէ : Յակոբ յանձն առաւ, պայման գնելով՝ որ Եսաւ անդրանկութեան իրաւոններն իրեն ծախէ : Եսաւ այս սակարկութիւնն ընլունեց և ոսպեթանը կերաւ :

Խահապեսաց ժամանակ սովորութիւնն կար որ Երբ Հայր մ'իր մահը մօտալուս տեսնէր՝ իր մեծ որդին կ'կոչէր և նմա յատուկ օրհնութիւն տալով՝ իր յաջորդը կ'կարգէր, և այսպէս անդրանիկը՝ Հայրենական ստացուածոց մեծ մասը ժառանգելով՝ իր Եղայրց և ընտանեացը զլուխը կ'ընէր :

Նոյնակս և Խսահակ՝ որ արդէն շատ ծեր էր ու կոյր, իր վախճանը մօտ տեսնելով՝ Եսաւ որդուցն անդրանկութեան օրհնութիւն տալ ուզեց : Աւատի պատուիրեց նմա որ իրեն որսի մին բերէ, խորտիկ ընէ ու մեծարէ : Բայց որովհետեւ Եսաւ իր անդրանկութիւնը Յակոբին տուեր էր, մայրը Ռեքեկան հնար մը մտածեց որ օրհնութիւնը Յակոբին ընդունի : Երկու մանր ուլ մորթել տալով, զուտ մը խորովեց, ուլենիներով Յակոբայ թեւերն ու վիզը փաթթեց որ Եսաւին պէս թաւ լինի ու հօրմէն ջանչցուի և ապա կերակուրը Յակոբայ տուաւ որ հօրը տանի : Խսահակ կերաւ և զամի օրհնեց :

Բայց Եսաւ՝ ի գարձին զործն իմանալով՝ սասափիկ բարկացաւ և որոշեց իր Եղայրմէն վրէ ժուծել : Այն ատեն Յակոբ Ռեքեկային խորհութով՝ հօրը տունէն հեռացաւ և Միջաղետք՝ Լաբանու տունը զնալու համար համբայ ելաւ՝ որպէս զի իր Եղայրը վրէ մինդրութենէ ապատի :

Յակոբյան Երազը . — Արդէն բաւական ատեն կար որ Յակոբ կ'ուղեռէր՝ երբ իրիկուն մը հանգչելու համար առանձին տեղ մը դադար առաւ և գլխին տակը քար մը դնելով՝ նիրհեց : Այս ատեն սբանչելի երազ մ'երազեց : Երկրէս մինչեւ երկին սանուող մը տեսաւ , որու վրայ հրեշտակներ կ'ենչէին կ'իջնէին : Կոյն միջոցին ձայն մը լսեց որոսալիր որ կ'ըսէր . — Ես եմ Յաւիտենականը , Աբրահամու և Հօրդ Խահակայ Աստուածը : Այդ երկիրն որու վրայ կ'նշես քեզի պիտի առամ , երկրիս աւագին պէս պիտի շատնայ սերունդու և բոլոր ազգերն ՚ի քեզ պիտի օրհնուին — : Յակոբ իսկոյն ահ ու դողով արթնցաւ և զղալով որ երկնազդեցիկ երազ մ'էր այս , քարը զոր բարձ ըրեր էր , իւղով օծեց և զայն Բէրէւ անուանեց , այսինքն Աստուածոյ տուն :

Յետոյ Յակոբ Խառան հասաւ . և Լաբանու մօտ քան տարի ծառայեց : Բազմաթիւ զաւակներ ունեցաւ իր Լիա և Ռափել կիներէն , և մերջապէս Քանանացոց երկիրը դաւնալու համար իր ընտանեօք և խաշանց հետ Ճամբայ ելաւ :

Իսրայէլ . — Մինչդեռ Յակոբ իր հայրենի հովին կ'մօտենար՝ սաստիկ երկիրով զդայ իմանանալով որ իր Խսաւ եղայրը զինեալ գնդով մը իրեն դէմ կ'գար : Անիմջապէս նոյն տեղով վրանաներ կանգնեց , իր ընտանիքը տեղաւորեց և ինք մեկուսացաւ որ Աստուածոյ օգնութիւնը հայցէ : Յանկարծ զիշերայն անձանօթ էակ մ'իր դէմն ելաւ : Հրեշտակ մ'էր երկնաւաք որ սկսաւ Յակոբյան հետ գոտեմարտիլ : Ի զուր ջանաց հրեշ-

տակն որ զետին տապալէ Յակոբը : Այս կափը մինչեւ առաւատ տեսեց և Յակոբ յաղթեց :

Հրեշտակը Յակոբյա արիստար թիւնը զովելով , օրհնեց զանի և Իսրայէլ անուանեց որ ըսել է Ասորուաժամբր : Երբ արեն ելաւ՝ նահապետն իր ընտանիքն առնլով շխտակ Խսաւին մօտ զնաց , և սիրազ շահելու համար նորա առջեր խոնարհեցաւ : Խսաւ մոռցաւ իր հին ոին և նորա հետ հաշտուեցաւ :

Յովէտ և իր Եղիշաբէւ . — Յակոբ տասն երկու որդի ունէր , որ Խսաւյէլի տասն երկու ցեղերու նախահարբն եղան : Բայց նա ամենէն աւելի կ'սիրէր Յովլէփը , որ քաղցրաբարոյ և պարկեշտ պատանեալ մ'էր : Իր սիրոյն ՚ի նշան ծաղկեայ պատմուհան մը շինել տուեր էր նորա համար : Յովլէփայ միւս եղլարբն իրմէ սկսան նախանձիլ , մանաւանդ երբ նորա հրաշալի երազները կ'լսէին : Օր մը՝ Յակոբյա տասն որդիքը հեռաւոր դաշտ մը զացեր էին իրենց ոչխարիներն արածելու , ըստ սովորութեան , և քանի մ'օր տարակայ զանուելով իրենց հայրը տարակուսանաց մէջ ձկեր էին : Ուստի Յակոբ՝ Յովլէփն ուղարկեց որ երթայ նոցա վրայ լուր բերէ : Երբ իր չարամիտ եղբարքը զինքը հեռուեն տեսան իրարու ըսին . — « Ահա մեր երազատեսը կ'գայ , եկեք զանի սպաննենք և մեր հօն ըսենք թէ վայրի կենդանի մը պատառեց » : Ուութէն՝ որ անդրանիկն էր , յորսորեց որ սոյդ ոճիրը զգործեն և զանի մօտակայ մէկ ցամաք հորը նետեն , վերջէն ազատելու յուսով : Այս յորդորը մտիկ ըրին և Յովլէփ անկասկած մօ-

տենալուն՝ եղարքը զանի բռնելով՝ ծաղկեայ
պատմուձանը հանեցին և զինք հորն իջեցու-
ցին, անզգայ մնալով նորա աղաշանաց և ար-
տասուաց : Նոյն պահուն Խոմայելացի վաճա-
ռականներ անյնելով՝ Յուղայի խորհրդով՝ եղ-
բարբը դուբէն հանեցին Յովսէփին և նոյն ծա-
խեցին : Յետոյ այծ մը մորթելով նորա արեան
մէջ Յովսէփից պատմուձանը Յամաւեցին և
Յակոբայ դրկեցին ըսելով թէ իր սիրական որ-
դին զաղանի կերակուր եղեր էր : Յակոբ սաս-
տիկ վիշտ զղաց որդույն արիւնալի հանգերձը
տեմնելով և անմիթար մնաց նորա կորստեան
վրայ :

Յամայելացի՞ վաճառականներն Եղիպատոս Համնելով Յովսէփը ծախսեց Եին Հարություն Եղիպատացիի մը, Պէտքէ լիս անուն, որ թաղաւորին (փարաւան) Երևելի մէկ պաշտօնաւորն էր։ Յովսէփի իր խելքով և զործունէութեամբ սիրելի եղաւ իր տիրոջ, որ զինք իր տանը տնտես կարգեց։ Դժբաղդաբար՝ Պետականի կինը Յովսէփը հրապուրել չկարենալուն՝ իր ամուսնոյն առջև զանի ամբաստանեց իրքեւ անհաւատարիմ։ Այս ատեն Պետականի կինանը խօսին հաւտալով Յովսէփը բանատ դնել առաւա։ Նոյն բանատին մէջ Փարաւանի երկու սպասաւորները կային։ Մին մատուակին էր, միւսը մատակարարը։ Այս երկու կալանաւորները մի և նոյն դիշեր երազ տեսան և հետեւալ օրը Յովսէփին պատմեցին։ Մատուակին երազեր էր թէ՛ բաժակի մը մէջ խաղող կ'քամեր և թաղաւորին կ'մնարի՛ք։ Մատակարարն երազեր էր թէ՛ զլանուն վրայ երեք հատ կու

զավ կ'իրէք հայով լեցուն , և թռչունները զայն
կ'ուտեէին : Յովակի այս երազները մեկնեց և մա-
տուռակին ըստ . — « Դու , քիչ օրէն՝ պիտի
հաստատուիս պաշտօնիդ մէջ , բայց երբ արգու-
նիքն երթաս , յիշէ զիս և թագաւորն աղաչ-
որ զիս բանտէն հանէ , վասն զի անմեղ եմ » .
Խոկ մատակարարին ըստ . — « Դու մահուան
պիտի գասապարատուիս և մարմինդ թռչնոյ ձաւ-
րակ պիտի լինի » : Արգարև այսպէս եղաւ .
Բայց մատուռակը յաջողութիւն զանելուն՝ Յով-
ուէ փը մոռցաւ , որ ամբողջ երկու տարի բանալ-
մաց :

Փարտառնի Երազը . — Այն ատեններն Խղիսկ
տոսի թաղաւորը Թուրքուսու երազ մը տեսաւ ,
որ իր միաբը շատ վրդովեց : Տէրութեան զիւ-
տունները չկրցան այն երազը մեխնել : Օր մը
մատուռակը՝ զինի տալու ատեն՝ զիտելով որ
թաղաւորը տեսած երազին համար շատ տիտոր
էր՝ յայանեց նմա որ բանալը Յովսէփ անուն
պատանի մը կայ որ քաջ զիահէ երազ մեխնել ,
ինչպէս որ իրենը մեխներ էր : Փարտոն ան-
միջապէս հրամայեց որ Յովսէփն իր առջնը բե-
րեն և իր երազը նմա պատմեց այսպէս . — «Նե-
ղո գետին ափունքն էի . աղլոր մարդագետնի
վրայ եօթ պարարտ երինջ աեսայ և եօթ հատ
ալ վախա երինջ որ պարարտները կերան . յե-
տոյ տեսայ եօթ լեցուն հասկ և եօթ հատ պա-
րագ հասկեր որ առջնները կլւցին : Յովսէփ
այս երազները՝ որ նոյն նշանակութիւնն ունեին ,
բացառից ըսելով — եօթ զէր երինջն և եօթ
լեցուն հասկերը կ'նշանակեն թէ եօթ տարի շա-
րունակ յորենի առատութիւն պիտի լնի յե-

գիպոսու . իսկ եօթ վախա երինջն ու համկերը
կ'նշանակին թէ հետևեալ եօթ տարին ամէն
տեղ սով պիտի տիրէ : Ուստի խորհուրդ տուաւ
Փարաւոնին որ առասութեան ժամանակ ցորին
համբարէ սովին առաջն առնլու համար : Փա-
րաւոն Յովսէփին իմաստութեան և հեռասեսու-
թեան վրայ զարմանալով՝ իսկայն զանի փոխար-
քայ ըրաւ և ծանր հագուսներ հաղցընելով
իր արքունական ոսկի մատանին ընծայեց նմա ,
համան տալով միանդամայն ամենուն որ նմա
հնաղանդին : Յովսէփ այս բարձր պատուցն և
Փարաւոնի լստահութեան արժանի լինելու հա-
մար՝ տէրութեան գործերը կարդադրեց և սկսաւ
ամէն կողմէ ցորեն բերել և համբարել տալ ,
որպէս զի դալիք սովին ժամանակ ժողովուրդը
սովալլուկ չմեռնի : Իրօք սովն եկաւ : Բայց Ե-
ղիպոսու Յովսէփայ շնորհիւ , մեծ տառապան-
քէ ազատ մնաց :

Յովսէփ էր Եղիպարց իշայդնուէ . — Սովն սկսեր
էր տարածուիլ Եղիպոսուի չորս կողմն և մին-
չե Քանանացւոց երկիրը : Յակոբ տեսնելով որ
տան պարէնը հասեր էր , իր որդիքն Եղիպասո
ուղարկեց որպէս զի ցորեն դնեն . միայն կրասեր
որդին Բենիամինն իր մօս պահեց՝ վախնալով
որ Ճամբան փորձանք մը չպատահի դլխուն :
Երբ Յակոբայ տան որդիքը հասան Եղիպասո
Փարաւոնի առաջին պաշտօնէին առ ջեն ելան ,
երկիր պաղին և իրենց ինդիրն առաջարկեցին :
Յովսէփ իր Եղարքը Ճանչեց թէն , բայց գիտ-
մարի խստիւ վարուեցաւ նոցա հետ և ըստաւ .
— « Դուք յորեն զնելու համար եկած չեք ,

այլ անտարակոյս լրտեսներ էք և միտք ունիք
Փարաւոնի տէրութեան մէջ անցած դարձածը
քննել » : Յակոբայ որդիքն այլ յայլմէ եղան և
ամէն բան պատմեցին . — « Մենք տասն երկու
եղասրը էինք , ըսին . կրտսերը մեր հօրը քովն
է , իսկ միւսը վաղուց մուած է » : Այն ատեն
Յովսէփ ըստաւ . — « Եեր խօսքին չպիտի հա-
տամ՝ մինչև որ փորձով չհաստատէք և ձեր
կրտսեր եղասրը չքերէք : Եորեն առէք զայէք .
բայց ձեղմէ մին այս տեղ պատանդ պիտի պա-
հեմ » : Յովսէփայ եղասրը նորա գէմ ըրած
անիբառութիւնը յիշելով ըսին . — « Աստուած
արդար է , մեզ կ'պատմէ » : Յովսէփ նոյս ը-
սածը հասկրցաւ և սիրտն ենելով զլուխը զար-
ձուց որ արտառութեաննեն : Ազա համան
տուաւ որ նոցա պարկերը ցորեն լեցընեն , և
պէտք եղածը հոգան ուղևորութեան համար :
Բայց Ճամանն իր քովը պատանդ պահեց :

Երբ միւսներն իրենց հօրը զարձան՝ բոլոր
անցած զէպքը պատմեցին Յակոբայ : « Ծերունի
նահասկետը մերժեց Բենիամինը տալու . բայց
երբ տեսաւ որ սովն օր ըստ օրէ կ'սաստկանար
և որդուց բերած պաշարը կ'սպառէր , յանձն
առաւ թողուլ Բենիամինն և Յուգա խոստացաւ
ամէն ինսակը տանիւ նորա վրայ : Եղիպասո վե-
րաբառնալով՝ Յակոբայ որդիքը սիրալիք ընդու-
նելութիւն մը զտան Յովսէփայ կողմէ , որու
սիրտը սաստիւ յուղուեցաւ իր հօրը վրայ լու-
րեր առնլով և Բենիամինը տեսնելով : Հետե-
եալ օրը Յովսէփ իր մատակարարին համայեց
որ առաջին անգամուան պէս նոցա պարկերը
ցորեն լեցընէ , և Բենիամինի պարկին մէջ զայ-

Նի իր ոտկի բաժակը զնէ , իր եղաբքն երկրորդ անգամ մ'ալ փորձելու մտօք : Երբ այսպէս Յակոբայ որդիկն ուրախ զուարթ ճամբայ ելան , յանկարծ Յովսէփայ հաղարապետը վրայ հասաւ կեցոց զնոսա ըսելով . — « Ապաշնորհ մարդիկ , այսչափ բարեայ փոխարէն չարիք կ'հատուցանեք . ձեզմէ մին իմ տիրոջո ոսկի բաժակը զողցեր է » : Ամենքը շփոթելով համարձակ ըսին թէ այդպիսի զողութիւն մը բնաւըրած չեն , և եթէ իրենցմէ մէկուն մօտ բաժակը զանուի , այն սպաննուի և իրենք զերի մասն : Խակոյն պարկերը պարպեցին և բաժակը Բենիամինի պարկին ելաւ : Մ'ծ եղաւ Յակոբայ որդոց զարմանքն ու ցաւը և ստիպուեցան վերսախն Յովսէփայ առջնեն ենել , որ բարկութիւն կեղծելով խստիւ ըսաւ . — « Արդար չեղու անմեղը տառապի , գուք զայէք ձեր հօրը քով , բայց զողն իմ զերիս պիտի մնայ » :

Այն ասեն Յուդա՝ Յովսէփայ ճնդաց փարելով ըսաւ . — « Տէր իմ , հօրս խօսք տուի Բենիամինը դարձնելու իրեն . եթէ ՚ի դարձնն մեզի հետ չտեսնէ , ցաւէն պիտի մեռնի : Ես նորա տեղ զերիտ կ'լինիմ » : Յովսէփ այս լաւելով չկրցաւ այլայլութիւնը զսպել և ինքզինքը նոցա յայտնեց բաելով . — « Ես եմ ձեր Յովսէփ եղաբքը . միթէ տակաւին կենդանի՞ է հայրս » :

Ապա իր եղաբքը դրկեց զորովանօք և իրնդքեց որ երթան իր հայրը բերեն : Յակոբ այս ուրախալի լուրն իմանալով զոչեց զարմանօք . — « Այսուհետեւ ուրիշ փափաք չտնիմ , քանի որ իմ Յովսէփ որդիս զեռ կենդանի՞ է » :

Աւստի Յակոբ իր ընտանիքն առնլով , որ այն ատեն եօթանասուն հոգիէ կ'բաղկանար , Եղիպատոս զնաց և Գէուէն բարերեր երկիրը բնակեցաւ : Այս նահապեան արդէն ծերացած լինելով իր որդիկն ու թոռունքն օրհնեց , այլ և այլ մարդարէութիւններ ըրաւ և խնդրեց որ իր մարմինը հարցը զերեզմանը թաղեն ՚ի Մամբրէ : Յովսէփ իր հօրը վերջին կամքը կատարեց : Հատ տարիներ ևս կառավարեց նա Եղիսաբետն և մահուան ժամանակը յորդորեց իր եղաբքն որ միւտ միաբան մնան ապսպիրելով որ իր մարմինը հօրը մօտ թաղեն :

ԳԼՈՒԽ Գ.

ՄԱԿԱԿԻՆ ԲԱՆ Ա-Կ-Ա-Ր-:

(2003-1080)

Խորայէլացաւոց հալածանէլ . — Յակոբայ ընտանիքը քիչ ժամանակի մէջ այնքան բազմացան յԵղիսաբետոս որ մեծ ժողովուրդ մը կազմեցին՝ բուլորովին տարբեր բնիկ ժողովուրդէն կրօնիւ , սովորութեամբ և բարուք : Արդէն Յովսէփայ բարերար՝ թառելունք փարաւոնը մեներ և նորա տեղ գոռող ու անզութ իշխանն Ամենովիիս (Մէրէնինայ) կ'թագաւորեր յԵղիսաբետոս : Այս թագաւորն Խարայէլացոց բազմանալը մեծ վտանգ մը համարելով իր աէրութեան համար , այլ և

այլ բուռն միջոցներ բանեցոց զայնս չնշելու
յուսով։ Նախ տաճանելի աշխատութեանց դա-
տապարտեց և ապա հրամայեց իր ժողովրդեան
որ նոյանորածին որդիքը Նեղոս գետը նետեն։

Մովկէս ապարանը՝ Նեղոսն։ — Նոյն միջոցին
Վեհի ցեղէն կին մ՛իր նորածին որդին երեք
ամիս ծածուկ պահեց։ Բայց նկատելով որ այս
անմեղ մանկիկը վերջապէս Փարաւոնի զինուորա-
ներն երևան պիտի հանեն և սպաննեն, սրբուէ
օրորոց մը շինեց, կուսրով ծեփեց և մանկիկը
նորա մէջ զնելով՝ զետը ձգեց, այն պահուն
որ Փարաւոնի աղջիկը զետեզրը կ'զար լուաց-
ուելու։ Երբ սա հեռուէն կ'նշմարէ այն նա-
ւակաձեւ կողովն որ ջրերուն վրայ կ'ծփար, իս-
կոյն հրաման կ'ընէ որ զայն իրեն բերեն։ Ճե-
տաքրքրութեարբ կ'բանայ և նորա մէջ սիրուն
մանկիկը տեսնելով այնքան կ'զթայ վրան որ զա-
նի սանտուի մը կ'յանձնէ որ հոգ և ինսակ տա-
նի նորա վրայ։ Այս սանտուն զետընկեց ման-
կան մայրն էր։

Քանի մը տարի ետք՝ Փարաւոնի աղջիկը սոյն
մանկիկն որդեգրեց նորա սանունը Մովկէս զնե-
լով, որ ըսել է ձեւն եւծ, և արքունիքը պա-
հեց, որ եղիպատացոց ամէն զիտութեանց մէջ
վարժեցաւ։ Բայց երբ Մովկէս մեծնալով իմա-
ցաւ իր ծագումը, ըստ ևս համարեց իր աղ-
դակիցներուն հետ ապրիլ ու տառապիլ քան
թէ ճոխութեան մէջ՝ նոյան հալածիչներուն հետ
մնալ։ Օր մը տեսաւ նա եղիպատացի մ'որ սաս-
տիկ կ'զանակոծէր Խրայէլացի մը։ Ուստի չկըր-
նալով իր արդարացի զայրոցի զսպել, եղիպ-

տային սպաննեց և խոյս տուաւ Մադիանու եր-
կերը, ուր ամուսնանալով՝ քառասուն տարի իր
աներին ոչխարիներն արածեց։

Բայցավար Հորինն։ — Օր մը Մովկէս Քո-
րէք լերան մօտ իր հօսր կ'արածէր՝ երբ յան-
կարծ նորա զագաթը մորենի մը նշմարեց որ կը
վառէր առանց այրելու։ Մովկէս ահ ու գողով
մօտեցաւ որ լաւ դիաէ այս նորահրաշ տե-
սիլը, երբ աստուածային ձայնը լսեց որ կ'ը-
սէր։ «Լսեցի Խրայէլացոց տրտունջները։
դերութենէ զայնս պիտի աղատեմ և քեզ ընտ-
րեցի առաջնորդ։ Ուստի զնաւ յանուն իմ Փա-
րաւոնէն ինդրէ, ես միշտ քու հետ պիտի լի-
նիմ։ Ես եմ Եհովան, Որ են ։ Մովկէս կը
վարանէր։ Աստուած նոյն պահուն այլ և այլ
հրաշներ ընելով Մովկէսը քաջալերեց։ Եւ
Մովկէս իր Ահարոն եղորը հետ Եղիպատու զնաց
որպէս զի Աստուածոյ հրամանը կատարէ։ Նախ
իր նապատակն Խրայէլացի ծերերուն յայնեց
և ապա Փարաւոնի առ նեն ելնելով յանուն Աս-
տուած՝ ինդրէց որ Խրայէլացոց թոյլ տայ
անսպատճ երթալ զոհ մատուցանել։ Փարաւոն
Մովկիսի ինդրիլը մերժեց արհամարհանօք և
հրամայեց որ Խրայէլացոց աշխատակն ու չար-
չարանկը ծանրացընեն։

Տան հարուած+. — Մովկէս տեսնելով որ
Փարաւոն անսասատ ու յամառեալ կ'մնայ՝ Եղիպ-
ատացոց վրայ այլ և այլ պատուհաններ բերաւ,
որ հարուած+ կ'ըսուին։ Նախ՝ ջրերն յարին փո-
խեց, որով բոլոր ձուկերը սատկեցան։ ապա

անթիւ հորդուր ճահիճներէն ելնելով դաշտերը լցան և իրենց կարկաչնով թագաւորին քոնը վրովեցին . հետզհետէ եկան մշտներ , ժամներ , որ շարունակ կ'նեղեցին բնակիչները , ժանդակներ , որ բոլոր կենդանիները սատակեց , կարիուր , էղուր , արտար , խառար , որ երեք օր բոլոր եղիպտոսը ծածկեց : Բայց Փարաւոն՝ ամէն անդամուն որ հարուած մը պատահէր կ'խոստանար ազատ թողուլ Խորայէլացիքը , և երբ պատոհասը կ'անցնէր իր խոստումը կ'մոռնար : Տամներորդ հարուածը չհասած՝ որով մէկ զիշերուան մէջ եղիպտացւոց բոլոր անդրանիկ որդիքը սատակիչ հրեշտակին ձեռօք պիտի սպաննուէին , Մովսէս հրամայեց որ բոլոր Խորայէլացիք դառնուկ մորթեն , խորովեն , նորա արինով իրենց տան դռները սրսկեն և Ճամբորդի պէս զաւազան ՚ի ձեռին պատրաստ կենան , այնպէս որ՝ երբ հրեշտակին անցնի՝ արեան նշանը տեսնելով իրենց վլխասէ : Խորայէլացիք այս հրամանը կատարեցին , միանալով Պատառ կամ Զատկին ըրին , որ ըսել է անց , այսինքն Աստուած Եղիպտոսէն պիտի անցնէր : Խորայէլացիք ամէն տարի այս դէպքին յիշատակը տօնեցին զատկական զառնուկի զենմամբ , մինչեւ այն օրն որ Յէսուս Քրիստոս՝ իրքե Ճշմարիտ դառնուկ , իր մարմինն ու արինը զոհեց մարդկան փրկութեան համար :

Փարաւոն այս վերջին հարուածին վրայ թռազուց որ Մովսէս Խորայէլացիքն առնէ Եղիպտոսէն ենէ :

Խորայէլացուց աղասութեանը . — Պատառ

տևեալ օրն Խորայէլացիք , որ վեց հարիւր հաղար պատերազմով էին , առանց համբելու մանկան , կանայքն ու ծերերը , Ճամբայ ելան՝ Մովսիսի առաջնորդութեամբը : Յերեկն ամայէ սին մ'արեգակը ծածկելով նորա ջերմութենէ Խորայէլացիքը կ'սահպանէր . զիշերը լուսեղէն սին մը զայնս կ'առաջնորդէր : Այսպէս անպատճին մէջ քալելով՝ հասան մինչեւ Կարմիր ծովան եղերը : Բայց Փարաւոն շուր մը զղջաց Խորայէլացիքն արձակելուն վրայ , վասն զի զործառներ չպիսի դանէր ահազին շէնքեր կառուցանել տալու համար . ուսափ իր բանակին դլուին անցաւ և Խորայէլացւոց գտնուած տեղը հասաւ :

Խորայէլացիք հեռուէն Փարաւոնի բանակին դալը տեսնելով գող ելան և սկսան Մովսիսի գէմ գանգատիլ : Բայց Մովսէս նոյցա երկիւղը փարաւոց և Աստուածոյ հրամանաւ ձեռքը կարմիր ծովան վրայ տարածելուն՝ սաստիկ հրատապ հով մ'ելաւ և ջրերը բաժնեց այնպէս որ մէջ աեղէն Ճամբայ բացուելով Խորայէլացիք կարող եղան հետիւնն զիմացի եղերը համնիլ ապահովիլ : Փարաւոն նոյցա ետևէն պնդեց , բայց ինքն ու իր զօրքը ծովամզն կորան ջուրերուն միանալով , և այսպէս Խորայէլացիք իրենց բունակալներուն ձեռքէն աղատեցան :

Խորայէլացիք յԱնապատն . — Խորայէլացիք այս նուհետեա անապատին մէջ սկսան թափառիլ և տեսակ տեսակ նեղութիւններ կրել : Երբեմն ծարաւէ կ'պապակին , երբեմն անօթութենէ կը մաշէին և այս տառապանաց պատճառը Մովս

սէսը համարելով կ'տրանջէին։ Բայց Մովսէս՝
Աստուծոյ շնորհիւ, հրաշքներ կ'զորձէր, և
նոյսա ջուր, ուսելիք և այլ և այլ բարիք կը
հայթայթէր։ Ինչպէս երբ երեք օրէն Սուր ա-
նապատին մէջ Մեռա բուռած տեղը հասան, ո-
րովհետեւ ջրերը լեզի էին անդ, Մովսէս՝ զայնա
քաղցրացոց՝ նոյսա մէջ տեսակ մը փայտի շերա-
նետելով։ Նոյնպէս երբ Սէմ անապատէն ենե-
լով Հառնիքիք մոնցան, Մովսէս իր գաւաղանով
ժայռի մը զարկաւ և յորդառաս ջուր բղիե-
ցոց։ Իսկ երբ Քորէքի և Սինա լեռանց մէջ
Խորայէլացոց պաշտը հատաւ՝ Մովսիսի ալօթ-
քով հավ մ'ենելով անհամար լրմարդիներ
թափեցան Խորայէլացոց բանակը, և առաօ-
տուն հանունայ իջնելով բոլոր զաշտը ծածկեց։

Սինա լեռ, պատրուիքանք։ — Արդէն երեք ա-
միս կար որ Խորայէլացիք Եղիշտոսէն ելիք
էին երբ Սինա լեռան ստորաը համելով՝ Մով-
սէս Աստուծոյ հրամանաւ՝ իր Ահարոն եղած
հետ նոյն լեռան վրայ ելաւ։ Այն ասեն երկին
որոտաց, փայլակներ տեսնուեցան, թանձր մու-
խը լեռը ծածկեց և Աստուծած ամպերու մէջն
իր օրէնքը հրատարակեց։ Մովսէս՝ Աստուծոյ
պատշամները ժողովրդեան հաղորդեց։ Յետոց
վերսախն լեռան զադաթն ելսու առանձին և քա-
ռասուն օր անդ մնաց։ Աստուծած տուաւ նմա-
երկու քարեղէն ասխտակներ որոց վրայ դրուած
էին գոտնառնեաւ ու առանուիքանք։

Ոսկէն որին։ — Խորայէլացիք՝ որ Աստուծոյ
հրամանին հաւատարիմ մնալու խոստացեր էին,

շուտով իրենց խոստումը մոռցան, և տեսնելով
որ Մովսէս լեռնէն իջնելու կ'ուշանայ, զայնին
Ահարոնը գտան և իրմէ սպառնալեք պահան-
ջեցին որ Եղիսպատուց կուոց պէս իրենց կոռու-
քեր շնուէ որ պաշտեն։ Ահարոն երկնչելով
նոյսա ոսկէ որին մը ձուլել տուաւ, որու առջե-
Խորայէլացիք սկսան պարել։ Սակայն Մովսէս
լեռնէն իջաւ և ժողովրդեան կուապաշտութիւնն
ու ասլերախտութիւնը դիտելով սաստիկ բար-
կացաւ և քարե ասխտակները դետին նեսեց
խորտակեց և ոսկիէ որթը փշրեց։ Այս պարա-
գայիս մէջ բաղմաթիւ մարդիկ պատժուեցան
իրենց անհնազանդութեան պատճառաւ, բայց
Մովսէս տեսնելով որ միւսները կ'զղջան՝ վերո-
տին լեռն ելաւ, Աստուծոյ ներսղութիւնը հայ-
ցեց և օրինաց նոր տախտակներ առնելով ժո-
ղովրդեան բերաւ։

Տաղոնակ ոսկիք։ — Արկղ մ'էր այս անփուտ
փայտէ, որու ներմն ու գուրսը ոսկի թիթեղ-
ներով պատած էր։ Այս արկղին մէջ դրուե-
ցան օրինաց տախտակները։ Մովսէս այս արկղն
անուանեց Տաղոնակ Տէւառն և զայն ուրիշ կրօ-
նական զարդուց հետ ընամիք կերպասէ վրանի
մը ներքե դնելով նորա պահպանութիւնը Վե-
տացոց ցեղին յանձնեց։ Այս վրանը կ'ըսուէր
Խորան վայսութեան (1605)։

Վահաճան Մովսէսէ։ — Երբ Խորայէլացիք Քա-
նանացոց երկրին մօտեցան՝ Մովսիսի հրամանաւ
տասն երկու մարդիկ զայնին նոյն երկիրը քննե-
լու և ՚ի գարձին իմաց տուին թէ բնակիչները
9

պատերազմասէր, քաղաքները պարսպապատու են և հողը բարեթեր: Այն առեն Խորայէլացիք տեսնելով որ Աւետեաց երկրին տիրելու համար մեծ պատերազմներ ոփափի մղեն, սկսան աւելի դառն կերպով գանգատիլ Մովսիսէն և Ահարոնէն ըսելով. — «Ինչո՞ւ համար մեղ Եղիպատոսէն հանեցիք և այս անապատը բերիք ուր ողբրմելի կեանք մը կ'վարենք և վերջապէս զօրաւոր թշնամիներու ձեռօք պիտի ջընջուինք»: Խորայէլացուց այս ապստամբական շարժումներն ու ապերախտութիւնը պատճելու համար Աստուած քառասուն տարի անապատին մէջ զայնս պտըտցուց և վերջապէս երբ այս ժամանակն աւարտելէն ետև՝ Յորդանան դետին մօտեցան, որու գիմայը կ'դտնուէր Աւետեաց երկրին Երէտով քաղաքը, Մովսէս ժողովուրդը յորդորեց որ Աստուծոյ նախանամութեան վրայ յաւսան, նորա բարերարութիւնները չմոռնան, և վերջին Հրաժարական ողջոյնը տալով զայնս օրհնեց և նէրծօ լեռն ելա: Անտի Մովսէս տեսաւ համայն Աւետեաց երկրին և նոյն տեղը վախճանեցաւ: Բոլոր Խորայէլացիք Մովսիսի մահն երեսուն օր ողբացին, և միաձայն հաւանութեամբ Յեսուն նորա յաջորդ կարդեցին:

Երէտով պէտութե, — Յեսու իր իշխանութիւնը սկսաւ երկու նշանաւոր հրաշք ընելով: Աւետեաց երկիրը մանելու համար սէւտք էր Յորդանան դետէն անցնիլ և Ամմինացուց Երկրով քաղաքն առնուլ: Յեսու հրաման տուաւ քահանայից օր Տափանակն առնուն և դետը մանեն, որու յատակն իսկոյն ցամքելով բոլոր ժողո-

վուրդը միւս կողմն անցան: Յետոյ Յեսու Տափանակը վեց օր Երիքովի պարսպաց բոլորտիքը շըջել տուաւ, և եօթներորդ օրն՝ փուրը հարկանելով Եօթն անդամ՝ քաղաքին չորս զին դարձան, և նորա պարիսաները կլան: Խորայէլացիք քաղաքը մտան և բոլոր բնակիչները, որ անզգամ մարդիկ էին, սրէ անցուցին, ինայելով միայն կին մը, Ռայիտք անուն, որ Յեսուայ կանխաւ ուղարկած պատղամաւորները հիւրընկալեր էր: Այսուհետեւ Խորայէլացիք յառաջանցան և ուրիշ քանանացի ժողովրդոց հետ պատերազմնելով երեք աւարուան մէջ բոլոր Աւետեաց երկրին տիրեցին, որ Յեսուայ ձեռօք տան երկու ցեղերու մէջ բաժնուեցաւ այսպէս:

Յորդանանու արեելեան կողմը՝ Մադիսանցուց, Մովսացուց և Ամմինացուց երկիրը մինչև Լիբանանու լեռը Ռուբէնի, Գաղի և Մանասէի կէս ցեղին բամին լնիկաւ, որուն միւս կէսը դետին աջ կողմը բնակեցաւ, ուր Ասերի, Կեփիթալիմի, Զաբուզոնի, Խաքարի, Եփրեմի, Բենիամինի, Շմառնի, Դանի և Յուգայի ցեղերն իրենց մէջ բաժնուեցին երկիրներն ու քաղաքները: Իսկ Ղեկի ցեղը մաս չունեցաւ, վասն զի Մովսիսի օրինաց համեմատ՝ այս ցեղը միւս ցեղերուն մէջ սփուռած էին որպէս զի Երբայցիքը կրթեն և Աստուծոյ օրէնքը նուցա ուսցընեն: Միայն ամէն ցեղի մէջ յատակ քաղաքներ ունէին և բոլոր Երբայցիքը պարտաւոր էին իրենց երկիրներուն բերքին տասանորդը նոցա տաւ:

Այսպէս կատարուեցաւ Աստուծոյ ըրած խոստումն Աբրահամու և Յակոբայ, որոց սերունդը

դրեթէ աիրացան Քանանացւոց Երկրին, որ վերա
ջէն Աւետաց Երիբ կոչուեցաւ:

Դապատարաց Համաշարաւնին: — Յեսուայ մաս-
հուանէ Եաք՝ Խորայէլացիք, որ յատուկ առաջ-
նորդ մը չունեցան, այլ իւրաքանչիւր ցեղ՝ իր
ծերոց միջցան կ'կառավարուէր, Քանանացւոց
հետ խառնուեցան, Աստուծոյ բոլոր երախափ-
քը մոռցան և կրապաշտութեան մէջ ընկան:
Այն ասեն Աստուած մօտակայ ազգաց ձեռքը
մատնեց զայնս և թողոց որ հետղչետէ Մովա-
բացւոց, Մադիանացւոց և մանաւանդ Փղշտա-
ցւոց լուծին ներքե ընկնին: Սակայն երբ Խո-
րայէլացիք զըլչային և իրենց ապերախտութեան
վրայ ցաւէին, Աստուած կ'արդաշատէր և նո-
ցա հաւատարիմ ու արիասիրտ առաջնորդներ
կ'ուղարկէր որ գերութենէ աղատէ: Այս մար-
դիկ ԴԱՏԱԿՈՐ կ'անուանէին, վասն զի Խորայէ-
լի ժողովուրդը կ'դատէին ու կ'կառավարէին
թշնամեաց ձեռքէն աղատելով (1580):

Առաջին գասաւորն եղաւ Գորդոնէլ, որ Ա-
սուրոց յաղթեց. իրեն յաջորդեց Ասոնչ, Սահ-
մար: Բայց գատաւորաց մէջ ամենէն երևելի-
ներն են հետեւալները:

ԳԵՐԵՐՄ: — Այս իմաստուն և հաստատալիտ
կին մ'էր, որ մարդարէական ողի ունէր: Իր
աթոռն արմաւենիի մը ներքե զնելով ժողո-
վուրդը կ'դատէր արդարութեամբ և ասոր հա-
մար Խորայէլացւոց Մայր կոչուեցաւ: Քանանու-
թագաւորը Յաբին Խորայէլացւոց գէմ պատե-
րազմ բանալով իր Սէսար զօրասկետը շատ

փօրքով նոյս գէմ ուղարկեց: Գերորա ասմն
հաղար մարդ ժողվեց և Բարակ Հրամանատա-
րին հետ թշնամեաց վրայ յարձակեցաւ վասնեց
և Սիսարան խոյս տալու ատեն՝ սպաննուեցաւ:
Այսպէս կին մ'իր Հայրենիքն աղատեց և ցոյց
տուաւ որ Աստուած երբեմն տկար արարածները
կ'ընտրէ զօրաւորները յաղթահարելու համար:

ԳԵՐԵՐՄ: — Խորայէլացիք Մադիանացւոց իշ-
խանութեան ներքե ընկած լինելով՝ Աստուած
աղատարար մ'ուղարկեց նոյս: Այս աղատա-
րարն էր ԳԵՐԵՐՄ, պարզասէր և աղատամիտ
մարդ մը, որ իր ցորենը ծեծելու ատեն երկ-
նառաք հրեշտակ մ'եկաւ իրեն և հրամանեց որ
ելնէ Խորայէլի ժողովուրդը զերութենէ աղա-
տէ: ԳԵՐԵՐՄ ի սկզբան վարանեցաւ, բայց երբ
աստուածային նշանները նշմարեց նախ զնաց
Բատուր՝ զօր Մադիանացիք կ'պաշտէին՝
տասն քաջասիրտ մարդոց աջակցութեամբ կոր-
ծանեց և ապա փողեր հնչել տալով երեսուն
երկու Խորայէլացիք քաջեր ժողվեց իր բոլորափ-
քը: Բայց վատասիրաները ճամբեց և մինակ
տասն հաղար հոդի պահեց: Սոքա ևս իրեն
շատ երևելով երեք հարիւր մարդ միայն զա-
տեց որ իրենց ափով չուր խմելու կարող էին:
ԳԵՐԵՐՄ այս երեք հարիւր քաջաց սուր, փող
և կաւեղէն սափորներ տուաւ, որոց մէջ ջա-
հեր կային: Երբ գիշերը հասաւ, ԳԵՐԵՐՄ իր
փոքրիկ գունդն առաւ ու անձայն աւաշնորդեց
թշնամեաց բանակին մօա որ խորունկ կ'նացէին:
յետոյ յանկարծ հրամայեց իր վինուորաց որ
փողերն հարկանեն և սափորներն իրարու զար-

Նելով խորտակէն : Զինուորներն այս հրամանը կատարեցին աղաղակելով . — Սուր Տեառն և Գեղէնի :

Մարդանացիք ահաբեկ արթնցան և կարծելով թէ անհամար թշնամեաց ձեռքը մատնուած են՝ սկսան զիրար ջարդել , իսկ առաւօտուն փաստականներն Խորայէլացոց պրով կոստրեցան :

Այսուհեակ Գեղէն ժողովրդեան խնդրանօք դատաւորութեան պաշտօն վարեց և զայն խաղաղութեամբ կառավարեց :

Յէֆէն . — Երբ Գեղէն մեռաւ՝ Խորայէլացիք նորէն կոոց երկրպագութեան դարձան և Աստուած զայնս պատճեց Փղշտացոց և Ամենացւոց իշխանութեան ներքեւ ձգելով : Այն ատենները Յէֆէն երեելի եղեր էր իր քաջարութեան համար : Հայրական տունէն վարչուած լինելով եղբարցը կողմէն՝ քանի մ'ընկեր առեր քաշուեր էր վայրենի տեղ մը և ատեն ատեն Փղշտացոց դէմ կ'յարձակէր ու ասպատակութեամբ կ'ապրէր : Խորայէլացոց կողմէ քանի մը պատգամաւորներ եկան Յեփթէի և աղաչեցին որ դատաւոր լինի և զիրենք Մաղիանացւոց լուծէն աղատէ : Յեփթէ յանձն առան և՝ իր յոյու բոլորովին Աստոծոյ վրայ գնելով քիչ մը զօրբով թշնամեաց վրայ քալեց : Դեռ Ճակատամարտը չսկսած՝ Յեփթէ ինդրեց Աստուած որ իրեն յաղթութիւնը շնորհէ և խոստացաւ՝ ի գարձին ողջակէդ մասուցանել այն որ ամենէն առաջ իր առնէն պիտի ենէր զինքը գիմաւորելու համար : Իր անխոհեմ ուխտը կատարեցաւ . Յեփթէ յաղթեց . և երբ

առօք իմառօք տուն կ'զառնար՝ իր միակ աղջիկը տեսաւ որ իր լոնիերուհեաց զլուին անցած՝ Խորայէլի յաջողութիւնը կ'հաշակէր՝ ի ձայն թըմիկաց , և անհնարին վիշտ զդաց : Խեղճ հայրն իր աղջկան յայտնեց ըրած ուխտը : Աղջիկն անվրտով իմացաւ զայն . վերստին երկեց հօրը յաղթութիւնն և խնդրեց որ երկու ամիս երթայ լեռն որպէս զի իր բաղկին վրայ լայ ընկերուհեացը հետ : Երեք ամնէն ետք իր հօրը դարձաւ և առաջարկեց որ ուխտը կատարէ : Այս գէպքին վրայ Խորայէլի աղջկունք սովորէին ամէն տարի մի անդամ գումարուիլ և չորս օր Յեփթէի գուստորն ողբալ :

Սամփառն . — Խորայէլացոց թշնամեաց մէջ շատ զօրաւոր և ահարկու էին Փղշտացիք , որ Յորդանան զետին և ծովուն մէջ տեղուանքը կ'բնակէին , Ծմաւոնի ցեղին բռնած երկիրը : Այս աղջին զլիսաւոր քաղաքն էր Գալապատէ : Աստուած Խորայէլի ժողովրդեան անսաստութիւնն ու կոապաշտական զործերը պատժելու համար քաւասուն տարի Փղշտացոց ձեռքը թողուց և երբ զեղջի եկան Գանայ ցեղին մարդ մ'առաքեց որ զիրենք աղատէ : Այս մարդն էր Սամփառն , չափէ զուրս ուժեղ ու կորովի , որ Փղշտացոց սարսափ աղջեց և հիմասլի քաջութիւններ ըրաւ :

Սամփառն կարգուիլ ուղելով Փղշտացոց երկիրը զնաց որ իր նշանածը անմատէ : Ճամբան կորիւնի մը հանդիպելով որ իր վրայ կ'յարձակէր կատարաբար , զայն բռնեց և պատառեց : Սակայն ամուսնութիւնէ ետքը՝ իր կողակցէն

զատուեցաւ, վասն զի սա իր մէկ զաղսնիքն երևան հաներ էր: Բայց կի՞նը՝ իր ծնողաց խոր հրդով՝ ուրիշի մը հետ միանալուն՝ Սամիսոն միաքը դրաւ վրէժ լուծել բոլոր Փղշտացւոցմէ: Ուստի Յուդայի երկիրը քաշուելով՝ երեք հարիւր աղուէս բռնեց, սոցա աղիներն իրարու կապեց և մէջ աեւ ջահեր գնելով՝ Փղշտացւոց զաշտերը քշեց, այնպէս որ նոյն ասարաւան հունձքն այրեց մոխիր դարձոց:

Փղշտացիք իմանալով որ Սամիսոն Յուդայի երկիրը կ'զանուի երեք հաղար հոդի կ'զրկեն որ զանի բռնեն: Յուդայի ցեղը պատերազմէ երկնչելով՝ խօսք տուին Սամիսոնը յանձնելու, և խումբ մը մարդիկի նորա գտնուած քարայրն երթալով՝ հաստ չուաններով զանի կապեցին: Բայց Սամիսոն կապերը քակեց և իշու ծնուած զետնէն առնլով՝ հարիւր Փղշտացի սպաննեց և միւնները հալածեց:

Օր մ'ալ Փղշտացիք Սամիսոնը կ'պաշարեն Գաղա քաղքին մէջ և դռներն ամուր կ'զոցեն: Սակայն այս կորովի մարդը զիշերայն դուրս եւնել ուղելով՝ դրան երկու փեղկերը քակեց և կանակն առած՝ քաղքին մօակայ մէկ լեռը տարաւ ձգեց: Այն ասեն Փղշտացիք յուսահամ՝ Սամիսոնի զօրութեան զաղսնիքն ուղեցին հասկընալ որպէս զի հնարքով մը զանի սպաննեն: Դաւլիս անուն կին մը կար որու առնը կ'յաշախիւր Սամիսոն: Փղշտացիք այս կնկան մնձ դումար մը տալու խոստացան եթէ յաջողէր Սամիսոնի զօրութեան պատճառն իմանալ և իւրենց յացանել: Դաւլիս այնքան աղասեց որ վերջապէս Սամիսոն ըստաւ, — «Ես նաղովը եցի

եմ, այսինքն՝ ի ծնէ Աստուծոյ նուիրուած: ու զելից ըմբելի չեմ խմբ և անսուրբ կերակուր չեմ ուտեր: Իմ բոլոր սյսա զիսակիս վրայ է: եթէ զլուխս ածիւեն իսկցն կ'տիարանամ»: Նենդամիտ Դաւլիս այս զաղսնիքը Փղշտացւոց հաղորդեց, Սամիսոնը քնացուց և նորա մաղերը կարել տուաւ: Փղշտացիք հասան, զանի կապեցին, աշերը հանեցին և երկանի քար գարձնելու դատապարաեցին: Սամիսոն այս տան ջանքն անարտունջ կրելով վրէմինդրութեան ժամանակը: Իր մաղերը սկսեր էին մեծնալ և ոյը վրան զալ: Օր մը Փղշտացիք հանդէս կ'կատարէին տաճարի մը մէջ, և կամելով Սամիսոնը ծաղր առնել ու ինդալ՝ զանի բերին և տաճարին երկու սիներուն կապեցին: Այն ասեն Սամիսոն՝ Աստուծոյ օգնութիւնը հայցելով սիներն այնպէս ուժդինն ցնցեց որ բոլոր չէնքը փլաւ և նորա փլատակաց ներքեն հետ երեք հաղար Փղշտացիք մեռան: Սամիսոնի աղլակիցներն իր մարմնը վերցընելով տարին հօրը զերեց վմանը թաղեցին:

Սամուել. — Այս դատաւորն որ վերջինն եղաւ, մեծ իմաստութեամբ կաւալիսրեց Խարայէլի ժողովուրդը: և որովհետեւ ծերացեր էր, իշխանութիւնն իր երկու որդւոց յանձնեց, որ իւրենց հօրն առաքինութիւնը չունեին: Խարայէլացիք սոցա անկարգութիւններէն զգուհիւնով՝ ուրիշները կառավարութիւն մը խնդրեցին: Տաղուկացիք էին արդէն աստուածական իշխանութիւններ: և թագաւորներ կ'ուզէին ունենալ որպէս զի գրացի աղաս նմանին: Սամուել Իս-

բայելացւոց խնդիրը կատարելէն առաջ Աստուծմէ խորհուրդ հարցուց . Աստուած ըստ նմա . — «Քեզ չեն մերմեր, այլ զիս . չեն կամիր որ ես լինիմ իրենց թաղաւորը . Եղիպատուէն եւնելէն ՚ի վեր այսպէս կ'վարուին ինձի դէմ . օտար աստուածոց համար զես մոռցան . բայց նոյա խնդիրը կատարէ , կանխաւ իմացընեւ լով թէ թաղաւոր մը ինչ մեծ արտօնութիւնն ներ պիտի ունենայ » : Ուստի Սամուէլ ըստ Իսրայելացւոց . — «Ձեր վրայ կառավարող թաղաւորը ձեր որդիքը պիտի առնու որ իր կառքերը քաշն , իր գաշտերը մշակեն և հունձը հաւաքեն : Ձեր ցորենին , այդիներուն և արջառներուն տասանորդը նա պիտի սղահանջէ : Այն ատեն ձեր թաղաւորին դէմ աղաղակ պիտի բառնաք , բայց Աստուած չպիտի լսէ ձեր ձայնը » : Բայց ժողովուրդն անհամոցելի մնաց և այն ատեն Սամուէլ նոյա խնդիրը կատարեց :

ԳԼՈՒԽ Դ.

Թագավորութեան գուշ բաժնութեան :

(1080—962)

Սատաւալ . — Այն ատենը Բենիամինի ցեղէն մարդ մ'իր էշերը կորուսած լինելով՝ Սատաւալ որդին ուղարկեց որ զայնս փնտուէ : Սաւուղ ընդունայն որոնելէն ետեւ՝ Սամուէլին դնաց որ խորհուրդ հարցընէ : Սամուէլ ծանոյց Սաւու-

շին որ հօրն էշերը գտնուած են , և զանի բուլոր Խորայէլի վրայ թագաւոր օծեց Աստուծոյ Հրամանին համեմատ , պատուիրելով նմա որ իմաստութեամբ կառավարէ և ժողովուրդը թշնամայ ձեռքէն աղատէ : Սամուէլի այս ընտրութիւնն Խորայէլացիք ալ հաստատեցին , և առապէս՝ դատաւորութիւնն երեք հարիւր տարիի չափ տեսելէն ետեւ՝ Սաւուղ թաղաւորական աթոռն ելաւ :

Սատաւալին յաղթութիւնները . իր անհնաշնեռներնեւ . — Գրեթէ ամիս մ'ետք՝ Ամնասցիք Յանձնու քաղաքը պաշարեցին : Սաւուղ իր կովելով զաշտերէն դառնալու ատեն իմացաւ Յարիսի ընակչաց վիճակին և իսկցյն զօրք ժողովելով թշնամաց վրայ յարձակեցաւ և կոտորեց : Այս յաղթութիւնն ետք՝ քանի մը մարդիկ եկան Սաւուղին ըսին որ իր ընարութեան դէմ գնողները սպաննել տայ : Բայց նա պատասխանեց . — «Այս օր ոչ ոք ՚ի մահ պիտի դատապարտուի , վասն զի այսօր Աստուած Խորայէլի ժողովուրդն աղատեց » : Այսուհետեւ Սամուէլ բալոր ժողովուրդն ՚ի Գաղպալա զումարեց և Սաւուղի ընտրութիւնը վերստին հաստատել տալով՝ Աստուծոյ զոհէր մատոյց :

Այս պատերազմէն ետք՝ Փղշտացիք ելան Խորայելացւոց դէմ : Սաւուղ իր բանակը կազմցր Սամուէլ պատուիրեր էր նմա որ իր բայցակայութեան ատեն կոփուը չսկսի և զոհ ընաստոցանէ մինչև իր դալուսարը : Բայց Սաւուղ տեսնելով որ Սամուէլ կ'յապաղի և թշնամիք օր ըստ օրէ զօրանալով իր զօրաց երկիւղ կ'ազ-

գեն, ինքն անձամբ ողջակեզը մատոյց սպայմառ նեալ ժամանակէն առաջ: Սամուել քիչ ատենէն հասաւ, նորա անհնաղանդութիւնը յանդիւ մանեց և իմացուց որ Աստուած թադաւորութիւնն իր ընտանիքէն պիտի հանէ: Բայց Սաւուղ Փղշտացոց գէմ քալեց, և իր որդին Յովլաթան նոյց բանակը մանելով արիարար պահանջները սպաննեց և զամենքը ցրուեց: Սաւուղ իր որդույն սկսած յաղթութիւնն աւարտեց: Եւ որպէս զի իր զօրաց եռանդը չմարի, Սաւուղ հրամայեց նոյց բան մը չուտել մինչև երեկոյ: Զինտուրներն այս հրամանը պահեցին և աւարտութենէ զգուշացան. միայն Յովլաթան որ իր հօրը պատուէրին անտեղեակէր, անտառէ մ'անցնելու ատեն՝ զտւաղանին ծայրը փեթակի մը մէջ թաթիւնց և իր բերանը տարաւ: Սաւուղ այս իմանալով յանցաւորն ուղեց մահուամբ պատմել. բայց զօրքը՝ նորա արիական զործոց վրայ պանչայած՝ չժողուց որ հայրն այս անդութ վճիռը կատարէ:

Այսուհեաև Աստուած Սաւուղին հրամայեց Սամուելի բերնով՝ որ Ամաղեկայւոց ազգը չնջէ, որ Խորայէլացոց գէմ գրեր էին Աւետեաց երկիրը մանելու ատեն, և իրենց ամրացաւութեամբ Աստուածոյ բարկութիւնը գրուեր էին: Սաւուղ այս հրամանը լիովին չկատարեց. թէև Ամաղեկ քաղաքն աւաւ, նորա թագաւորն Ագարը զերի բանեց բայց նորա կեանքը բաշխեց և ընտիր ընտիր խաչինքը սպահեց. Աստուածոյ մատուցանելու պատրուակաւ: Այն ատեն Սամուել Սաւուղին պարտաղանցութիւնը յանդիւնեց և վերստին յայտնեց որ Աստուած

ուրիշ թաղաւոր մը պիտի ընտրէ իր աեղը: Սաւուղ այս աղջարարութեան վրայ տրտմեցաւ և ատեն ատեն իր վրայ մոլեզնութեան նշաններ կ'երեւէին (1054):

Դաշնի ժամանակը. — Այն ատեն Սամուել բէն-իշենէմ զնայ առ Յէսուս, որ Յուդայի ցեղէն էր, որպէս զի նորա որդւոց մին թաղաւոր օծէ: Սամուել Յեսուսայ որդւոց մէջն Գուաթի հովին ընտրեց իրեւ յաջորդ Սաւուղի: Այս անբաղդ թաղաւորը՝ մելամաղնուա լինելով՝ ատեն ատեն կ'խելացնորէր: Երածշատութեամբ միայն կարելի էր այս խելացնորութիւնը սփոփել. ուստի ամենէն ձարսար տաղաչարը վինասելով Դաւիթը զտան որ արքունիքը մնաւ որպէս զի թագաւորին կատողութիւնն ամոքէ:

Գուաթի և Գուաթի կունէ. — Փղշտացիք նորին պատրաստուեցան պատերազմի: Սաւուղ իր բանակն առնով նոյց դէմ զնայ: Գողիաթանունով հսկայ մը ամեն օր Խորայելացիքը կը նախատեր և կ'պուար. — «Ի՞նչ հարկ կայ այսափ մարդիկ՝ ի զէն վարել. ով որ քաջ է թող իմ առջևս ելնէ, եթէ յաղթուիմ Փղշտացիք ձեր զերիները լինին, եթէ յաղթեմ դուք մեր լուծը կրէք»: Խորայէլացիք սարսափահար կ'լսէին այս հսկային նախատիկն և ոչ ոք կ'իշխէր նորա հետ չափուելու, թէև Սաւուղ իր գուսարը խոստացեր էր տալ կնութեան Գողիաթը նուաճողին: Դաւիթ՝ որ բանակն եկեր էր իր եղանակը պաշար բերելու, միտքը դրաւ Գողիաթին զէմն ելնելու: Ամենքը

է՛ծիծաղէլին նորա յանդգնութեան վրայ . բայց Դաւիթ՝ իր գիտաւորութեան մէջ անյողողով՝ ամէն զէնք ու զրահ մերժեց . ցուպը, հինգ ողորկ քար ու պարսատիկն առնլով հսկային գէմ քալեց : — «Միթէ ես շուն եմ, գոչեց Գողիաթ, որ զաւազանով իմ վրայ կ'զաս : Մօտեցիր, մարմինդ զիշատիչ մուշոց կեր պիտի տամ» : Դաւիթ պատասխանեց . — «Դու նիզակով, սրով և վահանով կ'քալես ինձի գէմ, բայց ես յանուն Աստուծոյ պիտի մենամարտիմ . քեզ պիտի սպաննեմ» : Այս ըսելով Դաւիթ պարսատիկն արձակեց, քարը հսկային ճակամին զարկաւ ու զանի գետինը տապալեց : Այս տեսնելով Փղշտացիք ՚ի փախուստ դարձան :

Սառառու կ'հալունէ՛ զբառէ՛ն . — Այս յաղթութեան վրայ Խորայէլի մազովուրդը մեծ ուրախութիւն զդաց : Դաւիթ հսկային զլուխը ձեռքը բռնած՝ Սաւուղին ներկայացաւ, որ՝ նորա արիութեան իբրեւ վարձ գունդ մը զօրաց հրամանատար կարգեց : Յովինաթան մշտատև բարեկամութիւն ուխտեց նմա, և իր զէնն ու զարդը տուաւ : Խորայէլի բոլոր կանայք յաղթականը գիմաւորելու գային երդելով և կ'ըսէին թէ Սաւուղ հազար Փղշտացի սպաններ էր, բայց Դաւիթ տասը հազար : Գոռողն Սաւուղ այս գովեստները լսելով կ'սրտմաէր, կ'նախանձէր : Ուստի աւիթ մը փնտուեց որ զանի կորմացընէ :

Օր մը Սաւուղ իր նիզակը նետեց Դաւիթին սպաններու մոօր, մինչդեռ սա իր տափղով զանի սփոփելու կ'զարդէր . բայց Դաւիթ երկու

անդամ այս վտանգէն խոյս տուաւ : Այն ատեն Սաւուղ զանի պատերազմի զրկեց որ մեռնի, բայց նա ողջ առողջ վերադարձաւ : Ուսորիշ անդամ մ'ալ զինուորներ ուղարկեց Դաւիթի տունն որ զանի սպաննեն, բայց կնկան հնարագիտութեամբ Դաւիթ փախաւ : Յովինաթան ջանաց իր հօրն ատելու թիւնը փարատել և չյաջողելով զալտնի իմացուց Դաւիթին, որ ապահովութեան համար սկսաւ այլ և այլ տեղ ապաէն փնտուել և ՚ի վերջէ անտառներն ու լեռները թափառիլ :

Դաւիթ վեհանին վարժուածէ . — Սաւուղ իմանալով որ Դաւիթ Անդադիի անսպասը կ'զրանուի, երեք հազար մարդ առաւ և նորա գէմ զնայ : Դիպուածով քարայր մը մտաւ ուր Դաւիթ կ'զանուէր իր զինուորներովը բայց զայնտ չտեսաւ, վասն զի քարայրին խորը թազչեր էին : Դաւիթ կամացուկ մը մօտեցաւ Սաւուղին և նորա արգունական վերարկուէն կտոր մը կտրեց . ապա նորա ետեն զնալով քարայրէն գուրս և խոնարհելով վերարկուին կառը ցցուց, հասկըցնելու համար որ եթէ կամք ընէր կարող էր զանի սպաննելու : Սաւուղ այս վեհանանութեան վրայ զարմանալով լսաւ ու ըսաւ . — «Դուքան զիս արդար ես . վասն զի դու միշտ բարիք ըրեր ինձ, մինչդեռ ես միայն չարիք հասուցի քեզի : Գիտեմ որ օրին մէկն Խորայէլի թալաւորութիւնը պիտի ստանաս . երդում ըրէ որ իմ տոհմն չպիտի ստանաս . երդում ըրէ որ իր տոհմն չպիտի ստանաս : Դաւիթ այս երդումն առաւ, և Սաւուղ հեռացաւ զնայ, բայց իր ատելու թիւնը զեռ չեր զարդած :

Քիչ մը ետքը՝ Սաւող նոր փորձ մը փորձ էց իր վր' յը Դաւթէն առնլու համար : Գունդ մը զինուորներ առնլով զնաց Սէփ անսպասն որ զանի պաշարէ : Գիշերներն իր վրանին ներքեակ' անյընէր . Աբբանէր՝ իր զօրապետը քովը կը քնանար : Երիկուն մը՝ Դաւիթ Սաւողին վրանը մոտաւ , ամենքը խոր քոն էին : Կարող էր նա զանի սովաննել , բայց լաւ ևս համարեց միշտ վտանգի մէջ ապրիլ քան թէ անպաշտապան թշնամի մը սապաննել : Սիայն թաղաւորին նիզակին ու բաժակին առնլով մօտաւոր բըրի մը վրայ ելաւ և Նըենները կոչելով բարձրածայն ցցուց նաև թագաւորին նիզակին ու բաժակին և յանդիմանեց զինքն որ իր տիրոջ կենացը վըրայ չհսկեր : Սաւող զարմացաւ Դաւթի վեհանձնութեան վրայ , խոստովանեցաւ իր անիրաւութիւնը , բայց նորա հետ առ երեսս միայն հաշտուեցաւ :

Սաւուալի հանը . — Դաւիթ քանի մը տարի ևս աստամուգական կեանք վարեց՝ Սաւուղի ասելութենէ խոյս տալու համար , բայց օր մ' անապատը զտնուած միջոցին՝ գունատ գէմքով և պատառուն հագուստով մարդ մը դաշով ըստ . — «Քլշտացեր մեծ յաղթութիւն մը տարին նորայելացւոց վրայ , թաղաւորին երեք որդին ընկան մեռան . նոյն ինք Սաւող՝ որ կարեվէր վերաւորուած էր՝ թշնամեց ձեռքը գերի չմնալու համար՝ հրամայեց ինձ որ վինքը սպաննեմ : Այս հրամանը կատարեցի , և զլսէն թագն ութեւն ապարանջանը հանելով աչա ձեզի կը բերեմ , աէր իմ . . . » :

Դաւիթ այս գումարկանը լոելուն զայրանալով հրամայեց սպաննել այն Ամաղեկացի բանքերը . մժապէս վշտացաւ Սաւուղի և իր Յովիաթան բարեկամին մահուան վրայ , և անփեց Գէրբուէ լեռն որու մօտ այս գժբաղդ իշխաններն ընկեր էին (1040) :

Դաւիթ նոյնառք . — Դաւիթ իր աթոռը Քէլբան հաստատեց . իսկ իր թագաւորութեան առաջին տարիները քաղաքային պատերազմով անցան : Ի վերջէ բոլոր Խորացէլի ցեղերը զինքը թագաւոր ճանչցան : Այն ատեն իր Հայրենի թշնամեց յաղթեց , Երուսաղէմ քաղաքը նուածեց և իր աէրութեան մայրաքաղաքն ըրաւ : Տապանակն՝ որ Գաբրա քաղաքը կ' զանուէր , նոր մայրաքաղաքը փոխադրել տուաւ մեծ հանգէսով՝ որպէս զի թշնամեց յարձակումներէն ատպահով մնայ : Այնուհետև Դաւիթ Աստուծոյ տաճար մը կանգնելու նորհուրդը նաթան մարզարէին յայնեց : Նաթան գուշակեց որ այս գործն նորա որդին՝ ի կատար պիտի հանէ : Եւրեկէլի պատերազմներ մղեց Դաւիթ և իր տէրութիւնն ընդարձակեց : Բայց իր փառքը նսեմացուց այլ և այլ անիրաւ զործերով և Աստուծոյ աչքէն ընկաւ : Իր որդին Արխոնոցմ իրմէ զլուխ քաշեց և հայրը ստիպեց Երուսաղմէն գուրս ենելու : Դաւիթ վերսախն սկսաւ իր թափառական կեանքը , ամէն աղիտից համբերեց և վերջապէս Յաղթեց : Աբիսողոմ ձիով զօրաց յաղթեց : Աբիսողոմ ձիով խոյս տալու ատեն՝ մազերը ծաւի մը պատառցան և ինք կախուած մնայ : Յովաբ վրայ համելով

զանի իր նիզակովը սպաննեց : Աբիսողոմի մահը սաստիկ վեցու պատճառեց հօրը , որ Երուսալէմ մտաւ և խաղաղութիւնը վերահաստատեց :

Դաւթի թագաւորութեան վերջին ատեններն ուրիշ ապստամբութիւններ և աղէտք պատահեցան . Սէկա անուն խոռվարար և բաղդախընդիր մարդ մը ժողովուրդն ոտք հանել ուղեց . նոյնպէս իր Ագոնիա որդին թագաւորական աթուը յափշտակելու փորձեց . և սովոր սովորած ըրաւ : Դաւթի իրեն յաջորդ ժողով Սողոմն կրտսեր որդին :

Սողոմն . — Տան ութ տարեկան էր նա երբ զահն ելաւ : Իր հօրը նշանաւոր և քաջ զօրասիսն Յովաբն ու իր Ագոնիա եղայրը՝ որ ապստամբելու խորհուրդ ունեին , սպաննել տուաւ . ապա Գաբրաւոն զնալով , ուր Աստուծոյ խորանը կ'գտնուէր նմա ողջակէղ մատոյց , և փառաւոր իշխանութիւն մը վարեց : Աստուծմէ իմաստութիւն իննդրեց , ստացաւ և ասոր նշանը ցցուց նշանաւոր դատաստան մը կտրելով երկու մարց մէջ : Երկուքն ալ նոյն սենեկակը կ'բնակէին , երկուքն ալ մէյմէկ ծիծկեր երեխաններ ունեին : Միոյն որդին կ'մնանի զիշերայն և միւսինն առնլով դիմակը նորա տեղ կը դնէ : Երբ մայրը կ'արթնայ կ'դիտէ որ մնուած մանկին իրը չէ և փոփոխութիւն մ'եղած է : Վ'բոլգքէ առ թագաւորն , մինչդեռ միւսը կը պնդէ թէ կենդանի մանկին իրն է : Սողոմն հրաման կ'ընէ որ մանկին երկու կտոր ընեն , և երկու մարց մէջ բամնեն : Այս ատեն հշմարիա մայրը կ'դոչէ . — «Տէ՛ր արքայ , տուեք

մանկին ամբողջ այս չար կնկան , աւելի լաւ կ'համարիմ ժողովը զանի քան թէ մահը տեսնել » :

Սողոմն մեծ փառաց և զօրութեան հասաւ . իր տերութիւնը մինչև կարսիր ծովը կ'տարածուէր , իր նաւերը մինչև Օքէր կ'երթային և ամէն տարի անբաւ ոսկի , արամանդ և խոնկ ու զմուռ իրեն կ'բերէին : Իր դրայի թաղաւորներն իրմէ կ'ակնածէին ու կ'երկնչէին , և հապատակները մեծ բարօրութիւն ու խաղաղութիւն կ'վայելէին : Այս անդորր վիճակէն օդուտ քաղելով Սողոմն իր հօրն երկնած խորհուրդն ՚ի կատար հանելու ձեռնարկեց : Երուսաղէմի մէջ շքեղ տաճար մը կանգնեց և զայն Աստուծոյ նուիրեց :

Սողոմնի դաճարը . — Այս տաճարն այլ եայլ մասերէ կ'բաղկանար . առաջին մասը հանայից հասելու էր , երկրորդը՝ «բէնլայը» , ուր ահազին ոսկի աշխանակակիր մը կ'տեսնուէր , նոյնպէս ոսկի սեղման մ'որու վրայ կ'գնէին առաջանաբնեան հացը . և վերջապէս ոսկեձոյլ խորան մը , որու վրայ ամէն օր անուշահոտ խունկեր կ'վառէին : Բայց ամենէն փառաւոր մասն էր առբէ բէնլայ , ուր տարին անդամ մը միայն քահանայակետը կ'մննէր : Այս սրբավայրն որու պատերն ոսկի թիթեղով պատած էին Տապանակ ուխանի կ'պարունակէր և օրինաց տախտակները :

Սողոմն պալատ մ'ալ կառուցանել տուաւ Սէկա լերան վրայ , և իր հարստութեանց մէկ մասն Երուսաղէմը զարդարել տալու համար

դործածեց : Իր արքունեաց շքեղութիւնն և մասնաւանդ իր իմաստութիւնն օսար ազգաց մէջ մեծ հւչակ հանեց : Տէրուի թաղաւորը՝ Հերուն՝ նմա թանկազին ընծաներ առաքեց տաճարին և պալատին համար : Սաբա թաղաւորին՝ Եթովսիոյ խորերէն եկաւ նորա այցելութեան և անքաւ ոսկի ու գոհարեղէն պարզեց :

Բայց Սողոմնի այս մեծութիւնն ու յաջողութիւնը զինքը մոլորեցուցին . Աստուծոյ պատուէրները զանց ըրաւ , շուայտութեան մէջ ընկաւ և իր օտար կանանց հաճելի լինելու համար կուոց տաճարներ կանդնեց : Աչա այն ատեն Աստուած նորա մեղաց իբրև պատիժ իմացուց որ Խորայէլի թաղաւորութիւնը , իր մահհուանէ ետք՝ պիտի բաժնուի :

ԳԼՈՒԽ Ե.

Խորայէլի բաժնուածն գնչ էեր միւս լուսաւուն :

(962—536)

Հերուտան ցեղէց . — Ուսէնամ իր հօրը Առզոմնի յաջորդեց , որ ժողովրդեան վրայ ծանր ծանր հարկեր դրած լինելուն՝ տէրութեան ծերերը նոր թաղաւորին ներկայացան և ինտրեցին որ այն հարկերը թեթեցընէ : Ռորովամ անարդանօք մերժեց նոյսա խնդիրը , անխոհեմ խորհրդակիցներու անսալով : Այս ասեն Խորայէլի տասն ցեղերն ապստամբեցան և Յերու

բայլամը թաղաւոր կարգելով՝ Պաղեստինի մէջ զատ աէրութիւն մը կազմեցին , որ կոչուեցաւ Շահաւորութիւն : Խորայէլի կամ Եփրէմ , մայրաքաղաքը ընտրելով Սամարէան : Միայն Յուգայի ու Բենիամինի ցեղերը հաւատարիմ մնացին Դաւթի որդւոյն , որու աէրութիւնը կոչուեցաւ Յուդայէ Շահաւորութիւն : մայրաքաղաք ունեալով Երուսաղեմը :

Թագաւոր Խորայէլի . Յերուալմ . — Այս թագաւորը զան ելնելով Յակոբայ որդւոց մէջ եղած կրօնական և աղջային միութեան կապն ուղեց բոլորովին քակել : Ուստի իր տէրութեան երկու ծայրերը՝ ի Դան և ի Բէնել երկու ոսկի որթ ու մեհեաներ կանդնեց , քուրմեր կարգեց , տօներ , հանդէներ հաստաց , պատուիրելով ժողովրդեան որ բնաւ Երուսաղէմ չերթան Աստուծոյ զօհ մաստոցանելու և երկիրպագելու համար . — ԱՎՀԱ ասոնք են , ըստու , այն աստուածներն որ ձեզ Եղիպտոսէն հանեցին : Յերոբովամ ամրացուց Սէմէ քաղաքը , որ մինչև Սամարիոյ շնութիւնը , Խորայէլի մայրաքաղաքն եղաւ :

Խորայէլի միւս թաղաւորները , թուով տասնութ , Յերոբովամի ընթացքը բռնեցին և հեթանոսութեան մէջ յարատեցին : Այս թաղաւորութիւնն երկու հարկեր յիսուն տարուան միջոցի մէջ՝ զերթէ շարունակ նուովութեան և շփոթութեան թատր մեղաւ , ութ անդամ՝ թագաւորական ցեղ փոխեց՝ ապստամբութեամբ և արքայասպանութեամբ , և ստէպ Յուդայի թաղաւորութեան դէմ պատերազմներ միեց :

Յերոբովալի յաջորդեց Կաբառ որ երկու տառի միայն տիրեց և Բառա զինքն ու բոլոր իր ցեղը ջնջելով դաշը յափշտակեց ։ Հետպէտէ Քանի մը զօրապեսներ աթոռն ելան բռնուածեամբ և 'ի վերջէ Աքաաբ :

Առաջ . — Խորայէլի թաղաւորաց ամենէն նշանաւորն է իր ամօրէնութեանց կողմէ : Տիւրասի թաղաւորին գուստը Յեղբէլ, չարասէր կին մը, իրեն կենակից առաւ և սորա խորհըրդով կուոց մէհեաններն աւելցուց և այլ և այլ անդգամութիւններ գործեց, այնպէս որ Աստուած զինքը պատմեց, երաշտ ու սովէ դրկեւով : Այս պատմին Եղիա մարդարէն խմացուց և հալածանք կրեց : Եղիա մարդարէն յորդութեց թագաւորն որ Աստուածոյ Ճամբան դառնայ. Բահազու կուռքերն ու քուրմերը հրաշքով կործանեց և 'ի վերջէ երաշան ու սովէ անցուց : Բայց Աքաաբ՝ մարդարէն ըրած հրաշքն ու գուշակութիւններն արհամարհելով իր ամրաւըշական գործերը շարունակեց : Աքաաբ իր անիրաւութեանց չափն անցուց Կաբառնը սպանաւով :

Այս մարդը հօրենական այդի մ'ունէր զորմշակելով կ'ապրէր : Թաղաւորն իրմէ այդ այդին խնդրեց որպէս զի իր պարտէզներուն միացընէ : Կարութ մերժեց իրաւամբ և թաղաւորն այս բանիս վրայ շատ ցաւ զդալով արտում տիսուր կ'մար, երբ իր կինը նորս տրտմութեան սպատճառն իմանալով Կարութը՝ սուտ վկայից ձեռօք իբրև բանսարկու արքային դէմ, ամբաստանել և քարկոծել տուաւ :

Այս լսելով Եղիա մարդարէն եկաւ ըստ թագաւորին . — «Կարութը սպաննել տուիր որ նորա այդին գրաւես, բայց քաջ գիտցիր, այն տեղն ուր շուները Կարութի արիւնը լափեցին քու արիւնդ ալ պիտի լափին և Յեղարէլ ալ շանց կերակուր պիտի լինի» : Եւ իրօք Աքաաբ՝ Յուղագուագու թագաւորին նիզակակցութեամբ Ասորոց դէմ ըրած սպաներազմին մէջ նետահար մեռաւ և շուները նորա արիւնը լիդեցին : Կոյնը պատահէցաւ և Յեղարէլին՝ երբ Եկու՝ Աքաաբի մէկ զօրապետը՝ նորա որդին Յուղագու սպաննելին ետեւ թաղաւոր եղաւ և Յեղարէլը պատուհանէն վար նետել տալով ձիերու ոտից կոխան ըրաւ :

Յէս . — Յերբունամ Բ. — Յէու Աքաաբի բուլոր ցեղը ջնջեց : Բահազու քուրմերը կոսորեւ տուաւ՝ մեծ հանդիսի մը օպատճառանօք, և կուռքերը կործանեց՝ բաց ՚ի ոսկի որթերէն : Իր յաջորդները Յուղագու և Յուղա նշանակութեան արժանի գործ մը շըրին : Յերբունամ Բ.ի ժամանակ Խորայէլի թաղաւորութիւնը մեծ զօրութեան և բարօրութեան հասաւ : Ասորոց դէմ նշանաւոր յաղթութիւններ տանելով մինչեւ Պահանջանական մտաւ : Բայց իր յաջորդաց ժամանակ՝ ամեն բան անկարգութեան և անիշխանութեան մէջ ընկաւ : Ակերջապէս Ռվէկ օրով Ասորեստանեաց Սաղանաստը թաղաւորը Սամարիան սպաշարեց առաւաւ, Խորայէլի թաղաւորութիւնը կործանեց և Ռվէն շատ մը Խորայէլացոց հետ Ասորեստան դերի տարաւ :

Թագավորութ Յուդովամ . — Յուդայի թագավորութիւնը , թէե երկու ցեղէ կ'րազկանար , աւելի բազմամարդ էր քան Խսրայէլինն և բարեբեր : Քսան թագաւոր ունեցաւ , որոց մեծ մասն ամբարիշտ եղան և երեք հարիւր յիսուն վեց տարի տևեց , զրեթէ միշտ խռովեալ վիճակի մէջ : Ունեվամ երբ զահն ելաւ մեծ բանակ մը կազմեց որ Յերոբովամ ապստամբին գէմ քալէ , բայց Սունեամ մարդարէին խորհրդով իր դիստաորութիւնը փոխեց : Քանի մը տարի ուղղութեամբ թագաւորեց . վերջէն Աստուծոյ անհաւատարիմ զտնուելուն պատժուեցաւ : Եղիպտոսի թագաւորը Սէսահ՝ բազմաթիւ զօրք Երուսաղէմի պաշարեց ու տաճարը կողովածելով զնաց : Որովամէն ետքը տիրեցին Աբէտ որդին և Աստ թուն որ Աստուծոյ օրէնքը պահեց և կուապաշտութիւնն իր երկրին մէջ ջնջեց : Նորա որդին Յովսափատ հօրը շաւզայ վրայ քալեց և իր բարեփաշտութեամբը նշանաւոր եղաւ : Սակայն իր որդին Յովսահն՝ արինառուշտ Յեղաբէլի՝ Դոդոփիա դստեր հետ ամուսնացընելով՝ Յուդայի թագաւորութեան մեծ աղէտք պատճառեց :

Գուդուն . — Գուոող և անդութ իշխանուհի մ'էր Գուդուն՝ որ Երուսաղէմի մէջ Բահալ աստուծոյն տաճար մը կանգնեց , ինչպէս որ իր մայրը Յեղաբէլ Սամարիյ մէջ կանգներ էր , և այսպէս Յուդայի թագավորութեան մէջ հեթանոսական կրօնը հաստատեց : Երբ իր Յովսամ ամուսինն և որդին Ուուդի մեռան՝ Գոդունա՝ բացարձակ թագուհի լինելու համար՝ իր

թոռները սպաննել տուաւ մէկ զիշերուան մէջ : Միայն Յովսա՝ Աքովիայի փոքր որդին՝ Յովիտայէ քահանայապետին կնկան խնամօք այս կոսորածէն աղատեցաւ : Այս անմեղ միամեայ որբը տաճարին մէջ զաղտնի մեծցաւ և քահանայապետը վեց տարի զանի հայրաբար խնամելէն ու կրմելէն ետև՝ ժաղովբեան ձեռօք զանի իր հարց աթոռը բազմեցաւ : Գոգողիա տաճարը վաղեց՝ և երբ Յովասը տեսաւ զահան վրայ նստած , զոչեց . — Մատնութիւն , մատնութիւն : Յովիտայէ հրամայեց որ թագուհին տաճարէն գուրս հանեն և սպաննեն : Ժաղովը բահալու խորանները տապալեց , արձանները խորստակեց և այս աստուծոյն Սունեամ քրիստուկերը սպաննեց :

Յովսա . Ամառիս . — Մեծնալով Յովսա իր առաքինութիւնը չպահեց , չարասէր իորհրդոյ հետեւելով՝ իր հօրը պէս կուց պաշտօն մատոյց և ապերախտութեամբ Յովիտայէի որդին քարիգծել տուաւ : Բայց ինքն ալ իր պատիմը կրեց . վասն զի իր սպասաւորները զինքը սպաննեցին և իր մարմինը թագաւորաց գամբարանը շթաղեցին :

Ամառիս՝ իր որդին , 'ի սկզբան արդարասէր թագաւոր մ'եղաւ բայց վերջն իր ընթացքը փոխեց : Եղումացւոց վրայ մեծ յաղթութիւն մը տանելով՝ հպարատացաւ և Խորայէլի Յովսա թագաւորին գէմ պատերազմ մղեց : Յովսա յաղթեց , Ամասիան զերի բանեց և Երուսաղէմ մատնելով քաղաքն աւարի տուաւ : Այս թագաւորին օրովը կ'ապրէր Յովսա մարդարէն :

Աւան. — Ամասիայի որդին, Ռշտա, Ամոնացոց, Փղշտացոց և Արաբացոց դէմ պատերազմ ընելով իր տերութեան սահմանը մինչև Կարմիր ծովը տարածեց : Սակայն իր Աւանթուն անկարգ և ամբարիշտ կեանք մը վարեց : Տաճաբը գոցել տուաւ, Ղետացիքը հալածեց, Երուսալէմի ամէն փողոցներուն մէջ կուռքեր կանգնեց : Ասոր օրովն ու պատճաւաւն էր որ Սաղմանասար Խորայէլի տասն ցեղերը Յորդանանէն անդին կ'փոխարիէր և դերի կ'տանէր :

Եղեկն . — Աքազի այս որդին ջանաց ժողովրդեան տառապանքը թեթեցընել : Կուապաշտութեան հետքը ջնջեց, տաճարը բացաւ, և հօրը կորուսած երկիրները ձեռք ձկեց : Իր խորչքակիցն էր Եսայէ, երկելի մարդարէն : Ասորեստանցոց Սենեքերիմ թաղաւորն Եղեկն հարկ պահանջեց . Եղեկիս՝ Աստուծոյ ողնութեամբը՝ նորա անհամար զօրաց յաղթեց :

Մահամէ . — Արիւնուուշու բանաւոր մ'եղաւ, մերստին գից մեհեաններ հաստատեց, Եսայի մարդարէն սպաննել տուաւ և Ղետացիքը հալածեց : Սակայն ինքն ալ Ասորեստանցոց թաղաւորին զօրապետաց ձեռքը զերի ընկնելով՝ բարելոն դնաց և քանի մը տարի բանաց ։ Այս գերութեան ժամանակ Մանասէ զլջաց և մերստին իր զահն ենելով՝ Մովսիսի օրինաց համեմատ կաւավարեց : Բայց իր թաղաւորութեան վերջին ատենակն Ասորեստանցիք Յութեանէն զօրապետի երկիրն արշաւեցին Հոռովհենէն զօրապետին առաջնորդութեամբը : Նահոռհոգոնուրէն այս

զօրապետը Պէլուլը քաղաքը պաշարեց : Յութեանը կինը զանի սպաննեց զիշերայն վրանն երթալով և այսպէս իր հայրենիքը մեծ վտանգէ աղատեց :

Սակայն Յուդայի թաղաւորութիւնն ալ իր կործաննան կ'փիմէր . օրէ օր երկպառակութիւնը, անօրէնութիւնն և ամբարշտութիւնը կ'աւելնային :

Յուլիս . — Այս թաղաւորը ջանաց տէրութիւնը բարեկարդել, Աստուծոյ օրէնքը հաստատել . բայց այս անդորրութիւնը կարճ տեսեց : Անխոչէմութեամբ դիմագրեց Եղիպտոսի Նետառուլ թաղաւորին՝ որ Վարեստանցոց վրայ կը քալէր, և պատերազմին մէջ ընկաւ մեռաւ : Այս թաղաւորին օրովը կ'ապրէր Երեմէն մարդարէն, որ կ'ողբար Երուսաղէմի աղիտից վրայ և նորա գերութիւնը կ'գուշակէր :

Յուլիս . — Ի վերջէ Նաբուգոդոնոսոր անհամար զօրքը Հրէաստան արշաւեց : Երուսաղէմն առնելով տաճարին ոսկի անօթներն ու զարգերը յափշտակեց և ավնուատոհմ պատանիներ իբրև պատանդ իր հետը տարաւ : Այս ատենէն կ'սկսի Խորայէլի եօթանասուն ատրուան զերութիւնը : Բայց Յովլակիմ Բարելոնի թաղաւորին լուծը թոթուելու համար ապատամբելով՝ պատերազմի մէջ մեռաւ և իր տեղը նստաւ Յետնէն, որ Բարելոն ապառեցաւ իր ընտանեօք և աէրութեան մեծամեծներով : Նաբուգուսուոր Յուդայի գահուն վրայ բաղմցուց Սերէկին՝ որ իր դրացի ժողովրդոց օկ-

Նութեան վրայ վստահելով՝ Բաբելոնի թաղաւորին զէր զինեցաւ : Կարսուղոգնոսոր երրորդ անգամ Երուսաղէմի վրայ քալեց, երկար պաշարմանէ ետք զայն առաւ, և տաճարը կրակի տուաւ : Աեգեկիա խոյս տալու ատեն՝ Երիքովի մօտ ձեռք ընկաւ . նորա աչքը փորեցին և Բաբելոն զերի տարին, ինչպէս նաև իր ժողովը գեան մեծ մասը :

Իսրայելաց քերութիւնն՝ ի Բաբելոն . — Երուսաղէմի առումէն ետք (606) կ'սկսի Խորայէլացոց գերաւթիւնն՝ ի Բաբելոն, և Եօթանասուն տարի կ'տևէ : Արդէն Երեմի և Եզէզէլ մարգարէք գուշակեր էին Երուսաղէմի և տաճարին կործանումը, և ժողովրդեան զերութիւնը, որու ժամանակ այլ և այլ գէպքեր պատահած են :

Կարսուղոգնոսոր՝ ի գարձին Բաբելոն՝ Երայեցի աղնուատոհմ պատանիներ ընտրել տալով հրամայեց որ ուսման և զիստոթեանց մէջ վարդուին : Սոյց մէջ Երեւելի հանդիսացան Դանէլ, Անանիա, Անանիա և Միացէլ : Առաջինն իր իմաստութիւնը յայսնեց զանազան սրարագաներու մէջ : Ազատեց Շուշան՝ որ երկու նենդամիտ ծերոց կողմէ ամբաստանուեր էր յանիրաւի, Բահանը՝ քուրմերուն խաբէութիւնն երեան հանեց, Կարսուղոգնոսորի Երազը զուշակեց ու պատմեց, հրաշնէք կենդանի մնաց առիւծներու գուրին մէջ, և Բազմասար թագաւորին բայցատրեց Երեք քրեղէն բառերուն նշանակութիւնը (Մանէ, Թէէլ, Փարէս) որ իր մօտալուս անկումը կ'յայտնէին : «Սոյնպէս իր միւս

երեք ընկերները, որ վերջէն անուանեցան Աէդրտ, Միսատ և Աբեդնահրով, Բէլայ ոսկի արձանը պաշտելու մերժելով՝ հնոյը նետուեցան բայց անմիաս ելան :

ԳԼՈՒԽ Զ.

Պարուէց որբապետութիւնն գնում Յէսուս Քրիստոսի հաստիութը :

(536 թ. Ա. — 1 Քրիստոսի թուականին)

Գլերութիւնն վախճանը . — Երբ Աէդրտ Պարուէց և Մարտաց վրայ թաղաւորեց՝ Խորայէլացոց աղաւանիը լսելով հրաման հանեց որ իրենց հայրենիքը վերադառնան և Երուսաղէմի տաճարը վերականգնեն : Դաւթի ցեղէն Զէրաբերէլ իշխանը՝ քաւասուն երկու հազար Երբայեցոց զլուխն անցաւ և զայնս Հրէաստան առաջնորդեց : Կիրոսի յաջորդներէն Դարեն Վշտապէայ, Խորայէլացիքը պաշտպանեց և տաճարին շնութեան օգնեց :

Եղբայր և Կէւճ . — Այնուհետե Եղբայր՝ Մովսէսիան օրինաց հմուտ և իմաստուն քահանան՝ թաղաւորին հրամանաւ Երուսաղէմ բնաց՝ իրեք քննիչ՝ հետն առնլով ուրիշ բազմաթիւ Հրէաստան (Երբայեցիք) : Եղբայր ժողովրդեան մէջ հին օրէնքը վերահսատաեց, անկարութիւնները չնջեց և Սուրբ Գրոց մէջ մնած փոփոխութիւններն ուղղեց : Բայց որովհետեւ Երուս-

սաղելի պարիսպները շնուռած չլինելով՝ քազարը մօտակայ ժողովրդոց յարձակումներուն ենթակայ կ'զտնուէր, նեւի՛ Պարսից Արտաշես թաղաւորին մատուռակը, նորա հրամանաւ Երուսաղէմ գարձաւ և պարիսպները կանգնել տուաւ։ Նոյնպէս աղքատաց իրաւոնքը պաշտպանեց վաշխառու մարդոց դէմ և այլ և այլ զեղծումներ ջնջեց։

Այսպէս Խորայէլայիք Պարսից իշխանութեան ներքեւ հանդարաս ու երջանիկ կ'ապրէին։ Այս իշխանութիւնն երկու հարիւր չորս տարի տեսեց, բայց քահանայապետները կ'կառավարէին ժողովուրդը մովսիսական օրինաց համեմատ։

Այս ատեններն երևաւ վերջին մարդարէն Մաղուիս, որ Հըեայքն յորդորեց օրինապահ մալ և Փրէնին զալստեան պատրաստուիլ։ Աստուածաշնչ գիրքը տասն վեց մարդարէից մարդարէութիւնները կ'յիշատակէ։ չորսը մեծ մարդարէ կ'կոչուին. ինչպէս, Եսայէ, Երեմիա, Եսչեկէլ և Գանիէլ. տասն երկուքը փոքր մարդարէ. ինչպէս Ովսէ, Ամոն, Յովէլ, Աբրիսա, Յովնան, Ամէիս, Աստուած, Ամբակուած, Աստինիս, Անէ, Զարտարիս և Մաղուիս։

Մէջն Ալեւանուր յերասաղէմ։ — Յարդոս քահանայապետին օրով՝ Մակեդոնից թաղաւոր Սեծն Ալեքսանդր՝ Պարսից դէմ պատերազմ մկելով Տէլու քաղաքը պաշարեց և Հրէից հրաման զրից որ իրեն բանակին համար պաշտ հասպանեն։ Յարդոս, որ հաւատարիմ էր Պարսից թարառորին, մերժեց աշխարհակալին հրամանը. կատարելու և այսպէս նորա զայրոյ-

թը դրդուեց։ Ալեքսանդր Տիւրոս քաղաքն առնելին ետև՝ Երուսալէմի վրայ քալեց որ վրէ ժը լուծէ։ Այն ատեն Յարդոս Ալեքսանդրի բարկութիւնն իջեցընելու համար իր քահանայապետական սպիտակ զգեստները հազած նորա առաջն ելաւ։ Աշխարհակալը նորա պատկառելի տեսքէն ակնածելով Հրէից ներեց, և թոյլ տուառ որ իրենց կրօնական օրինաց համաձայն կառավարուին։

Հըբեանուան Ալեւանուրի յամբորաց ներէւ. — Ալեքսանդրի մահուանէ ետք՝ իր ընդարձակ տէրութիւնն իր զօրապետաց մէջ բաժնուեցաւ։ Հրէաստան Սիրիոց և Եզիդիզոսի միջներ զտնուելով երբեմն Երաբացոց Պառամեռաւենց և երբեմն Վարոց Սևլակեանց թաղաւորներուն իշխանութեան ներքեւ ընկաւ, և Հրէայք իրենց ներքին կուիններուն ու անմիաբանութեան պատճառաւ օտարաց կողմէ շատ հալածանք ու տառապանք կրեցին։

Ալեւկեան թաղաւորներէն Անդիսուս Եպիփան այս երկպատակութիւններէն օգուտ քայլելով Երաբացուրմը պաշարեց, բնակչաց մեծ ջարդ տուաւ և տաճարը թալլեց։ Այս բաւական չսեպելով Հրէայքը բանապարկից որ իրենց կրօնն ուրանան ու կրամաշտ լինին։ Ամանք առ ահի Անտիոքոսի հրամանը կասարեցին, այլք իրենց հայրենիքին խոյս առին և շատեր իրենց հաւատքին համար զահ ընկան։

Եղիսաբետ. — Առյա մէջ երեկելի հանդիսացաւ Եղիսաբետ պատկառելի ծերումնին և եօթն

եղբարք իրենց մօքը հետ, որ սոսկալի տան-
ջանօք նահատակ եղան :

Մարտիկ և իր որդին. — Այն ատեն Մա-
րտիկ անուն քահանան Երուսաղիմն ելաւ. և
իր հինգ որդուց հետ Մարտիք իր հայրենիքը
զնայ, որպէս զի իր աղղակիցներուն տան ջա-
նայ ականատես շլինի : Անտիքոս իր մէկ զօ-
րապեսն ուղարկեց՝ ի Մողիմ որ անդ ևս կար-
դայ այն հրավարտակն որով կ'հրամայէր բո-
լոր բնակչաց զոհ մատուցանել կուոյ : Մատա-
թի՝ հնազանդելու տեղ՝ դլուխ քաշեց և Ան-
տիքոսի զօրապետին պատասխանեց . — «Եթէ
քաղքիս բոլոր բնակիչներն այդ անօրէն հրա-
մանին անսան իսկ, մենք՝ իմ եղանակ և որ-
դոց հետ՝ միայն Եհովայի օրինաց պիտի հնա-
զանդինք» : Եւ առա թագաւորին զօրապետը
սպաննեց, կուռքերը կործանեց և զօրաց գոնդ
մը կազմելով անապատը քաշուեցաւ :

Մակաբայցիկ . — Այս փոքրիկ բանակին կը
հրամայէին իր հինգ որդիկը, Յովաննէն, Շահ-
ան, Յուդա, Մակաբէ, Եղիսաբէ և Յովաննէն :
Մատաթի քանի մը կոխներու մէջ Անտիքոսի
զօրաց յաղթեց, բաղիններն աւերեց և օր ըստ
օրէ աւելի յառաջ պիտի երթար եթէ մահը
վրայ չամսնէր : Իր վերջին ժամուն յորդորեց
իր որդիկը միաբան մնալ և իրենց հարց կրօ-
նին համար մեռնելու պատրաստ դանուիլ :

Ահա այս հինգ եղանակ՝ որ Մակաբայցիկ կո-
չուեցան, շարունակ արխաբար ողորեցան օտար
բանականերու դէմ և վերջապէս Պաղեստինը

նոցա լծէն աղասելով՝ նոր թագաւորութիւն մը
հաստատեցին (135) : Առաջին թագաւորն ե-
ղաւ Յովաննէն Հեթիանու : Սակայն այս թաղա-
ւորութիւնն երկայն չտեսեց : Առան զի Հեթրկա-
նոսի յաջորդներն իրարու դէմ սկսան պատե-
րազմիլ, և իրենց դատաստանը կտրելու համար
Հռոմայեցի Պոմպէոս զօրապետին զիմեցին : Պոմ-
պէոս որ Ասիոյ մէկ մասին ամբոր էր՝ Արքայու-
պատու թագաւորը Հռոմ զրկեց շղթայակապ և
նորա եղար Հեթրկանոս Բ.ին պարզապէս քա-
հանայապետի անունը թողարկ Հրէտաստանը հռո-
մէական զաւառ ու հարկատու ընելով : Այսու-
տե Հռոմի ծերակոյտը Հեթրկէն անունով օտա-
րական մը Հրէտից վրայ թագաւոր կարդեց :

Ահա այս թագաւորին օրովն էր որ Մետան,
մարդկային ազգի խոստացեալ Փրէւէն Բէնէնէն ո
այրին մէջ ծնաւ :

ՄՐԱԳԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆԻ

Քանակացոց երթեւ : — Այս երկիրը հետզհետէ այլ
և այլ անուն առաւ . ինչպէս Ա-Երեւան երթէ : Յուդայէ
երթէ և Պաղետան, որ Սիրիոս ու Փիլիստիկ հարաւային
կողմը կ'ինայ : Լեռնան է այլ բարերերը : Գլաւաւը լեռ-
ներն են՝ Լիքանն, Կարեւ, Թափր, Գեղբառ-է և Գո-
րէտի, որ կուոյ կայանն էր : Լիճերը . — Գեհեւութիւն,
Մերեւունու : Գետ . — Յուդայէ : Յետիւ ժամանակ
Աւետեաց երկիրը տառ երկու մաս բաժնուեցաւ, և ա-
մեն մէկ մաս տիրով ցեղին անունը կրեց : Ա-երշէն բո-
լորը շրու գլաւաւը նահանդ ուներ . .) ԳԱԼԻԵՆԱ :

գիւղացքը — դան, կաբառապատճեմ, Տէբէրէ, հուշութիւն; Բ ԱՎԱՐԱՐԻԸ, գ. ք. — Սահմատ, Սէլլէս; գ) Յարաւան, գ. ք. — Կերպէս; Յարուէ, Երէւան, Քէրքն, Բէրէւէն, Երուանէն, Արօն Մերան վրայ, որու մօն էր Զիբենեաց լեռը; դ) Գերէս, գ. ք. Գարդարայ, Սաբար և այլն: Իսկ Փղլացիք կ'ընակեն Գուլս, Արտալն և այլ քաղաքները:

ՄՈՒՆԴՈՒՍԱԿԱՆ ՕՐԵՆՔ. — Այս օրենքը ըոլորովին տառուածապետական էր: Խորացէլացիք միոյ Աստուծն կը հաւասարին, որ էր Եշովա, արարիւ աշխարհի, մերազնի տէր ու թագաւոր, որ Ակն լերան վրայ հանդիսապէտ ուխտ գրաւ նոցա հետ և խոսացաւ որ սուրբ ազգ մը պիտի լինին էթէ իրեն ծասացն և իր հրամանները պահչեն: Այս հրամանները կ'ընվանդակին դառն պարունակուածէ: Մովսէս ուրիշ օրէնքներ ալ հաստատեց, որոց մեծ մասը կոնսական են և ծիսական: Սոց թարգմաններն էին քահանայք, ընդ իշխանութեալի զոհարար քահանայապետին: Այս քահանայապետն Ահարոնի ցեղէն պիտի լինէր: Ղ Ասոացիք Վ կայութեան խորանից միոյ պաշտօնները կ'փարէն և ժողովորդը կրօնից մէջ կ'կըթէն: Ասմէր առառկ հոգ ու կալուածք չունէին, տասանորդով կ'ապրէնին:

Զ ա ն և տօն: — Ժողովորդն Աստուծոյ նուիրեալ էր և սոր նշանն էր թվաստութիւնը: Կա կ'պատուէր իր Աստուծը զոհէրով ու առներով: Առաւօտ և իրիկուն զոհ կ'մասուցուէր: Տարուան չըրս գլխաւոր տօն ունէին, որոց առթիւ ըոլըր ժողովորդը կ'գումարուէր: Պատուի տօնը, Եղիպատու ապաստութեան ի յիշասակ: Պետք իսութէ տօնը, օրինաց հաստատութեան ի յիշասակ և Տաղուանի տօնը, որու նպատակն էր անապատի աստ անդական կեանքը յիւել:

Կ ա ր ա ւ լ ո ր ո ւ ի ւ ն ։ — Բայորովին աստուծապետական էր: Բուն միապետը Եշովան էր որ քահանայապետին աստանած պատամաններով կ'կառավարէր ժողովուրդը: Խորապանչը ցեղը իր իշխանութեալ ունէր որ ծերերու համ տանակներու օգնութեամբ իր պաշտօնը կ'փարէր: Բայց երբ հանրական ինտիր մը լուծելու պէտք լինէր, բոլոր աղդին մէջէն և օրմանսուն ծերունի դումսուելով ժող-

շով կ'կաղմէն: Այս ժողովը վերջն Սահմերէի կոչուեցաւ: Ամէն խրացէլացի զնուուր էր՝ քանի մը բացառութեալը: Ամէն ազատ էին և օրինաց առջն նոյն իրաւունքն ունէին: Գերութիւնն և գասական խարութիւնն շկար, կամաւոր էր սորկութիւնը: Եթէ մէկը թշուառութեան սոփեալ ինքնինքն իր սորուութիւնը կ'ստանար: Խորագանչիւր ընտանիք ('ի բաց առեալ Ղ Ասոացիք) հողական կալուած մ'ունէր: Եթէ այս կալուածը կորուածէր այնմ կը տիրանար յշիւլուն ուրբարուաց, որ յիսն տարին մի անդամ կ'զար: Այս եօթներորդ և յիսներորդ տարին երկիրն անցան և անհշակ պիտի մար:

Գ ր ա ւ մ ա ն ո ւ ի ւ ն ։ — Խորացէլացոց գրականութեան տարբեր բոլորովին կրօնական են: Եշովան կ'ամիր նոյն ամէն գորուածոց մէջ որ կրօնական երեք ճիւղ բաժնութիւն: Դույն ունէր ամուսինութիւնն ու խորացէլացոց նահապետական կեանքը մինչև յշգիպսու մուտքը: բ) Ելլ, որ կ'պարունակէ խորացիք ժողովրեան կրած տառապանքը, իր չուն և Արնա լերան վրայ Եշովայի առած օրէնքը: գ) Ղետուիւն, որ Խորացէլացոց քաղաքաբան և կրօնական օրէնքը կ'պարունակէ: դ) Թիւ-է, ուր ժողովրեան ազգահամարը կը գտնուի, նոյնպէս ո զանազան օրէնք ու պատուէրները: է) Երեւուրուան օրէնք, որ նախորդ գեպէրէր կ'վերազը և մձ օրէնսդրին վերջն ճառերն ու մահը:

Մ ի ւ ս պ ա տ ո ւ կ ա ն ։ — Պատուածալուն գրոց պատմական մասունքն են Մովսիսի հնդկ զիբը (Հանդապէտիւն): ա) Գրէտ Ծանդու, որ կ'պատմէ մարգկացին ազգի նախնի պատմութիւնն և Խորացէլացոց նահապետական կեանքը մինչև յշգիպսու մուտքը: բ) Ելլ, որ կ'պարունակէ խորացիք ժողովրեան կրած տառապանքը, իր չուն և Արնա լերան վրայ Եշովայի առած օրէնքը: գ) Ղետուիւն, որ Խորացէլացոց քաղաքաբան և կրօնական օրէնքը կ'պարունակէ: դ) Հոյնուց, որ Հոյնուց գեղազական ժամանակները կը պատմէ: Հոյնուց ունէր գեղազակ գեղազակը կ'պարունակէ: է) Երեւուրուան օրէնք, որ նախորդ գեպէրէր կ'վերազը և մձ օրէնսդրին վերջն ճառերն ու մահը:

Ք ե ր ի ւ լ ո ւ պ ա տ ։ — Այս ճիւղին վերաբերող գիւխաւոր գործերն են՝ Ցայք իւրէց, որ տարաբաղդ մարզու մ'ողըն և Աստուծոյն ասիստանութեան վրայ իր վասահութիւնը կ'կարազը: Սույնուաց իւրէց, որ Գամթիւ և ուրիշ հերկարազը 150ի չափ քանարերգական քերթուածոց հաւաքածոց մ'է զոր տաճարին մէջ կ'երգէին Երանան փառաբանելու համար: Ասլաննի առաջի, որ հրահան կ'ընկանակ էր սորուութիւնի գալուական քերունի դումսուելով ժողուած մ'է, որու մէջ մարդ մ'աշխարհային իրաց ունայ-

Նութիւնը կ'նկարաղբէ . Երէ Երէնց , որ հովուական սիրոյ պատմութիւն մ'է :

Մարդու ամառ . — Այս տեսակ գրուածոց մէջ առաջին կարդը կ'ըռնեն Եսայի մարգարէին գործերը : Կ'Դատապարտէ նա իր ժողովրդեան մոլորութիւնները , լուսաւոր ապագայ մը , ոսկեգար մը կ'աւետէ , երբ ներկային աւերակներուն վրայ նոր սերուանդ մը , Դաւթի բարեսաստիկ ժամանակը պիտի ծնի այս թագաւորին մէկ որդւյն օրովզ . այս ատեն սիրտերը դէպ ՚ի Եհովան պիտի դառնան և մէշեանները պիտի կործանին : Երէկո մարգարէի վշտալ ողբերն Երուաղէմին և տաճարին կործաննան վրայ գեղեցիկ եղերերգութիւններ են . Եզիկէ՛ նախորդին աշակերուԸ՝ իր վարժապետին մարգարէութիւնները կ'մէկն մժին ոճով մը , և Խորայէլի ժողովրդեան տառապանքն ու տարագութիւնը կ'պատմէ , որոց ննին ևս մասնակից եղաւ , միանգամայն փրկութիւն և ազատութիւն գուշակելով : Ոչ նուազ նշանառոր ու վսեմ են դանէլէ մարգարէական զրուածները . նոյնպէս և Անդէի ու Զաւարէյի : որ Զօրաբարէլի հետ Հըմէստան զարձան և ժողովուրդն ոգեսորեցին տաճարը կանգնելով և հայրենիքն ազատելով :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸՍՐԵՍՑԱՆՑԻԱԾ

ԳԼՈՒԽ Ե.

Առաջին բաժանում բնակ Արդարաբուլ:

(2640—759 թ. Ա.)

Բաբէլոն . — Ինչպէս ամէն հին ազգաց՝ նոյնպէս Ասորեստանի տէրութեան սկիզբները մոլթին և առասպելախառն : Կ'պատմուի թէ երեւելի որսորդ մը կար նեբրովն կամ Բէլ անուն , Քուշա որդին , որ ուժեղ և յանդուկն մարդոց զլուխն անցնելով՝ վայրի կինդասնիներ կ'որսար ու կ'սպաննէր : Եր քաջութեամբն ու Ճարպիկութեամբն մեծ զօրութիւն և համբաւ ստանալով Միջաղետաց կամ Մենաարայ դաշտին մէջ՝ իր ընկերները զինք իշխան կամ թագաւոր անուանեցին : Այս ատեն Բէլ թափառական կեանքը թողոց և Եփրատ գետին եղեքը քաղաք մը հիմնեց հին աշտարակէն մնացած նիւթերով և անունը գրաւ Բաբէլոն՝ որ վերջէն աւելի ևս մեծնալով և շնորհալով հին աշխարհի խիստ անուանի ու ծաղկեալ քաղաքներէն մին եղաւ* :

* Մեր օրերը Բաբելոնի աշտարակին աւերակները գտան . հետոցիւետ Բէլս բէլս տաճար , Դիտարան լինելուն ետեւ այրեր էր : Այժմ Բէլս բէլտ անուանը փլատակաց բլուր մ'է մէկ քառորդ մշտինի շնչարատով և լի արարագութիւններով :

Նիստէ . Սոյն ատենակըն ուրիշ զօրաւոր
մարդ մը՝ Ասուր անուամբ , որ Սեմայ ցեղեն
էր , Տիգրիս գետին վրայ Նիստէ քաղաքը հիմ
նեց . և բոլոր շրջակայ երկիրն իր անուամբ
Ասորեստան կոչուեցաւ :

Քաղաքի ացիւ : — Այսպէս զբեթէ նոյն ատենն
և նոյն աշխարհին մէջ երկու տէրութիւններ
կանգնեցան, Բարելոնի և Նինուէի : Սակայն
քանի մը դար ետք՝ Հայաստանի լեռներէն իջ-
նող ժողովուրդ մը՝ Քամայ սերունդը նուածեց
և Ասորեսանի հարաւային կողմը Քաղցէ ահան-
տէրութիւնը հաստատեց : Քաղցէ ացիւ իրենց
տիրած երկրին մէջ քուրմեր ու պատերազմա-
կան մարդկի եղան : Ընդարձակ անդաստաննե-
տու մէջ ուր ոչ փայտ ոչ քար կ'զտնուէր, ա-
զիւսէ դստիկնաւոր բուրգեր շինելով երկնից
աստվածութիւն ու կ'պաշտէին . ուստի Քաղ-
ցէ ացւոց մէջ շատ աւելի աւագ զնաց աստվա-
գաշնութիւնը քան թէ այլուր :

Նիսոս . — Բէլայ որդիին՝ Նիսոս՝ Աստրեսատնի
սահմաններն ընդպրածակեց : Արաբացի կամ Իս-
մայէլացի իշխանի մը հետ նիկակալցելով՝ Բա-
քրէլոնի տիրող թագաւոր պատերազմի մէջ Սպան-
նեց . յետոյ Հայաստանի վրայ քալելու ելաւ ,
բայց մեր Արամ նահապեաը թանկազին ընծա-
ներով զանի դիմաւորեց և հետը հաշտոթեան
դաշն գրաւ : Նինոս Մարաստանի թաղաւորն
ալ բռնելով՝ խաչի վրայ սպաննել առուաւ , և
տասն ութ տարուան մէջ Միջերկրականի և Դն-
դոսի մէջ զանուած երկիրները նուաճեց :

Այս արշաւանքեն դառնալով՝ Նինոս Նինուէ
քաղաքը վերանորոգեց և զայն իր անուամբը կո-
չեց : Քառակտութի դիրք մ'ունէր այն քսան մղն-
շրջապատով : Սորա պարիստալ Տարի ը ոտնա-
շափ բարձր էր և այնքան հասա որ երեք կառք
քովէ քով կարող էին անցնիլ . ունէր նաև հա-
զար հինգ հարիւր աշտարակ երկու հարիւր ոտ-
նաշափ բարձր : Այս շինութիւններն աւարտե-
լէն ետև՝ Նինոս վերստին նոր երկիրներ նուա-
ժելու ելաւ, մինչև Բակտրիա դնայ, նորա
մայրաքաղաքը պաշտիք և Համբասէ հնարագիւ-
տութեամբն առաւ :

Համերամ . — Այս կինը՝ որու վրայ շատ առասպելներ կ'պատմեն, զիցու հոյ մ'աղջիկն էր : Այս զիցու հոյն տաճար ունէր Ասկալոն լճակին մօս : Իր գուստը ծնելէն ետև՝ ամայի վայր մը թողուց ե ինք լիձը նետու եցաւ : Աղանիներ դալով ընկեցիկ աղջիկը կաթով ու պանիրով մնուցին : Յետոյ հովիներ զանի գտան և իրենց դլիսաւորին տարին : Հովուապեաը զանի խնամք իբրև իր աղջիկն ու նորա անոնը Համերամ դրաւ որ աղջանի կ'նշանակի : Մէնա՞ն՝ սինոսսի զօրապեաներէն մինչ այս օրիդրպին հետ կարդուելով նինուէ տարաւ : Բակտրիայ պաշարման ատեն Համբաւմ իր ամուսնոյն հետն էր : Նինոս այս կնկան խելքին ու գեղեցկութեան զարնուելով հետը կարդուեցաւ՝ Մենոնի նոյն պատերազմին մէջ մեռնելէն ետև :

Սակայն Ծամիրամը որչափ զեղանի՝ նոյնչափ
զուռղ և փառամոլ կին մ'էր : Հաղին Կինոսի
աթռուակից եղաւ որ մեծ փափաք զգաց առան-

ձին իշխելու։ Ուստի օր մ'իր ամուսնոյն առաջ ջարկեց որ հրաման տայ իրեն բոլոր Ասորեստանի տէրութիւնը չինդ օր բայցարձակ կառավարելու, որպէս զի թագաւորութեան անուշութիւնները լիովին վայելէ։ Նինոս այս խընդիրը կատարեց։ Բայց նենապամիտ թագուհին անմիջապէս հրամայեց որ իր ամուսինը բանտը դնեն, ուր քանի մ'օրէն սպաննուեցաւ։

Շամիրամ՝ իր աշխարհակալութեամբ և մեծաշնութեամբ հուշակաւոր թագուհի մ'եղաւ։ Բարելոն քաղաքը հոյակապ շէնքերով զարդարեց։ տէրութիւնը բարեկարգեց, ճամբաներ ու ջրանցքներ բանալ տուաւ։ Բէլայ տաճարին բոլորակը բարձր պարիսպ մը շինել տուաւ, իրարու վրայ ութ աշխարակով։ Նոյնպէս փառակոր ու գալարագեղ գարաստաններ, զոր կախուած պարտէններ կ'անուանէին. քաղքէն անյնող Եփրատայ վրայ հոյակապ կամուրջ մը ձգել տուաւ որու երկու ծայրերն ահապին բերգեր կ'բարձրանային։ Շամիրամ Եղիպատոփ, Լիքիոյ, Եթովպիս տիրեց՝ նոյնպէս Հայաստանի մեր Արայ Նահապետին դէմ պատերազմելով՝ և մինչեւ Հնդկաստան արշաւեց ու Խնդոս զետէն անդին անցաւ։ Բայց յաղթուելով վերադարձաւ Բարելոն՝ ուր իր որդին՝ Նինուաս մօրմէն ապստամբելուն՝ Շամիրամ՝ որ խիզձէն կ'տանչուէր ամուսնոյն սպանման վրայ՝ իշխանութենէ հրաժարեցաւ և զնաց Նինոսի գամբարանը մօսաւ, որ իր կինաց մնացած օրերը սուզի մէջ անցընէ։ Քանի մ'օրէն աներևոյթ եղաւ և աղաւնիի կերպարանօք երկինք թուաւ։

Նինուաս ՚ի յիշատակ Շամիրամայ շիրիմ մը

կանգնեց որու վրայ այս տապանադիրը փորագրուեցաւ. ՕԲնութիւնն ինձ կնային մարմին մը տուաւ, բայց իմ գործերովս ամենէն արիական մարդոց կ'հաւասարիմ։ Նինոսի տէրութիւնը կառավարեցի որ դրեթէ բոլոր Ասիոյ վրայ կը տարածուի։ Առաջ քան զիս ասորեստանցի մը չէր տեսած ծովը, ես չորս ծով տեսայ (Ծիցերկարական, կասպից, Պոնտոս և Կարմիր ծովերը) որոց ոչ ոք կ'մտենար, այնքան հեռուէին։ Գետերուն ընթացքը գարձուցի անջրդի հողեր ջրելու, որ արդասաւոր եղան։ Անառիկ բերդեր կանդնեցի, անանցանելի ժայռերու մէջէ Ճամբաներ ծակել տուի։ Իմ կառուց համար արաշետներ բացի ուսկից վայրի կենդանիներն անզամ անցած չէին երբեք։ Եւ այսչափ վաստակոց մէջ ինձին ու բարեկամացս համար պարապոյ ժամեր գտայ ։

Նինուաս. — Շամիրամայ յաջորդներն իրեն ոչ քաջարաւութիւնն ունեին և ոչ զործունէութիւնը։ Իսկ իր որդին՝ Նինուաս անհոգ ու գանգաղ կեանք մ'անցուց իր հպատակաց անտեսանելի մնալով արևելան բռնակալներուն պէս։ Ժողովուրդները սկսան քամահրել թաղաւոր մը զոր չէին տեմներ և որու միայն կնամարդի արաբը կ'լսէին։ Նինուասէն ետքը տիրող երեսուն թագաւորներն իրեն պէս թուլամորթ և ատիկար մարդիկ եղան։ Իսկ վերջնը, այս Եսարդկանաբալ, ամենէն անարձանն եղաւ։

Սարդարաբալ Ա. — Այս թագաւորին միակ փափաքն էր իր սկալատին մէջ շուայլ ու շուայտ

կեանք մ'անցընել, կանանց և նամիշաներու հետ, որոց պէս կ'հագուէր ու կ'կապուէր, երեսը կը դոնաւորէր և բոք կ'մանէր։ Ամօթալի կեանք մ'էր այս մարդու համար, մանաւանդ թաղաւորի մը համար որ աէրութեան զործերն երեսի վրայ կ'թողուր։ Սարդառաբալի այս կնամարդի ու անկարդ ընթացքէն զզուելով իր երկու կուսակաները նորա դէմ կ'դաւաղքեն։ Այս կուսականերն էին Վարքակիւ՝ Մարայ իշխանն և Բէլէսիւ՝ Բարելոնի իշխանը։ Առաջննը Մարայ և Պարսկաց ժողովուրդը, ու երկրորդը՝ Բարելոնի ժողովուրդը զրդուելով թաղաւորին դէմ կ'աստամբեցընեն, և այս աստամբութեան Հայք ու Արաբացիք ալ մասնակից կ'զանուին։ Այս ատեն Սարդառաբալ, իր թիրութիւնը թութուելով անակնունելի արիութիւն ցցուց և երեք անդամ աստամբայ բանակը՝ որ Կինուէն պաշտրելու կ'զար, վանեց։ Վարբակէն յաղթութենէ յուսահատ՝ իր տեղը գառնալու կը սպարաստուէր՝ երբ Բելէսիս որ Քաղղէացի մոդ և աստղադէտ էր, աստամբները քաջաւերեց, յայտնելով թէ աստղերը զիանը և գուշակեր էր որ քանի մ'օրէն քաղաքը պիտի կործանէր։

Վերջապէս՝ Սարդառաբալի զինակից Բակարիացիք թշնամնաց կողմն անցան. թաղաւորը ակար մնաց և ստիպուեցաւ նինուէ քաղաքը քաջուիլ ամրանալ։ Երկու տարի պաշտպանեց զայն պաշտրման դէմ. բայց երբ Տիգրիս զետին յարդելովք պարսպին մէկ մասը փլաւ և թշնամիք ներս մնան, Սարդառաբալ՝ իր պաշտին մէջ ժողովեց բոլոր դանձերը, կանչքն

ու որդիքն և կրակ տալով իրեն հետ ամենքն այրեցան։ Սարդառաբալին շիրիմ մը կանդնեցին այս արձանաղբուլ. «Անէալէս և Տարսոս քաղաքները մէկ օրուան մէջ շինեց. կեր, արբ և ուրախ եղիր, մնացածն ոչ ինչ է»։

Սարդառաբալի մահուամբ վերջացաւ Ասուբեստանեայց առաջնին թաղաւորութիւնը։

ԳԼՈՒԽ Բ.

Երիբորդ թուականութիւններ քննւ Կինուէն իրշանուածուն։

(259—606)

Վարքակիւ՝ Բէլէսիւ. — Սարդառաբալի մահուանէ ետք՝ Ասորեստանի պետութիւնն երեք մաս եղաւ։ Վարբակէն՝ Մարայ և Պարսկաց վրայ տիրեց, իսկ Բելէսիս՝ Բարելացուոց վրայ։ Այս առթիւ՝ ուրիշ երկիրներ ալ, ինչպէս Հայաստան՝ իրենց անկախութիւնը ձեռք ձգեցին։ Բուն Ասորեստանի մէջ ևս նոր թաղաւորութիւն մը կանդնեցաւ, սակայն որո՞ւ ձեռօք բոլորովին յայտնի չէ։ Ակարծուի թէ Քաղղէացի Բուռլ-Բալաբառ կամ Բելէսիս կառավարեց Ասորեստանը, իսրայէլի Մանայեմ թաղաւորը հարկատու ըրաւ մինչև որ Դէֆաւլ-Փալուասը Բ. իր նախնեաց աթուն ելաւ։

Դէֆաւլ-Փալուասը Բ. Սալուասար Ե. — Դեղալութ իր տէրութիւնը մինչև Աիրանան լւոն

ընդարձակեց . Դահուսիո քաղաքն առաւ . Աքաղ՝
Յուղայի թագաւորին օդնութեան զնաց՝ Ասորեց
և Խորայէլի թագաւորին դէմ , և շատ մը Խո-
րայէլացի գերի առնլով Ասորեստան փոխա-
դրեց : Նորա յաջորդը Սալմանասար Փիւնի-
կէն նուածեց և երբ իմացաւ որ Ովսէ Խորայէ-
լի թագաւորին Եղիպտացոց հետ գաշնակցելով
Հարկ վճարելու կ'մերժէ Սալմանասար նորա
վրայ քաղեց , գերի բոնեց և Սամարիան պաշա-
րելով առաւ ու բոլոր բնակիչները գերի տարաւ :

Սարդն , Սէնեւերէմ . — Սալմանասար չափա-
հաս որդի չունենալուն՝ Սարդն անոն զօրապե-
տը բոնութեամբ զահը զրաւեց և ահարկու-
աշխարհակալ մ'եղաւ : Ասորեստանն իր նախ-
կին մեծութեան ու փառաց հասուց և նորանոր
երկիրներու տիրեց , ինչպէս մը օրերը զըս-
նուած արձանադրութիւնները կ'վկայեն : Նախ
Սամարիան բոլորովին նուածեց և հին բնակչաց
տեղ պարսիկ գաղթականներ հաստատեց . յե-
տոյ իր աշխարհակալութիւնները մինչև Փոքր
Ասիա , Հայաստան , Պարսկաստան , Մարաս-
տան , Արաբիա , Եղիպտոս տարածեց և մեծ-
նաւատորմիղ մը շինել տալով Միջերկրականի
քանի մը կղզներու տիրեց : Այս յաղթութեանց
ժամանակ՝ Սարդն՝ Կինուէ քաղքին տեղ՝ որ
տակաւին աւերակ էր , մեծ ու փառաւոր քա-
ղաք մը կանգնեց Սարդնէ գուշակ անուամբ (այժ-
ման Քորշապատը) զոր անուանի ոլ . Պոդա և
Լէյըրս հնագէտները պեղել տալով ինչպէս
նաև Կինուէ քաղաքը (Քոյունճուխ) զոր Սէնեւե-
րէմ թագաւորը վերականգնեց՝ անդին արձանա-

դրութիւններ և արձաններ գտան : Սենեքերիմ
ևս նշանաւոր է իրեւ աշխարհակալ : Երբ Յու-
դայի թագաւորը մերժեց հարկ տալու՝ և երու-
սաղէմ քաղաքն ամիսցընելով՝ Եթովպիոյ ու
Եզիպտոսի Թարակ թագաւորին հետ միացաւ ,
Սենեքերիմ նորա դէմ քալեց՝ յալթեց , Ե-
ղիպտոս արշակ և Պելասին քաղաքը պաշա-
րելէն ետեւ զէնքն Երուսաղէմի դէմ զարձուց ,
բայց իր բանակը ցիր ու ցան եղաւ հրաշքով
մը : Այս պարտութեան վրայ մի շատ զաւառ-
ներ զլրուս քաշեցին : Սենեքերիմ իր բարկու-
թիւնն Խորայէլացի գերիներուն վրայ թափեց
և մինչև անդամ իր հպատակներն անխնայ տան-
ջեց : Այս անզթութեամց չկրնալով հանդուր-
մել՝ իր երկու որդիկն Առբառէլ ու Սահասար զին-
քը սպաննեցին մինչդեռ նա Կէլբուի աստուծոյն
տաճարին մէջ կ'աղօմէր :

**Ասորդն , Սարդուհանուսուր Ա . Սարդանաբաւ-
ր .** — Սենեքերիմի փոքր որդին Ասորդն՝ իր
հայրասպան եղասրբը հալածեց մինչև Հայաս-
տան՝ մեր Սէնյորդէ նահապետին օրովը , և ա-
թուն ելնելով Բարելոնի տիրեց ու զայն Կինուէի
միացուց : Երբ Յուղայի թագաւորը Մանասէ՝
իրմէ զլրուս քաշեց՝ Ասորդն նորա դէմ պա-
տերազմի ելուս , յաղթեց և Մանասէն շղթա-
յակապ զերի բերաւ ՚ի Կինուէ , բայց քիչ մը
ետք նորէն աթուռը գարձուց : Իր յաջորդը Կա-
բուդուհանուր Ա . Մարաց Փրասուր թագաւորին
յաղթեց և զանի սպաննեց : Իր զօրապետը Հո-
ւեւերնէ Յուղայի երկիրը մատւ Բէնուլս քա-
ղաքը պաշարեց , բայց Յուղիթի ձեռօք իր մահը

զտնելուն՝ բանակը ցրուեցաւ : Սարդանաբալ Բ.
(Սաբուկ կամ Քինալսդուն) իր համանոն թա-
ղաւորին հեղդ ընութիւնն ուներ թէև, նա
աւարտեց Սենեքըիմ սկսած Նինուէի հոյա-
կապ պալատը : Նոյնպէս մատենագարան մը շի-
նել տուաւ մեծ աղիւաներով, որու բեկորներն
այժմ Լոնտօն կ'զտնուին : Այս Սարդանաբա-
լին օրովք՝ Մարաց Կեաքսար թաղաւորը՝ իր հօ-
րը Փրաւորդին մահուան վրէմը լուծելու հա-
մար՝ Բարելոնի կուսակալ Նարոպուասարի հետ
միացաւ. (ինչպէս Ասորեստանի առաջին թագա-
ւորութիւնը կործանելու համար՝ միացեր էին
Վարքակէս ու Բելեսիս) ու Հայոց Պարսց նա-
հավեան ալ իրեն նիվակակից զտնելով զնաց
Նինուէ քաղաքը պաշարեց : Սարդանաբալ քա-
նի մը տարի գիմանալէն ետև՝ երբ պարիսպը
փլելով՝ ճարը հատաւ՝ ինքզմնքը սպանեց : Ե-
րբէ իշխանները Նինուէ քաղաքն հիմնայատակ
ըրին և Ասորեստանի տէրութիւնն իրենց մէջ
բաժնեցին (606) :

ԾՐԱԳԻՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ասորեստան. — Այս աշխարհին սահմանն է, հիւսի-
սէն՝ Հայաստան, արևելքին՝ Մարսաստան և Պարսկա-
ստան, հարաւեն՝ Պարսց ծոցը, արևմտութէն՝ Ասորի և
Արարիա : Երկու մեծ գետեր կ'անցնին նորա մէջ տեղէն.
Եփար, որ կ'ջու թագուատ, կոռհաւուս, բաբէլոն, և Տէ-
տէս գետը, որ կ'ըսէ Նինուէն. նոյն բնական ունին :

Ասորեստան երեք մաս կ'բաժնուի. ա) Բան Ասորես-
տան կամ Նինուէստան, գ. ք. ք. Նինուէ և Երբէլ. բ) Մի-
նուէստ կամ Ասորէտ իշտաց, գ. ք. ք. Երբէու և Կորէ-
նէ) Բաբէլոն. գ. ք. Բաբէլոն և Կոռհաւուս : — Երբէմ
այս վերջին երկու մասը բարդէացաց էրին կ'կոչուէր:

Ա.ՍՈՐԵՍՏԱՆԵՑԻՈՑ ՎԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԻՆՅԱԾ. — Ա-
ռիյ բոլոր մասկետով եւնաց պէտ՝ Ասորեստանի կառա-
վարութիւնն ալ բացարձակ բանապետով թիւն բաց
մասեան իրեն Ասոտած չէն նկատուեր, ինչպէս եր-
բեմ Նշգապատ մէջ՝ Մարդ կ'սեպուէր, բայց նիրիւ-
խան տէր էր և գենովեա : Երիէ գրու, ուիշ գովարէ-
կ'անուանուէր : Այս թագաւորաց թագաւորը բազմաթիւ
պարասկաններ անէր, անբութ եւան մեծամեծներն իր
խորհուրդը կ'ազմին : Խոկ մարզպանները՝ որ գաւառ-
ները կ'կրավագրեն, ոչ պայմ զօրաց հրամանատար էին
այլ հարիւրը ժողվելու պաշտոն անէին :

Ասորեստանիցիք յանցաւաները ծանր և երբեմ սոս-
կալի կ'երազվ կ'պատճէին : Ամենէն թեթև սահմանաց
համար կ'անձնանաւին, աչք կ'փորեին և այնին : Երբ պար-
տապանն իր պարտիքը չկարել չկարենար պարտաստէրին
սորուկը կ'գաւանար : Գերավաճառութիւնը ներել էր,
նոյնպէս բազմակնութիւնը :

Արօն. — Ասորեստանի կրօնը՝ թէև արտաքին կոչու-
մենք ու ծէսեր ուներ, բայց Աստուծոյ միութիւնն կ'ըս-
տունէր : Գեղարդին Աստուծն ուսկից միւս աստուծ-
ները կ'ծագէին իւղան էր, որ սովորաբար Ասուր աղջա-
յին անուամբ բոլոր բնակչաց կոմիկ կ'պաշտուէր : Միւս
գիր կ'անձնասորէին ասուղերը կամ ընութեան այլ և այլ
գորութիւնները, և իրարանշերին ներկայացածինն էր
գեցուչի մը : Բնէլ, (Արմ.) Կութա, Միւլիու (Լուսին) Աս-
տուծութ (Ասուղիի) և այնի : (Սոբէտանի իօն) Ամէն մարդ-
կարձէր թէ երկնային մարմինները մեծ ներգործութիւն
ունին երկրային բաներու վրայ : Նինուէի թագաւորները
գործի մը շնեանարկած՝ գուշակներու խորհուրդ կ'հար-
ցընէին և ասափ միշտ իրենց ազգունիքն ասսուագէս քուր-
մեր և զիստարան մ'ունէին :

Գործանակնելուն. — Ասորեստանիցիք գրականութեան
այլ և այլ ճիշդելը կ'մշակէին : Նինուէի արքունական
գիւտանին մէջ զանազան զրեանք կային որ պատճութեան,

աշխարհազրութեան, չափադիտութեան և աստղաբայ-
նութեան կ'վերաբերէն: Այս գրեանքն ուրիշ բան չէն
բայց եթէ տափակ ու քառակոսի թը ծովոն հողէ տախ-
տակներ, որոց երկու կաւէ երեսին վրայ մանր ու խիս
գրուած տառեր կ'երևէն: Այս մանուածոյ գիրերը՝ զր
քիշ ատենէ ՚ի վեր գիտուանները յաջողեցան կարդալ,
Բաւերաբերէն կ'կոչուին:

Ծեն և գեղարվութեան: — Շատ ատեն՝ Ասորեստանի
քաղաքակրթութեան աստիճանն վրայ որոշ զաղափար
մը չունեն պատմիչները: 1844ին՝ գաղղիացի մը՝ Պ. Պա-
րու որ Մատուցել գիւտասոս եւ, այս քաղաքէն քիշ մը
հեռու անշուր գիշէ մը շը շը ապատին մէջ (Քօւապոր) ա-
սորակն պալատ մը գտաւ: Այս գիւտն այլց ալ հե-
տարբերութիւնը շը քթեց, և անկիացի ուղևոր մը, Պ.
Լեյքը, Ներսոսութէ և Քայուանանունին աւերակները փորել
տալով՝ Նինուէ քաղաքին գիշըն ու ընդարձակութիւնն ե-
րեան հանելն զատ՝ նոր նոր շէպերը ու արձաններ գտաւ,
որնոք բաւական ճշգրիտ ծանօթութիւններ կ'տան՝ Ա-
սորեստանցոց ճանապարհէտութեան և քանդակագրծու-
թեան վրայ: Պալատներն՝ որ շատ ընդարձակ էին՝ սովո-
րաբար արուեստական բլուրներու վրայ ընտուած էին: Գաւաթին մէջ կ'գտնուէին մարդկացին գէմքով թեւառու-
ցուէր ներկայացընոց հսկայական արձաններ կամ թեւա-
ռու առիւծներ: Շէնքերն ահաքին պատեր ունին կճով
ծանկուած, որոց վրայ փառաւոր քանդակներ կ'երևէն:
Բոլոր սրահներն ու գաւիթները հսկայական քանդակ-
ներով զարդարուած են, որ սրորդութիւններ, պատ-
րազներ, պաշտառներ և հանդէմներ կ'երկայացընեն:
Սովորաբար աբրունի պատմուին մօտ բրգաձեւ ու եօթն
դստիկնով աշխարհակ մը կար՝ որ դիտարանի տեղ կ'ձա-
ռայէր և նորա վրան ենիւով աստղատես քուրմեր աստ-
դերը կ'քննէին և ապագան կ'գուշակէին:



Ասբուաչութիւննուր Բ. — Նարբուպոլասար Նիւ-
նուէն կործանելէն ետև՝ Եղիսպասի Նեքաւովլ
թագաւորին գէմ պատերազմ բացաւ, վասն զի
այս թագաւորը, Պաղեստինն ու Ասորիիր նուռաձե-
լով գէպ, ի Եփրատ կ'կիմէր: Նարբուպոլասար
իր որդույն՝ Նաբուգոդոնոսորին մեծ բանակ մը
տալով՝ Նեքաւովլի գէմ զրկեց, որ յաղթուե-
ցաւ, և Եղիսպասի փախաւ: Նարբուգոդոնոսոր
իր հօրը մահն իմանալով՝ պատերազմի դաշտը
թուլուց և Բաբելոն դարձաւ: Երբ իր հօրը
յաջորդեց նա՝ իր աշխարհակալութիւնները շա-
րունակեց և մեծ անուն ու զօրութիւն ստացաւ:
Երուսաղէմը կործանեց, Փինիկէի Տիւրոս քա-
զարը, տասն մէկ տարի պաշարելէն ետև՝ առաւ
Հիմնայատակ ըրաւ: Բաբելոն քաղաքը հյու-
կազ շէնքերով զարդարեց այնպէս որ աշխար-
հիս առաջնին քաղաքն եղաւ: Նարբուգոդոնոսոր
Բ. փառայ կատարն հասնելով մոլորեցաւ և իր
պատիմը կրեց իմելայնրութեամբը:

Այս հօրը և փառաւոր թագաւորին մահուա-
նէ ետք՝ Բաբելոնի տէրութիւնը սկսաւ տկա-
րանալ: Ներքին կախներ և արտաքին պատե-
րազմներ ծագելով՝ Բաբելոն իր բոլոր նուռաձ
երկիրները կորսու: Իր վերջին թագաւորն ե-
ղաւ Պալատառը, որ իր պալատին մէջ մեծ խմ-
չոյք մը տալու պատենը՝ Կիւրում Պարոից և Մա-

բայ թաղաւորը՝ Բաբելոն մտաւ իր զօրաց հետ,
որ Պալլազարը սպաննեցին և բոլոր քաղքին
տիրեցին։ Այսպէս վերջացաւ Բաբելոնի աւ-
րութիւնը։

ԱՍԹԵԱՍՑՈՅ ԿՐՕՆԸ։ — Բարելացիք ևս Ասորես-
տանցւոց կրօնը կ'դաւանեին, պահպան ասորելը կ'զար-
տէին։ Բահող կամ Բել (արեւ) բնութեան արգասաւո-
րէւ զօրութիւնն էր։ Ասորութէ և ուրիշ մի շատ աս-
տուածներ։ Իրենց պաշտամն մէկ քանի արարողութիւն-
ները պժգալի և անբարյական էին, և Քաղդեացւոց եր-
կերը լի էր կուռքերով։ Իրենց կրօնասորները՝ որ +ու-
րեաց, և+ կամ հուր-+ կ կոչուէին աստղաբաշխու-
թեամբ շատ կ'պարապէին և ասալերը նայելով կ'կար-
ծէին ապագան գուշակել։ Զօրաւոր ցեղ մը կ'կազմէին, և երրենն
տէրութեան կարերը պաշտօնները կ'վարէին, և երրենն
իրենց մէջ օտարականներ աւ ընդունեցան՝ ինչպէս Դա-
նիէլը։

Աստ-Հաւա-Եկւան։ — Անսանձ բննապետութիւն էր.
թագաւորները մինչև անդամ թրգինքնին Ասորեցոյ տեղ-
պալտել կ'առյին։ Մարզպաններ կ'կառավարէին գաւառ-
ները, ներքինիներ արքունեաց նշանաւոր պաշտօնները
կ'կառարէին։ Հպատակաց կեանք ու կալւաճքը թագա-
ւարին կամքէն կախում ունեին։ Այս ժողովրդեան բարբը
չառ ապականած էր։ Շապալութիւն, ցոփութիւն և խառ-
ակութիւն ամէն տեղ կ'տիրէին։

Առաջապետական-Եկւան։ — Բաբելոնի գիրքը առևտուորի
շառ յարմար էր։ բոլոր նահանքն այլ և այլ ջրանցքով
և առուներով կ'ոռոգուէր և ողողումէ ազատ կ'մարա։ Բա-
բելոն վաճառալահ կերպոն մ'էր ու Ասիոյ այլ և այլ
կողմերէ կարավաններ տեսակ տեսակ ազգանք կ'բերէին,
Հնդկաստանէն, Զեխանաստանէն և Պարսկաստանէն անդին
քարեր, սպիր, շալ, մետաքսեղէն կ'ընդունէր, իսկ հւ-
սիսային երկիրներէն, մանաւորապէն Հպատականէն և
Արևիկաստան կ'սամանար պիտանի գաճառք։ Զարորդակցու-
թեան ամենէն գիրքին միջոցն էր Եփրատ գետն՝ որու-
զայս Հայոց թերթե լսաւածե նաւակները բեռնաւորեալ-
կ'սահմէն գետ ՚ի Բաբելոն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՑԻ ՈՑ

ԳԼՈՒԽ Ճ.

ՄԵԽԵԿ ԳՈՎ ՄԵՋ ՍԵՎԵՐ Բ.

(3500—1680 թ. Ա.)

ՆԵՊԱՔ հովիալ։ — Ինչպէս Ասիոյ մէջ գլխա-
ւորապէս Եփրատայ ու Տիգրիսի արդաւանդ-
գաշտերը մարդոց բնակութեան շէն ու ծաղկած-
կերոններ եղան, նոյնպէս շէն ու բազմամարդ-
երկիր մը դարձաւ ՆԵՊԱՔ հովիալ՝ որ հարաւեն-
գէպ ՚ի հիւսիս երկու հարիւր մղնի չափ եր-
կայնութիւն, և տանի մղնի չափ լայնութիւն
ունի։ Երկու կողմէն կ'երևին լեռներու շղթա-
ներ (Աբբասան և արտօնական) որ հովիսն անա-
պատէն կ'զատեն։ Մէջ տեղելն կ'անցնի զեղե-
ցիկ զետ մը, որու կանոնաւոր ողղողմանները
կ'ուղղեն և կ'արգասաւորեն ամէն տարի զետ-
եղեայ գաշտերը, և որ Միջերկրական ծովը
կ'թափի Ճիւղաւորելով։

Ինչպէս որ հին պատմիչ մ'ըսաւ։ Եթէպուն
ՆԵՊԱՔ մէկ պարդւն է. այսինքն եթէ Նեղոսը
ցամքէր, երկիրն իսկոյն անապատ պիտի դառ-
նար։ Միայն Աբբաս կողմերը՝ քանի մ'օվանիւն-
ներ կամ դալարաւէտ կղզիներ կամ։ իսկ երբ
հարսային հրատապ հովը փչէ (Խորչակ, ասմ-
ելէ), որու շունչը փուան մը կրակին կ'նման-
ելէ),

ցընեն, աւազային մըրկի մը կ'հանէ որով ամէն բան կ'ծածկուի: Եղիպասս զրեթէ բնաւ անձրեւ չվափիք. նորա երկնից երեսն երեցած խոշոր ամփերը դէս ՚ի հարաւ կ'երթան և Ելուվանից բարձր լեռներու վրայ անձրեւ կ'բերեն: Այս անձրեներեն յառաջ կ'գան ողողումները, որ մինչեւ այսօր կ'պատահին, և թէեւ ուրիշ տեղեր մեծ վլասներ կրնան պատճառել բայց Եղիպատոսի համար առատութեան և հարստութեան աղբեւը են:

Յունիս ամսոյ վերջը Կեղոսի ջրերը սովորականէն աւելի կ'սկսին բարձրանալ, քիչ ատենէն կ'պլոտորին և ապա յանկարծ կ'կարմրին. Հետոշետք շամանալով հոկտեմբեր ամսոյ սկիզբը ջրերը եօթէն մինչեւ տասն կանգուն վեր ելնելով կ'ողողեն բալոր հովիտը, որ տեսակ մը ծով կ'գառնայ. այս ծովին մէջ կղղեակներու պէս կ'երկնի քաղաքներ, դիւղեր, արմաւենիներու կատարներ և նեղ թռոմբեր որ հաղորդակցութեան կ'ծառայեն: Այս է Եղիպատոսի ձմեռը:

Երբ փոքր առ փոքր ջրերը սկսին նուազիլ, դեկտեմբեր ամսոյ վերջն իրենց բնական դիրքը կ'առնուն պարարտ կաւ մը թողլով: Այսուհեաւ եղիպատայիք կ'սկսին վար ու ցան ընել շատ դիւրութեամբ. վասն զլ պարտառոր չեն հովը հերկել և արօրով ակօմներ բանալ: Քանի մը ամիս ետք՝ Եղիպատոսի հրավառ արևուն զօրութեամբ՝ չովիսն առատ հռնձքով կ'ծածկուի:

Եթէ զետին ջուրը բարձր չենի՝ արտերն անջրդի եւ առանց պարարտութեան կը մասն, եթէ զետը շատ բարձրանայ, հողն եր-

կար ատեն ջրով ծածկուած մնալով երկրագործը կ'ստիպուի երկիրն անշտակ թողուլ: Այս երկու պարարտայից մէջ կրնայ սով պատահիլ: Եղիպատոսի թաղաւորներէն մին, Մերին, այսպիսի պատահարի մ'առւաջն առնլու համար մեծ լին մը փոքրել առւաւ, որ իր անուամբ Մէքսիան կ'կոչուի. այս լիճը Կեղոսին հետ կապուած էր ջրանցքով մը, զոր հարկ եղած ժամանակ կ'բանային ու կ'գոյեին թմբերով: Երբ ջրերն առատ լինեին, լիճը կ'լեցընէին, իսկ եթէ աղողումն անբաւական լինէր: Լիճն ջրերը գէտ ՚ի հովիտը կ'վաղցընէին:

Ահա այս հովալին մէջ կ'բնակէին Եղիպատայիք, որ՝ թէեւ քամէն սերած, սակայն վերջն Սեման ու Յարէթեան ցեղերու հետ խառնուած են:

Եղիպատոս հին ատեն երեք մաս կ'բամնուէր. Վէլին-Եղիպատոս կամ Թէբայիթ (այսօր Սայիթ) ուր կ'զանուէր Թէբէ քաղաքը. Մէջին-Եղիպատոս, որու մայրաքաղաքն էր Սէմին. Սուրբին-Եղիպատոս կամ Տէլբա:

Մէնէն. — Եղիպատայիք առանդութեամբ կ'ըսէին թէ իրենց երկիրը գից ու գիւցազանց բնակութեան վայրն էր՝ շատ հին ժամանակները: Յետոյ Վերին-Եղիպատոսի Թէս քաղաքին մէկ բնակիչը՝ Մէն կամ Մէնէն Միջին-Եղիպատոս գալով Եղիպատական աէրութիւնը հիմներ և մարգկային ընկերութեանց առաջին թակաւորն եղեր է: Իր օրովք բոլոր Միջին-Եղիպատոս հահին մը, և Կեղոսի երկու մեծ ձիւղերէն շինուած Տէլբան ծովուած Տէլբան մէկ մասն է եր-

զեր . իսկ Վերին - Եղիպառը միայն մարդաւրնակ : Մենէս՝ Կեղոս գետը փոքր ինչ արևելքան կողմը դարձնելով՝ Միջին - Եղիպառը ցամբեցուցեր , Մեմիխ քաղաքը շնորհ է և դարերէ ետև՝ Նեղոսի ափումը գետին բերանը դիզուեր և Տեղան ձևացեր է : Այս վերջին աւանդութիւնը հաւանական կ'թուի : Մենէս (Մէծքայի) Եղիպառի մէջ կարգ կանոն հաստատեց , փառաւոր տաճար մը կանգնեց , բնակչաց կրօն ու արուեստներ տորվեցուց և մահուանէ ետև՝ դից կարգն անցաւ : Թէպէտ Մենէս երեալայական անձ մը , Եղիպառի առաջին թագաւորն ու օրէնսդիրը կ'համարուի :

Աւեն մը կ'կարծուէր թէ Եղիպառայիք Եթովվոյայէն առած են ուամնք ու դիտութիւն , և թէ քաղաքակրթութիւնը թէրայիդէն սկսելով հետղետէ Ստորին - Եղիպառոս տարածուեր է . սակայն հիմակ պատմիչները այս կարծիքը սխալ կ'գտնեն . որովհետև ամենէն հին յիշատակարանները , այսինքն՝ մեծ մարդոց շիրիմները , և զից տաճարները Ստորին - Եղիպառի մէջ կը գտնուին , քան թէ վերին : Ուստի կ'երեկի թէ ժողովուրդները նախ Ստորին - Եղիպառի մէջ ծաղկեր և ապա՝ Նեղոսի ափունքը բռնելով՝ Միջին ու Վերին - Եղիպառոս , և մինչեւ Նուրիա ու Եթովվայի տաճարները են :

Թագաւորական ցեղեր . — Եղիպառայիք՝ Մենէս մէն սկսելով՝ երեսուն արքայական ցեղեր ունեցան և բազմաթիւ թագաւորներ , (փարաւոն) : Հաստ հաւանական է որ այս թագաւորաց մեծ մասն իրարու ժամանակակից էին ու այլ և այլ

քաղաքներու մէջ կ'իշխէին : Ոմանց միայն առուները յիշուած , և ոմանց գործերն առասպելախաւն են : Առաջին ցեղերու մէջ նշանակութեան արժանի են , Մենէսի որդին՝ Անոնիս , որ անուանի բժիշկ է եղեր և բժշկական զիբքեր յօրիներ է . Քէյտօ , որ Ապէս կովուն պաշտօնը հաստատեր է . Նեդերէերէն , որու ժամանակիլ՝ Նեղոս զետէն տասն մէկ օր մեղրախաւն ջուր վազեր է . Թօպէրինո՞՝ որ շնութեանց համար սրբատաշ քարեր զործածել առուեր և արձաններու վրայ նշանագիտներ զրելու սովորութիւնը հաստատեր է . Սոսէն կամ Շոսէն (Քէոպս) որ ամենէն բարձր և առաջին Պիտրէ (բաւրդ) շինել առուա . Շաքրո (Քէրրէն) և Մէնէբր (Միկերին) որ միւս երկու բուրգերը հիմնեցին . Աղողու՞՝ որ Ճիշտ հարիւր տարի ապրեր է . Նէրոնիտին թալուհին՝ որ նշանաւոր է եղեր իր իմաստութեան և զեղեցկութեան կողմէ . իսկ երկատասաններորդ ցեղին երկու հոչակաւոր վեհապետ ունեցեր է , մինէ Սէսոսուր կամ Օսորուաչին* , մեծ աշխարհակալ , որ մինչև Թրայիտ արշաւեր և ամէն նուաճած երկիրները յաղթական կոթողներ կանգնելու է , միւսը՝ Ամենէն , որ երկելի Լաբիւրնինթուաը շինել առուեր է :

* Եղիպառուի հին նկարներու և արձանագրութեանց նշանէն հին և նոր թագաւորաց ցանկերու մէջ Սէսոսուր անունը սահել կ'պատահէի , որով պատմութեան բաւական շփոթութիւն ծագելուն՝ 127 հարստութեան Սէսոսուրը սովորաբար Սէսէրուաւն կամ Օսորուաչին կ'անուանէն , իսկ միւսները Ռամնէս և Բ. Բ. Սէտիսուն , և այլն :

Հովհանքառաց արշաւանդը . — Մինչդեռ Ես զիստոս մեծաշէն թագաւորներու ձեռօք կ'ձաղլի էր արուեստից և զիստութեանց մէջ Տէմասոս թագաւորին օրով Արևելքէն արաբացի կամ փիւնիկեցի ժողովաւրդներ՝ յանկարծ Եղիստոս արշաւելով մեծ մասին տիրեցին , բնիկ իշխանները սպաննեցին , մէհեանները կործանեցին և իրենց թագաւոր դրին Սալստիս անուն զօրապետը՝ որ Մեմիփիս քաղաքը բնակեցաւ : Այս օտարականներն իրենց հետ բազմաթիւ արշառներ բերեր էին և այս պատճառուաւ Հետառոս կամ Հովհանքառներ կոչուեցան : Սալսափիս Կեղոսի մէկ Ճիւղին վրայ Ալբրիտ քաղաքը շինեց ամրացուց որ վերջէն Պէլուանին անունն առաւ : Իրեն յաջորդներն երեք գարէն աւելի կառաւ վարեցին Եղիստոսը , բայց չկրցան Թեփի՛ քաղաքն առնուլ , որու թագաւորներն իրենց հարկ կ'վճարէին :

Վերջապէս այն Եղիստացիք որ Վերին-Եղիստոս ապաւիներ էին և իրենց անկախութիւնը ձեռք ձգելու փափաք ունէին , Եթովպայուց և Նուրիացոց հետ միանալով՝ յաջողեցան Հիւքսոսները Եղիստոսէն բոլորովին վանելու : Այս յաղթութեան մէջ երեւելի հանդիսացան երեք զլիստոր Եղիստացիք իշխաններ , Ամովիս , Թուաթ-Մոսի և Ամենուէիս (1680) :

Ճիւքսոսներու տիրապետութեան ժամանակն էր որ Յովակէփ Գեղեցիկն իր ընտանիքն Եղիստոս հաստատեց և իր պաշտօնէութիւնը վարեց : Սակայն յայսնի չէ թէ հովին թագաւորներէն մէկն էր իր տէրը թէ ոչ Եղիստացիք անկախ թագաւորներէն մին :

ԴԱՌԻԽ ԺԱ:

Մէջն Սէմասուն գնչւ Փառարտիւն :

(1680-670)

Մէջն Սէմասուն Բ. — Եղիստոսի արքայական հարստութեանց մէջ ամենէն երեւելներն եղան տասնութերորդ և տասնիններորդ հարստութեանները , որոցմէ շատ աշխարհակալ և մեծաշէն թագաւորներ ելան , ինչպէս Թուաթնուխներ կամ Թութեաններն , որ՝ Ճիւքսոսներն Եղիստոսէն վրանտելով՝ անկախ պետութիւն մը հաստատեցին ու Ասորուց վրայ մեծ յաղթութեաններ տարին , Ախոնդիսներն որ՝ իրենց նախորդաց պէս՝ ահազին յիշատակարաններ և մէհեաններ շինել տուին Վերին-Եղիստոսիք մէջ , և ուրիշ մի շատ թագաւորներ՝ որոց ժամանակ երկրագործութիւնը , արուեսաններն ու դիտութիւնները յետին ծայր ձաղկեցան : Իննետասներորդ հարստութեան հիմնադիրը՝ Մէլիք Ա. կամ Մէլիոն՝ որ Մէլիք-Էն-Փառան (սիրելին Փառահի) մականունն ունի , նշանաւոր աշխարհակալ մը եղաւ : Արաբացոց և Ասորուց դէմ պատերազմցաւ ու Եթովպիհան նուածեց : Այս և ուրիշ իշխանաց զործերը Գարնադիք մեծ պալատին մէջ արձանագրուած են :

Սակայն իր որդին Սէմասուն կամ Մէջն Ռամսէս Ա. Մէլիք-Էն- (սիրելին Ամմանի) զամենքը զերապանցցեց իր աշխարհակալութեանց և մեծազործութեան կողմէ : Իրաւ է որ այս աշխարհակալին անունն այնքան մեծ հոչակ հանեց որ պատմիններն անոր վերաբրած են շատ զործեր

և շինութիւններ զբո ուրիշներն ըրած են : Իր հայրն երազ մը կ'ատենէ թէ որդին բոլոր աշխարհի պիտի ամրէ . ուսափ Սեթին պատերազմի համար զանի կ'կրթէ : Սեսոստրի տարեկից տղեկները կ'ժողվէ և նոյս մարտական մարզանք ուսցընել կ'այս, այնպէս որ արքայազննը մանկութենել կ'վարժի ձիով երկար արշաններ ընել, զի՞ն շարժել, անսպատի կենդաննեաց և վայրենի մարդոց դէմ մարտնչիլ : Սեսոստրի իր մաշտանէ ետև զահն ենելով՝ իր մարզակից ընկերներն իրեն զօրավարներն ըրաւ և մեծ բանակ մը պատրաստեց որպէս զի իր փառասէր խորհուրդներն՝ ի զործ դնէ : Իր հետեւակ զօրքն էր, պարսաւոր, աղեղնաւոր, 620,000, չեծելազօրն 24,000, և ասկից զատ՝ 27,000 սպառազէն կառք ունէր . Երկու մարդիկ կ'նրաւածին կառքին մէջ, մին զահն կ'վարե՛ միւսը կը կոտէր : Այս աշազին զօրութեամբ բոլոր աշխարհը նուաճելու ելաւ : Նախ Եթովսիան հպատակեցուց և նորա վրայ տուրք դրաւ փայտ, ուիկի, եփենոս և փղոսկի . վերջը Կարմիր ծոռվուն վրայ չըրա հարիւր նաևով առվիտ մը հանեց, որ՝ մինչեւ Երիթթեան ծովուն եղելքը նուաճելու կ'երթար, ինք Սեսոստրի իր բանակին դլուխն անյնշնելավ՝ Ասիան կ'արշաւէր, Ես դիպոսի երեք նահանգներն երեսուն և վեց նահանգի բաժնելէն և իւրաքանչիւրին վրայ հաւատարիմ նահանգավեաններ դնելէն ետև . Արդէն Փիւնիկեցիք, Քանանացիք, Արաբացիք (Քելթաս*) Խղիպտոսի դէմ զաշնակցեր էին : Սե-

* Արևմտեան Ասիոյ ժողովութեներն այսպէս կոչուած էին յիշտակաբանաց վրայ :

տոստր այս նիզակակից թշնամեաց յաղթեց և ստիպեց հաշտութեան : Հին պատմիչներ կ'պատմն նաև թէ Սեսոստր մինչև Գամնդէս գետէն անդին անցաւ յաղթական, ապա դէպ ՚ի հիսուսի զարնելով՝ Սկիւթացիքը նուաճեց մինչև Տանայիս, Սև և Կատակից ծովերուն մէջ զաղթականներ հաստատեց որ Կողքինի տէրութիւնը հիմնեցին . անկից Փոքր Ասիա անցաւ, և անդ յիշակերտներ և կողողներ կանդնեց ՚ի նշան իր յաղթութեանց, և երբ Թրակիա արշաւէց՝ սովէն և կլիմային խառութենէ չկրցաւ աւելես յառաջ խաղալ : Ինն տարիէն ետք՝ Սեսոստր վերադարձաւ Եղիպտոս՝ մեծ փառօք, և իր հետը բերելով զերիներ ու անբաւ զանձեր :

Այսուհետեւ Մէծն Ռամէս իր տէրութիւնը քարեկարգելու և զարդարելու ջանաց : Մէկ կողմէ այլ և այլ կարգ կանոն հաստատեց ժողովրդեան բարօրութեան համար, և միւս կողմէ Հյուկաս շէնքեր կառուց իր մեծադրութիւններն անմանհացընելու համար : Նոր նոր տաճարներ, պալատներ, կոթողներ կանգնեց Եղիպտոսի հովտին մէջ : Փոտահ աստուծոյ նորիցած մէհեանն երկու միակառու և երեսուն զրկաչափ բարձր կոթողներով զարդարեց՝ որ զինքը կ'ներկայացընէին իր արքայազն ամուսինավը : Մեմփիսէն մինչև ծովը նոր ջրուղիներ բանալուաւ, որով Երկին անելի արգաստոր և հաղորդակցութիւններն անելի գիւրին եղան . նոյնպէս Պելոսսիոնէն մինչև Աբէ՛ քաղաքն ահազին պատ մը, հարիւր քսան հազարամեդր երկայնութեամբ, շինեց որպէս զի Արաբացի վրա-

նաբնակ ժողովրդոց ասսպատակութիւններն արշ զիլէ :

Ռամնէս՝ բոլոր այս շինութեանց համար՝ իր բերած զերիները զործածեց : Երբայեցիք ալ որ նոյն ատենն Եղիպտոս էին, Ռամնէս քաղաքը կառուցանելու բռնագատուեցան՝ Տելլայի մէջ՝ Մովսիսի օրով՝ ինչպէս որ կ'պատմէ Ս. Գիրը :

Եղիպտայիկ՝ իբրև նոր Օսէրէ մը, իբրև աղջային զերազանց դիցաղն մը՝ կ'նկատէին Ռամնէսը : Մինչև ցայսօր բաղմաթիւ արձաններ ու արձանադրեր ցոյց կ'տան թէ ստուդիւ մեծ փառք ունէր : Դարեր անցնելով իր համբաւը չնուազեցաւ : Կ'պատմնն թէ իր մահուանէ զրեթէ հազար տարի ետք՝ երբ Եղիպտոսու Պարսից իշխանութեան ներքեւ ընկաւ, Դարէն ուզեց որ իր արձանը՝ Մեմիֆիս տաճարին դիմացը՝ Ռամնէսի հակայական արձաննին (որ այժմ Բարիդի Լուվրն է) առջևը դրուի : Քրմապետը զիմադրեց ըսելով թէ Պարսից թագաւորին զործերը չեն հաւասարիր Եղիպտոսի թաղաւորին զործոց, ուստի արժանի չէ որ նախագաս դրուի : Դարէն ներեց զիմադրի քրմապետին որ հայրենասիրական ողովով վառուած կ'խօսէր :

Սաբակն, Սէլուն Բ. — Ռամնէսի փառաւոր իշխանութենէ ետք՝ Եղիպտոս հետզէտէ իր առջի մեծութիւնը կ'կորուսէ : Ուրիշ թագաւորական ցեղեր իրարու կ'յաջորդեն կամ մի և նոյն ժամանակ կ'իշխեն, անդ օտար թշնամիներ կ'յարձակին այնպէս որ շփոթութիւնն ու անիշխանութիւնը հետզէտէ կ'աւելնան : Մէնէ դրան

թագաւորին օրով երբայեցիք Եղիպտոսէն կ'ելնեն, Եթովպացիք անդ կ'արշաւեն և յիսուն տարի կ'կառավարեն : Այն ատեն ապատասէր Եղիպտոսացիք գէպ՝ ի Տելլա կ'քաշուին : Սէլուն Բ. Հէֆէսուունի քրմապետը Սաբակն Եթովպացի թագաւորը կ'հալածէ, և նորա տեղը կ'անցնի : Սեթոսի մահուանէ ետք՝ Եղիպտոս բոլորովին անիշխան կ'մնայ և սոսկալի անկարգութիւններ կ'պատահին :

Տասն երիւու էշեանեւ . — Այս չարեաց վերջ տալու համար տասն երկու իշխանիք Եղիպտոսն իրենց մէջ բաժնեցին և բաւական ժամանակ համաձայնութեամբ երկիրը կառավարեցին : Իրենց միութեան յիշատակ մը թողլու համար Լաբէւրնինը շնչնեցին Մերիսեան լճին մօտ :

Հերոդոտոս յայն պատմիչն դրածին նայելով՝ պատղամ ելեր եր այն ատեն թէ ով որ պղնձէ զաւաթով զինի նուիրէ զից՝ բոլոր Եղիպտոսի պիտի տիրանայ : Այս գուշակութիւնը կատարուեր է : Վասն զի տասն երկու իշխանները հանդիսի մ'օր Հէփէստոսի տաճարը գումարուեր էին որ զինի նուիրեն . զաւամ մը պատկելով իշխաններէն մին՝ Փսամետիքու՝ իր զլսէն կ'հանէ պղնձէ սաղաւարտն և իր նուիրմանը կ'ընէ : Այս զործը միւս իշխանաց ուշագրութիւնը կ'գրաւէ և իրենց միաքը կ'ձգէ պատղամը : Ուստի ամենը կ'միանան Փսամետիքոսի դէպ և խոյս տալու կ'ստիպեն : Այս անբաղդ իշխանը Տելլայի Տահիճներուն մէջ կ'քաշուի և պատեհ ժամանակի կ'սպասէ որ անոնցմէ վրէժը լուծէ :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Փասամերիքուն քննու Պարսից Դիրապետութիւնը :

(670—525)

Փասամերիքուն . — Նոր պատգամ մը ծանուցիր էր՝ թէ այս տարալիր իշխանը վերստին թաղաւոր պիտի լինէր պղնձէ մարդոց ձեռօք : Այս դուշակութիւնը կերպով մը կատարու եցաւ : Օր մը Փասամերիքուն ծովափը շրջելու ատեն՝ պղնձէ զբահներ հազար յանիացի ծովահններ տեսաւ որ քիչ մը հեռու ցամակն ելան : Այս յանիացի բաղդախնդիրները սիրով ընդունեց Փասամերիքուն և իր ծառայութեան առնլով՝ դումարուակ մը կազմեց և անով բոլոր Եղիպատոսի տիւքեց :

Փասամերիքուն որ 26՛ հարստութիւնն ակաւ , երկար ու փառաւոր իշխանութիւն մը վարեց : Եղիպատոսի գուներն օտարականաց բացաւ , Արաբիայէն , Կարիայէն և Յնիայէն զաղթականներ բերել տուաւ և Պելուսիոնի մօմ՝ Աստրադար քաղաքը բնակեցուց և շատերը մեծ պաշտօններու հացաց : Սակայն Եղիպատոսի զինուորական դասը սաստիկ զայրանալով թագաւորին օտարասիրութեան դէմ , խօսքը մէկ ըրին և 200 000 հոգի իրենց հայրենի երկիրը թողլով Եթովլիքա զայրին : Փասամերիքուն յորդորեց որ չգաղթեն , բայց նոքա մտիկ չըրին : Այս տարալիր թիւնն Եղիպատոս ակարայցուց և վերջին կործան մանամնը պատճառ եղաւ : Այն ատեն թաղաւորն օտարականաց հետ աւելի սերտիւ

կապուեցաւ և որպէս զի կրօնական դասն ալ իրմէ չգմտի , մեհեաններուն առատ պարզեներ բաշխեց և քրմաց սիրտը շահցեցաւ :

Փասամերիքուն տէրութիւնը բարեկարգեց , նորա եկամուտներն աւելցուց , վաճառականութիւնը քաջալերեց և Յունաստանի ու Փիւնիկէի հետ յարաբերութիւնն աւելցուց : Այսպէս Եղիպատոս՝ որ առաջ օտարայց թշնամի էր և չէր կամեր նոցա հետ հաղորդակցիլ սկսաւ այս թաղաւորին շնորհիւ , զայնս հիւրասիրութեամբ ընդունիլ և այլ և այլ տեղ վաճառանոցներ հաստատել :

Աերջէն Փասամերիքուն Ասորիքն ու Փիւնիկէն նուաճելու մոտք՝ Ասիա արշատեց , Սիրիոյ Ապոլլոն քաղաքը պաշարեց և քսան ինն տարիէն ետքը միայն կարող եղաւ առնլու :

ՆԵՐԱՆՆՈՒՆ . — Փասամերիքունի որդիին ՆԵՐԱՆՆՈՒՆ (616) իր հօրը յաջորդելով նորա զարձը շարունակեց : ՄԵՐԵՐՈՒ մօմ՝ Ասորուց և Երբայեցուց դէմ մեծ յաղթութիւն մը տարաւ և բալոր Սիրիոյ տիրեց : Բայց նոյն միջոցին Բաբելոնացու Նաբուգոզոնոսոր Բ.ի կինուց դէմ չկըրնալով կենալ Ներաննու , Կիրէնանի (Կարկեմիշ) մօմ յաղթուելով իր բոլոր առած երկիրները կորոյս : Սակայն Ներաննու իր հօրը պէս՝ վաճառականութիւնը ծաղկեցնելու ետեէ եղաւ : Միծ խորհուրդ մ' Երկինեց , զոր մեր օրերը Պ. Աէսէպս զաղղիացին ՚ի կատար պիտի հանէր , այսինքն կարմիր ծովը Ներաննու հետ ջրանցքով մը կցել և առետրական հաղորդակցութեան մեծ դուռ մը բանալ : Գործաւորներ ձեռնար-

կութիւնը սկսան բութառովէ քաղքէն և ջրանցքը
փորելու ատեն 120,000 հոգի կորան : Բայց
Նեքաւով այս ահազին դործը շշարունակեց ,
վասն զի պատղամ մը իրեն յայտներ էր թէ
բարբարուներու համար կ'բանար այդ ձամբան :

Այն ատեն Նեքաւով իր ուշադրութիւնն ու-
ժիշ կողմ դարձուց : Մեծ նաւասորմիլ մը պատ-
րաստել տալով՝ Փինիկեցին նաւորդներու յանձ-
նեց որ Ափրիկէի շրջանն ընեն : Այս անվեհեր
նաւալարներն երեք տարուան մէջ՝ առանց նաւ-
ողեղին՝ կատարեցին ողեղորութիւն մ'որ քսան
դար եաք՝ Աստծո ոռ Կամա՝ Բորթուկէ զցի նա-
ւապետին անունն անմահ պիտի ընէր : Փինի-
կեցի նաւատորմը՝ Կարմիր ծովէն ենելով՝ Ա-
սիոյ արևելքան եղեցքը քերեց , Բարեյուայ
դլիէն անցաւ և Ափրիկէի արևմտեան ծովերէն
հասաւ Հերակլէան կանչնելը (Ճիպրալթարի նե-
ղուցը) : Ապա Միջերկրականի ծովափունքը բոնե-
լով՝ վերադարձաւ Նեղոսի բերանը : Սակայն
այս ուղեղորութիւնը մեծ արդիւնք մը չունեցաւ :
Անտարակոյս Փինիկեցիք իրենց առեւտրական
շահուն համար շատ բան ծածկեցին , և ահ-
ուելի առասպելներ պատմեցին այն նոր երկիր-
ներուն վրայ : Ուստի Փինիկեցւոց ըրած զիւ-
տերն ու զաղսները կորան իրենց հետ :

Առբէն , Ամառէն . — Իր հօրը Փռահութէնէ
յաջորդելով՝ Առբէն , որ Վահրէն ալ կ'ըսուի ,
իր նախնեաց ընթացքը շարունակեց (393) : Ինք
բնութեամբ դռուող , մեծ արան ու պատերազմա-
սէր էր : Ի սկզբան քանի մը յաղթութիւններ
տարաւ , մեծ նաւատորմիլ մը հանեց և Կիուս

ու Սէրէն կղզմներուն տիրելով՝ ահ ու սարսափ
ձկեց բոլոր Փինիկէի մէջ : Այս իշխանն էր որ
Սեղեկիա՝ Յութայի թագաւորին՝ օղնութեան
դնաց՝ Նաբուգոդոնոսորին դէմ , բայց անօդուտ
տեղը : Երբ Եղիպատոս գարձաւ՝ բանակ մ'ու-
ղարկեց Կիւրենացի յունաց դէմ որ Ափրիկէի
հիւսիսացին ծովեղերբը կ'ընակէին և իրմէ ա-
պրստամբեր էին : Բայց բանակը զլուխ քաշեց
և զէնքը Վափրէսի դէմ դարձուց : Այն ատեն
Ամասիս անուն զօրավարը՝ որ երբեմն հովիւ-
մ'էր , թագաւորին կողմէ զրկուեցաւ որ իուո-
վութիւնը դագրեցընէ : Ամասիս ապստամբաց
մօտ զնաց և երբ կ'յորդորէր որ հաւատարմու-
թեան դառնան , եղիպատացի մ'որ նորա ետեր
կեցեր էր , սաղաւարտ մը դրաւ նորա զլուխը՝
պառաղով . — «Թո՞ղ այս լինի մեղ թագաւոր» :
Ամասիս այս առաջարկութիւնն ընդունեց և ա-
պրստամբ բանակին զլուխն անցնելով՝ Վափրէ-
սի վրայ քալեց , որ իր վարձկան զինուորներով
զինք դիմաւորելու կ'զար : Երկու բանակները
Մելիթիսի մօտ կ'զարնուին . Վափրէս կ'յաղ-
թուի և բնուուելով՝ Սպահի արքայական պալա-
տը կ'բանտարկուի . բայց եղիպատացիք՝ որ այս
թագաւորին դէմ բարկացեր էին՝ օտարականաց
շատ երես տալուն համար , պահանջեցին որ Ա-
մասիս զանի իրենց ձեռքը յանձնէ : Ամասիս
ստիպուեցաւ կատարել նոցա ինդիրն , և ինդչ
Վափրէս խեղամահ մեռաւ :

Ամասիս գուեհիկ ցեղէ էր և հետզէտէ բարձր
աստիճանի համար էր : Ուստի եղիպատացիք զինք
չէին յարդեր : Բայց նա իր խոհական և հնա-
բամբական վարմանքով յաջուեցաւ նոցա համա-

բումը շահիւ: Կ'ըսեն թէ իր ոտիի կոնքն արձան թափել տուաւ և իբրև նոր աստուած մը հրապարակը կանդնեցուց: Եղիսկտացիք սկսան զայն պաշտել: Ամասիս հանդիսի մ'օր ինքնինքն այս արձանին հետ բաղդատեց որ առաջ թէ և կոնք մ'էր, բաւ այլ հիմակ աստուծոյ մի արձան լինելուն՝ ամնուն յարդանաց արժանի գարձեր էր, ինչպէս որ ինքն ալ իր գուեհիկ ծաղման չնայելով՝ արժանի էր ակնածութեան իր արքայական աստիճանին պատճառաւ:

Այս Ճարտար թագաւորին իշխանութեան յամանակ Եղիսկտոս մծ բարօրութիւն վայելց: Հերոդոսոս կ'ըսէ թէ երբէք այնքան չէր ծալշկած այս երկիրը թէ արդասաւորութեան և թէ հարստութեան կողմէ. մինչև քսան հազար քառակ և զիւղ կային: Ամասիս յատկապէն Յոյները պաշտպանեց, թոյլ տուաւ նոյցա որ հասկրատ բնակին, իրենց կրօնն աղատօրէն դաւանին և տաճարներ կանգնեն: Ինքն ալ Եղիսկտոսն իր մեծաշլնութեամբը զարդարեց, փառաւոր չէնքեր ու մարդակերպ Սինաւէր կանգնել տուաւ: Սայիս քաղաքն՝ որ իր բնիկ երկիրն էր, այլ և այլ չէնքերով չոխացուց: Անոր մէջ առ նէկի դիցուհին (Աթենաս, ըստ յունաց) շինել տուած տաճարը, նոյնպէս Մեծիսի մէջ առ Իսէտ (Իեմետը) մեջեանն, և Էւկանատինի միակտոր քարէ մատուռ՝ հոյակապ, սրանչելի շէնքեր են որ ցոյց կ'տան թէ Ամասիսի ժամանակ արուեսաներն իրենց նախնի շքերութիւնը կորուսած չէին:

Փառակնէն. — Ամասիս՝ Լիւկիոյ Կրէսոս թագաւորին օգնելով՝ Պարսից Կիւրոս թագաւորին զայրոյթը շարժեր էր, այնպէս որ իր մահօւանէ ետք՝ երբ որդին Փոստնէն զահն ելաւ, կամ չէնք, Կիւրոսի որդին, վրէժ լոձելու համար Եղիսկտոս արջաւեց, զայն նուածնեց և Փոստնէնը սպաննել տուաւ: Այսպէս վերջացաւ եղիսկտոսիական հին և փառաւոր պետութիւնը (325)

ԾՐԱԳԻՐ ԱՇԽԵՐՀԱԳՐԱԿԱՆ

ԵՀԻՊԵՏՈՒ. — Սահմանն է հիւսիսէն՝ Միջերկրական ծովը՝ արևելքէն՝ Ապառած Արարիս և Կարմիր ծովը. հարաւեն՝ Եթովովիսան. արևմուտքէն՝ Լիւթան: Բայց բուն Եղիսկտոս հոնիք մ'է երկու լեռներու մէջ սեղմածած՝ արտաքինուած ու լիբանաւած:

Կելլուը՝ Ակրոպինան Ավրիկէն կ'ինչն, Մերունքէ թետակղին կ'յօրինէ, Ենաւուոյէն կ'անցնի, և Ակենք քաղցքին սահանգէն կ'մանէ Եղիսկտոս, որ երեք մաս կ'բաժնուեր. ա) Ալեքսանդրութեան կամ թէ թէպատիք, գլխաւոր քաղաքը. — Թէքէ, հէլենանքէն, Ակենք, Կրտոս. բ) Միջնութեան կամ Տելուտ, որ Կեղսոսի երկու թէկետէն եռանդիւնի ձևանալուն՝ սպասէն կ'կոչուի յունաց նամացն տառէն. գ. դ. Հելենապէսի կամ Արէն, որ վերըն Ալեքսանդրիս քաղաքը հիմնուելով՝ ընկաւ, պէտու, Սայիս, Բաբուռիտիս, Եսուսիրայ, Տանիս և այլն:

ԵԳԻՊԵՏԱՑՈՅՑ ԿՐՈՆ. — Հին արձանագիրներու նայելով՝ առաջին Եղիսկտոսիք մէկ Աստուած կ'գաւառնէին, առեւեսանէլ, ինչնուոյն և առարիւ առենանչն. բայց վերջէն՝ միւս ժողովորոց պէս կռապաշտութեան մէջ ըն-

իսան և բազմաթիւ աստուածներ պաշտեցին։ Երկու կրօն կար Եգիստոսի մէջ։ Քրիմաց կրօն՝ որ առեղական ու ընութեան երեսոյ պաշտօնն էր և հասարակ մարդոց անհանձն կրօներ, ու ժողովրդեան կրօնն, որ շատ կոչու էր և մինչև կինդանիներ ու բոյսեր իրեւ աստուածներ կ'ընդունէր (յա—բարութիւն)։

Գլուխութիւն։ — Դից մէջ ամենէն երեւելիներն էին Օսիրիս*, Արեւ և Կեղծափ աստուածը, որ բարդ երկիրը կ'արգասաւորէր, իր քայլն իսէն։ Լուսին և Եղիսաւոսի հոգին դիցուհին, երկուքն ալ մարդկային ազդի առաջն բարեբարները կ'համարուեն։ Տերէն՝ Օսիրիսի նեղայըն ու ասանիւը, զոր աչուելի տպեղ դէքըով կ'ներկայացրմէին վասն զի անապատի ու ծովու աստուածն էր, չարութեան սպին, զողերու և թափառական աւազակներու պաշտպանը, որոնք մըշտ Կեղոսի հովուն հարուստ հնաց թշնամի էին։ Վերջապէս Օսիրիսի ու Իսիսի որդին՝ Հորու՝ որ իր հօրը գրեժը լուծեց և որ պարկելու մարդոց պաշտպանն էր։

Այս աստուածներն ու ուրիշ կիսպատի մէջ կ'պաշտուեն։ բայց կային այնպիսիներ ալ որ այլ և այլ քաղաքներու մէջ միայն պաշտօն ունեին, ինչպէս Ամուս՝ ի թէրէքէ, Փետհ (կրակ)՝ ի Մեծմիս, Հուռ կամ Փետհ (Ըստ)՝ ի Հելլուուլս, «Եկէն» (իմաստութիւն)՝ ի Սացիս և այլն։

Աւելորդապուլութիւն։ — Ժողովրդային կրօնը շատ պյանդակ աւելորդապաշտութիւններ կ'պարունակէր։ Եղիսաւոցիք ու միայն բաւական չէին համարեր մի քանի աստուածոց իրեւ Նշանակ նկատել քանի մը կինդանիներ, այլ և ասանաց առջև երկարագութիւն կ'ընէին ու կը պաշտէն։ ինչպէս եղ, շահէն, կատու, շաւն, խոյ, ցեծ, կորորդիլս և սորու թշնամին հիւրմ և այլն, ունաց պաշտօն կ'մաստուցանէն՝ վասն զի օգտակար և սպասարկու կինդանիներ էին, ունաց ալ ահի կ'երկրապատէին։

Եղիսաւոցիք գլխաւրապէս կ'մեծարէին Կեղութը, որու վրայ երգում կ'ընէին, խառնաւըն, որոց մէկ մէծ մասը տէրութեան գանձն կ'երերակուեն, և կատու մը սպաս-

* Ծոյնը՝ եկիպուական եւ իրենց զից մէջ նմանութիւն տեսնելով՝ յունական անոն մը յատկացրին ամէն մէկ եղիստուական աստուածոյ։ ինչպէս՝ Օսիրիսը գունու անուանեցին, Պամարը՝ Գելմուր, Ամմանն՝ Արմայուր, Ջիթահը՝ Հելմուրուս, Թաոթը՝ Հելմուր, Հորուսը՝ Ապուլուս և այլն։

նողին պատիքը մահ էր։ Բնդշանուր բարեկալաշտութեան առարկայ մէկը մանաւանդ Ապէտ Խով, որ սեպացն պարտ էր լինել և ճակատին զայ սպիտակ նշան մ'ունենաւ։ Երբ Ապէտ մեռնէր բորբ Եգիստոս սուզ կ'ընէր մինչեւ որ քութերը նոր մը դանէին։ այն ատեն եօթն օր շալունակ հանդէս կ'կասարէն ՚ի պատի Ապիսի՝ որ իրեն յատուկ փառաւոր մեհեաններ ունէր և սպասարորդ քութեր՝ որ նորա անտամի պատզամներ կ'արձակէին։

Մերժելոց դարձուութիւն։ — Եղիսաւոցիք հոգւոյ անմահութեան կ'հաւասարին։ կ'ըսէին թէ՛ երբ հոգին դժոխք կ'համենէր քառասուն երկու գառաւորաց աստիճանի մը կը ներկայաւոր, որու Օսիրիս կ'նախազահէր։ Անդ ի վակէն բարեւ և չար դժոխքը զորաց իր շահէնի գլուխ։ կը դիտէր թէ նժաւան որ կողմը պիտի ծոյն է թէ՛ հոգին արդար դանուեր՝ երկին կ'վերանար, իսկ եթէ մեղապար, եր զմուսեալ մարմինը կ'զգենուր և երկիրը կ'սեռուէր, ուր այլ և այլ կենդանիներու փրեն պիտի անցնէր և բերարու տարմենք բուլըրի լէն ետք, նորէն Օսիրիսի արդարութեան ատեանը պիտի ներկայանար (հանդիպութիւն)։

Կայնակւ եղիսաւոցիք կ'գատէին մեռնէները։ Խօթանասուն օր պէտք եղած պատրաստութիւններն ընեւէն և դիմէր զնամենէն ետք (հանդիպութիւն)։ Երկու կ'զանքն եղած զնամենէր մասիկ ընեւլով՝ դիակը գերեզման զնեւլու կամ պարսաները մասիկ ընեւլով՝ դիակը գերեզման զնեւլու գինու կ'տրուէր։ Եթէ մեռնուր թագաւոր լինէր՝ պիտ գատաստան աւելի շքեզութեամբ կ'կատարուէր։ Երբ արժանի գատառէր պատուադիր թաղման՝ քութերը՝ դիմէր կամ հադան հանդէսով կ'սեռնէն ի բարձրացնեցին, որ լերան մէջ փորուած միաշար սրահներ էին՝ Կեղոսի հովանին աբեմնետն կողմը։

Ըստեաւան վէճու։ — Եղիսաւուական ժողովուրդը հինգ դաս կ'բաժնուէր, գուրգուրը, գինուունէրն, երբերութիւններն ու հանդէսուէր։

Քութերը տեսակ մը բարեւ և զօրաւոր պանուագետական գաս կ'կազմէին։ աէրու թէեան և մէշնական նշանաւոր պաշտօնուէրը կ'վարեին, և ժամանակին զիտուններն էին։ Երկրին մէկ երրորդ մասն իրենց յատուկ սեպէականութիւնն և ամեն տուրե պատը էր։

Զինաբէնէրն ալ հարաւու զայ մ'էին և երկրին միւս երրորդ մասին աէրը։ Այս զայէն էին թագաւորներն, որոց կ'պատկանէր երկրին մնացած մասը, և շատ անդամ

Քրիմաց հետ կ'ամքառելին՝ իշխանութեան համար։ Խւրա-
քանչխւը զինուորի հողական բաժինն էր տասն երկու ար-
տավար։

իսկ միւս երեք գամերը ժողովուրդը կ'կազմէին։ Եթէ շահնշաներն՝ չափաւոր հասյթ՝ մը տալով՝ աղնուականաց հողերը կ'մշակէին։ Հարուստ հունձք, առաստ արջաներ ունեն և իրենց արտերը պարտէղի կ'նմանէին։ Հայերն այնքան յարդ չունենին Հայքասներու տիրապետութիւնը ամառը յիշաւանենք ձագա լինելուն։ Խակ հործութէ ու առաւելութէ ունենէր չափաւոր և հնարագէտ չեն, բայց աւագանինեն և թագաւորաց իշխանութեան ներքեւ անսակ մը ասրուկներ էին։

թմէւ եւ կրիպտացոց ընկերական վիճակը յառաջ դայցած էր, սակայն ժողովրդեան մեծ մասն ստոր և անարդ կացութեան մէջ էր : Գիտութեան, լշանանք թիւն և արտօնութիւններ միայն բարձական ու լշանանքնեան մարդու յաստոկ էին. սահման ու օրենք մը չկար որ հարասահացար բութենէ ու բանութենէ զիրենք ազատէ : Զօրաւորը՝ տիկարը կ'կիշելքէր, և թշրւապին տառապանաց լուրջովին անզգայ էր : Գիրութիւնը կամ բանի ծառայութենն ընդհանուր կանոն մ'էր : Գիրեք կ'սոսի ին որ իր ազատութեան յանիքաւէ կ'զգուի, և իր կանց Հակառակ ուրիշին ծառան կ'դառնայ: Հին ատեն թագաւորներ և պետք իսիդ չէին ններ բազմաթիւ մարդիկ զերի վարելու. պատերազմի մէջ բանուած մարդիկ կերութեան կը դաստապարուտէին . իրենց պարաբռք գնարելու անկարութեան մարդիկ ստրուկի պէս կ'ծախուեն, և երբեմն, սովոր ատեն, ծնողը իրենց զաւակներն անզգամ տակեստի փախարէն կ'ասցին: Այս պատճառաւ՝ Եղիպատմի հօր թագաւորները կարող էին օտար կամ ընիկ ստրուկներ զանազան աշխատառ ենաց զորքածել, ինչպէս ջրանովել փոքրէ, ահազին բարոզ հաստոններ կտել տալ մեծամած ջնուածոց համար, այսպէս որ շատ անզամ բանուորները չգիմանարուի կ'մեռնէն:

Կառավարութեան. — Աստուածաբետական էր. փարաւան՝ քրմաց և քանի մը զօրականաց գահին մ'ուներ, որու խրցրդով բալըր Եղիպատոս կ'կառավարէր. իր կողմէ կ'ուղարկէր կուսականեր զվարար նահանգներն, և սոքա ևս դասաներու վրայ ստորին պաշտօնատարներ կը կարգին: Ամեն արեւելքան կառավարութեան միաբետական սկզբանեան էր այս որով վեհապեսն իր ընտրած պաշտօնելից իշխանութիւնը կ'բարձրէր, բայց ամեն բանի բացարձակ տէրն էր:

Քաղաքանութիւնը. — Գրականութիւնը, զիսութիւններն ու արուեստները վաղուց մշակուած էին Կեղոսի ափունքը. կ'երեկի թէ՝ ուրիշ պղգաց պէս՝ եղիպատականը բարբարոսական ժամանակ չէ ունեցած այլ ունդիչաց իր ստացած գիտելիքը զարգացնելու ենթէ եղած է: Այսպէս հանակի ու սորա, Կդ Հարաստութեան վերաբերող արձաններն եւ որիշ ձեռակերաններ այնպիսի կատարեալ են որ մեծ զարմանք կ'պատճառեն:

Գրաբունակիւն. — Եշիսպատացւոց դրականութիւնն ընդու
արձակ էր, և գեղ ամէն տեսակէն հասուլուսորներ կան.
պատուի թիւն, բանասահղութիւն, պատերազման ու
դամբանական երգեր. Այս գործերը տեսակ մը թշթի
վայ գրաբած էին, որ Պատիկ-ուսի կը սոսի: Պատիկը կը
շնուր էր Ա-երին—Նեղոսի ափոնդն աճող տեսակ Մ'ե-
ղէպնի ներքին նորը թշթիւն: Այս պատիկը ուսուներէն
սիցմ կ'գտնուին, սովորաբար գլանի մեռվ և մասնաւոր
տառերով զրուած են, որ չառ տարբեր են յիշառակա-
րանաց տառերէն:

Եշիսամացիք երեք կերպ տառելու ունեն։ Ո՞բադրութ
կամ Ձենեաւուն, որ մաս և ուսմաւուն։ Սրբություն առա-
ւելը (Առելիքական քանողականեր) զրոյ առաջնան անգամ-
գաղիքար գիտառնը՝ Հանոնական կարգալուն յաջողեցաւ, ին-
քոր նի թալին և աննիմիթ քանելու ունկարներ են։ 8—900
հատ կամ Նսկրեալ առարիխն չեն նշանակելու այս տա-
ռելը, այլ այս առարիխնեն առաջ եկած գաղափար մը։
Օրինակի համար, գիբը նշանակելու համար կատամար-
մը, կամ զրելու եզէդն մը կ'գրում են, չափեամի գե-
տուրներն արդարութիւն կ'նշանակեն, վաս ըլ կարձեկի-
թէ այդ գետուրները սոյն երկայսութիւնն ունեն, բա-
զէն աստած, առի ճն ոյժ ։ Այս զիբու որ հաւասորէն
բոլոր եղիպատուց հասկանալի էր յիշաւակարաններու
մաս կ'սովուածուէն մային։

զար զ գործառնութեան բարձր է այս պահին:

զիւրանիւն-։ — Եդիկոսացիք գիտով թեանց մձ բառ
ւական վարժ է են։ Արևմեան աղջերը նաց պարտաւոր
էն Յալիսական ըսուած տարին, սց է 365 կ/օր։ Քաջ
անդեպակ է ին երկարաւափով թեան, կամ լու ևս արտաչա-
փու թեան, զամ զի սց զիտով եան աղէաք ունի ին Կե-

զոսի շրջանաւոր ողողութեաներէ ետև արտօքը չափելու ու
իրագանչակիրին սեպհականութեանը որոշելու Քիչու-
թեան՝ Եթէ ճանօն էք, անսարապակու մանկութեան մէջ
էք. թէեւ Հերոդոտոս կ'ըստ թէ մարմնոց այլ և այլ մա-
սերուն համար յաստու բժիշկներ կախին:

Արքաւուուր. — Կեղոսի Հօվանն մէջ գտնուած փառաւ սր աւերակները ցայց կ'ասն որ եզիփալսացիք կանուխ վարժեն ճարտարապետութենաւ, + առաջուուն է ոչ ճարտարապետուած և նկարչութենած մէջ: Իրենց ըսլըր յեշամականաներն հսկայաւ կան և փառաշեղ կերպարան մ'ունին որ պահանջարում կը պատճառեն: բայց այս յաղթ ճարտարապետութենան, որ դորին ու կլիմացին բնութեան հետ կյարմարի, վայելչութենեն և նշարհէն գորիք կ'երեքի երը յունաց ու հօսմայեցոց աւելի կատարուն ճարտարապետութեան հետ բազգառուուի:

**Սբագիկի բրանց ստորոտը կ'գտնուի Հսկայաձև սէկնչու
մը՝ որ մասամբ աւաղին ներքեւ թաղուած է։ Ասոկ զլուխն
ինն կանգուն է։ Վկարձուել թէ սփմբաները փարաւու-
ներուն պատկերներն են երեւ մարդու զլուխ մ'ունին։ Խոկ
լուխը զլուխ եղաներն Ասուուծոյ մէկ պատկերը կ'ներ-
կարագունեն։**

Պիրամիդներուն չափ նշանաւոր էր և լուսի-բէնինունը:
Պատերով շրջապատեալ տասն երկու գաւիթ տնէր, բու-
լորը մէկ շրջապատի մէջ պարունակուած: Ավենեակները
կրկնապատիկ են. հազար չինք հարիւր հատ սարեր-
կրեայ էին, չազար չինք հարիւր ալ սոյա վրայ: Առ
կարծուի թէ Լարիւրինթոսը կրօնակնան համդիսաւոր
պարագաներու ատեն եղիսաւացւոց ընդհանուր ժողովնե-
ռուն սահմանած էր:

Արմենական իրենց ձևով՝ սիրամիտներուն կնմանին. միակառուր կարմիր կրանիթէ յիշատակաբաններ են։ Առ-

վորաբար քսան հինգեւն ցերեսուն կանգուն բարձրութիւն
ունէին և աղեղնաձև կյանքէին:

զիւլաներն (աւագ գտան) տեսակ մը յաղթական կամաբներ էին կամ նկարառն ու քանդակարած հակապաճե գուներ . ամբողջ շատ էին որ թերեւն Հարթբրդի եա քաղաք կոչուեցաւ: Այսօր թերեւի տեղ կ'եւըն միայն ինձ գիւղ որոց երկուքը մնաւանդ, Գործնաժ և Լուսա- աց երկեւի են:

Կային նաև Հօվկայագործ Գուղուար որչաներ, ինչպես
ՄՇեմանէ արձաններն 61 սոսք բարձր, և որոց մին' արջա-
լցոն ելնելուն, կ'ըսեն թէ ներդրտաշնակ հայներ կ'հաներ:

Աւանդութեան մէկն. — Թէէւ վաճառաշահ երկիր
մ'էր Եզիքսոս, սախյն Եղիպատացիք վաճառական ժողով
գլուխ մը էին: Իբրև նախապաշարմունքն օտարականաց
կ'եմ քր ներեր որ նոց Տևոյ յարաբերութիւն հաս-
տատեն: Արթիր ծովով նաւարից թիւն անհամ ուրիշ
ազգաց ճափած էին: Սակայն այլ և այլ ճարտարական վա-
ճառաք և մանաւանդ ցորեան և պատիւրոս զներու Համար
Ասիայէն Կարաւաններ կ'ոգյին Եղիքսոս: Յամացիցին
առաստունք չին ստեղծ ուղարկել կարելի էր,
ուղան որ իբրաւամի՛ առաջապի առաջը կ'կուռեր, և որ
մ'ծ գեր կ'սազար նախնին քաջարակիթուն թիւն մէջ:

ՓԻՒՆԻԿԵՑԻՔ

ԳԼՈՒԽ ԺԳ.

(1640—333)

Հերած, ոլիքանվոն . — Փիւնիկէ թէև փոքրիկ
աշխարհ մ'էր, մեծ կարեռութիւն ստացաւ
Հին աէրութեանց մէջ իր զիբքով և վաճառա-
կանութեամբ : Այս երկրին պատմութիւնը շատ
մութ և հաղիւ թէ քանի մը թաղաւորները
ծանօթ են : Փիւնիկեցիք, որ Աբանանու ստո-
րոտը կ'բնակէին՝ քանանացիք էին, լեզուով
Սեմական և ցեղով՝ քամեան : Իրենց թաղաւո-
րաց մէջ գլխաւորապէս Հերած և ոլիքանվոն կը
յիշուին : Հիբրամ (1000) Դաւթի և Սողոմոնի
հետ զաշն դրաւ : Հրէաստանէն կ'ընդունէր եղ,
զինի, ցորեան, և փսխարէն Յուղայի թաղա-
ւորին նաւասանիներ կ'զրկէր Արարական ծոցը
նաւարկելու, ատաղձագործներ և զանազան նիւ-
թեր Երուսաղէմի անուանի տաճարը կառոցաւ-
նելու համար : Կ'երեի թէ Սողոմոն և Հիբրամ
իրարու հետ կ'թլթակցէին :

Տէրո՞ քաղաքը վերջէն Ասորեստանցւոյ Սար-
կոն թագաւորին յարձակմանց դիմագրեց : Պիդ-
մալիսոնի ժամանակ՝ իր Եղիսու կամ Դէրէ քայլը՝
խոյս տալով իր Եղիսորը քովէն որ իր ամուսինը
սպամնել տուեր էր, Ափրիկէի հիւսիսային ե-
զերքն ելաւ և այն տեղ Հիմնեց Քարչեղոն՝ քա-

զաքը : Վերջէն Կարուղուոնոսոր, Բարելոնի
թաղաւորը՝ Տիւրոս քաղաքը պաշարելով առաւ-
ե բոլոր Փիւնիկէի տիրեց : Այս ատեն մի շատ
հարուստ ընտանիքներ Քարքերոն զաղթեցին :
Տիւրոս՝ իր անկախութիւնը կորուսելով՝ օր բատ
օրէ տկարացաւ, և երբ Մեծն Ալէքսանդր ՀՅՅին
քաղաքը պաշարելով առաւ՝ Փիւնիկէ իր նախ-
կին կարեւորութիւնը բոլորովին կորոյս և վերս-
տին իր անկախութիւնը չդտաւ :

Կառարիութիւն . — Որովհետեւ Փիւնիկեցիք՝
լեռնոտ, նեղ ու ծովեցրեայ հողի մը վրայ կը
բնակէին՝ բնականապէս ստիպուցցան ինդղինք-
նին նաւարկութեան տալ՝ և առուտորի համար
ծովերու վրայ նաւարկել ծովափունքը քերե-
լով և աստղերն իրենց առաջնորդ բռնելով :
Ուստի Հին աղջաց մէջ առաջին Ճարպիկ նաւ-
արկու ժողովուրդ մ'եղան և Հին աշխարհի ա-
մէն կողմերը տարածուեցան որպէս զի ժողո-
վրդոց մէջ յարաբերութիւն հաստատեն և ի-
րենց ապրանքը ծախելով հարստանան :

Ճարպաբութիւն . — Փիւնիկեցիք օտար ճաղո-
վրդոց հետ իրենց տուրեաւն առաջ տանելու
մտօք՝ սկսան անդուլ գործունէութեամբ զանա-
զան վաճառք Ճարել, Ճարտարութիւն ու ա-
րուեստ իրենց մէջ ծաղկեցուցին և զանազան
դիւտեր ըրին : Ընտիր զործիներ և ամէն տե-
սակ փղոսկրե ու ոսկեղէն զարդեր պատրաստե-
ցին : Կոքա հնարեցին նաև դրամն, և շահուա-

ու կը այս կանոնաւոր դրութիւնն մը : « Նպաստէս այբ
ու բէնը զտան , զոր՝ ըստ երևոյթին՝ Եղիպտոս
սէն առած էին :

Ի վաղոց մեծ համբաւ ունէին ո՞րո՞նոկան
զգեստները , զոր բնակիչները բուրգով կամ վլու-
շով կ'զորձէին և յետին ծայր բարակ և մեծա-
զին էին . բայց ամենէն նշանաւոր դիւտը՝ ծէ-
քանի նէրն էր : Այս ատրադոյն ներկը ծովա-
յին ժողովարիներու մարմնոյն մէջ կ'զանուի :
Սորա յատկութիւնը հովիւ մը դիսուածով ե-
րեան հանեց , երբ օր մը ծովեզրեայ կողմեր
պտըսելու ճամանակ տեսաւ օր իր շունը խե-
ցիներ ուտելով մօրուքին մազերն սքանչելի զոյ-
ներով ներկուեր էին : Այս ներկը ծիրանին էր :
Սովորաբար Տիւրոսի զործարանները շնուած
ծիրանեղոյն կերպանները միայն թագաւորաց և
մեծամեծաց սահմանուած էին :

Կ'ըսեն թէ ազակի դիւտն ալ (թէ և եղիպ-
տացոյ արգէն ճանոթ էր) Փինիկեցիք դտած
են : Հայ բորակ զտնէլու համար Եղիպտոս դա-
ցած լինելով՝ ի դարձն Պաղեստինի մէկ հե-
ղեղատին մօտ ցամաքը կ'ելնեն իրիկուն մը որ-
պէս զի իրենց Ճաշը պատրաստեն : Կաթսոյն
տեղուորելու համար քարեր չգտնելով Փինի-
կեցիք՝ նոցա տեղ քանի մը կտոր բորակ կ'զնեն
և ապա կրակը կ'վտան . բորակը ջերմութենէ
հալելով մոխրին և ծովեզրին աւաղին հետ կը
խառնուի և կարծր ու փայլուն կոյտ մը կ'զառ-
նայ մեր ապակիին նման :

Գաղթականութիւնն , արաւուուք . — Փինիկե-
ցիք թէ ցամաքի և թէ ծովու Ճամբով առուս

տուր կ'ընէին : Տիւրոսի վաճառականներն ան-
դուլ յարաբերութիւնն մէջ էին Ասիոյ և Ափ-
րիկէի հետ՝ ուր իրենց կարաւանները կ'երթեւ-
կէին : Խոկ նաւերով հեռաւոր և յանդու զն ճառ-
բորդութիւններ կ'ընէին դէպ 'ի Արաբիա , Ե-
թովլիխա , Ճնդկաստան : Արևմտեան կողմէն՝ ի-
րենց նաւերը Միջերկարկան ծովան եղբեքը կը
շրջէին , ամէն տեղ դադթականներ հաստատե-
լով , որ իրենց համար վաճառատեղիններ կ'գառ-
նային : Նախ Կիպրոս կղզին ոսք զրին , ապա
Միջերկարկանի դլաւուր կղզիններն և Ափրիկէի
հիւսիսային եղբեքն , և 'ի վերջէ Սպանիա : Ան-
կից՝ Ճիպրալթարի նեղուցէն՝ դէպ 'ի հարաւ և
հիւսիս սրանալով՝ մերթ Քանարեան կղզինները
կ'երթային , մերթ Բրիտանիան կղզինները , ուս-
կից անագ կամ գեղին սաթ կ'առնէին :

Բայց իրենց ամենէն կարենոր գաղթականու-
թիւններն Ափրիկէի և Սպանիոյ մէջ հաստա-
տուեցան : Քարթեզն , զոր 890ին հիմնեցին՝
քիչ ատենէն հին աշխարհի ծովային ամենէն
հզօր տէրութիւնը դարձաւ և բաւական ժամա-
նակ Միջերկարկանի բոլոր արեւմտեան կողմե-
րուն տիրեց և մամնաւորապէս Գորսիտայի , Սարու-
չէայի և Սէվիլյայի : Խոկ Սպանիայէն՝ Փինիկեցիք
կ'ստանային զինի , ձեթ , մեղք , բուրդ , երկաթ
և կապար : Սակայն Փինիկեցոց ընչափրու-
թիւնն ամենէն շատ զրուող բաններն էին ար-
ծաթի հանքերը : Խ սկզբան արծաթն այնքան
առատ էր իրենց երկրին մէջ որ անով ամէն տե-
սակ դորձիններ և մինչև անդամ իրենց նաւե-
րուն խարիսխները կ'շնէին :

Այս ծաղկած դադթականութիւնները դլաւ-

ւորապէս 'ի Գառչէս (Քատիքս) և 'ի Տարսիս, որ Պէդիս զետին բերանն էր, կ'զանուէին և 'ի վերջը՝ Քարքեղմացւոց իշխանութեան տակն ընկան :

ԵՐԱԳԻՐ ԱՇԽԱԲՀԱԳՐԱԿԱՆ

ՓԻՒՆԻՎԱԿ. — Այս երթիբն Միջերկրականի և Լի-
քանան լերան մէջ տեղ գտնուած անձուկ եղերքն է, 50
մղն երկանութեամբ և 10 մղն լայնութեամբ։ Իր ա-
մանէն հին քաղաքն է Արտակարս, որ Մոլիսի ժամանակէն
կ'ըլսաւ, Արտակարս, Պէտրուէն և Տէրոս, որ ամանէն նշա-
նաւորն, դաշնակցութեան կեդրոնն և ժայռի մը վրաց շի-
նուած էր։

ԿՐՏ. — Փիւնիկեցւոց կրօնն ահռելի էր։ Իրենց գլխա-
ւոր աստածն էր Բահաւ կամ Ինչ։ որ Մարտի աւ կը
կոչուէր, արևու, կենդանութեան, լուսոյ արարիւը։
Մարդկային զոհէր կ'սահմանջէր, մանաւանդ տղաք և
պատանիք։ Կուռքին թեւերը հրաշէկ տաքը ընկելով՝ զոհը
նոցա մէջ կ'նետէին քուրմերը, և աղիողորմ ձայները
չլսելու համար որինչներ և ճնծղաներ կ'հնչւեցնէին։
Առաջին դիցուհին էր Առաջիւ կամ Միւներ, որու ի սպա-
տիւ եղած հանդէսներն յետին ծայր անկարգ ու լկուի էին,

Բարժ. ըմբռախան վէճաւ. — Թէէն Փիւնիկէի ժողո-
վարքը ժիր, հնարակէս, ճարտար և հարուստ, այլ
խառասիրու, անկուշաւ և նենդամութեան կողմէ երեւելի
էր։ Ապականակիր բարք, տարապայման ճնխութիւն ու
գոռազը թիւն ունէր և անկուժի էր աղքատին դէմ։

Փիւնիկէի այլ և այլ քաղաքները մէկ երտութիւն չէին
կազմու, Ամէն մէկն իր յատուկ օրէնքն ու թագաւորն
ունէր, սակայն տեսակ մը գաշնակցութեամբ կարուած
էին որու զուի կ'կենար՝ իր կարեւորութեան համեմատ։
Միդն կամ Տիւրոս, թագաւորը բացարձակ միասկետ չէր,
աղնուականներն ու քուրմերը մէծ աղդեցութիւն ունէին։

ՊԱՇՄՈՒՅԻԹԻԻՆ ՄԵՐԱՑ

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ապրելութեան գուշա կէրուս։

(759—560 Կ. Ա.)

Մարտաց ծափուած. Ապրելութեան . — Մարք՝ Յա-
բէթի Մալայի որդուցն սերունդն էին. կ'բնա-
կէին Արեւոց Երիբը կասպից ծովուն հարա-
ւային կողմը։ Ասքա՝ Պարսից պէս՝ 'ի սկզբան
Ասորեսատանի թագաւորաց Ծին տակն էին։ Սա-
կայն երբ Ապրելութեան զօրապետը՝ Հայոց օգնու-
թեամբը՝ զլուխ քաշեց և Սարգանաբալի իշ-
խանութիւնը կործանեց, Մարք իրենց անկա-
խութիւնը ձեռք ձեցին։ Այս ժողովուրդն՝ որ
շատ արիստիրս, զործունեայ և ճարտար էր,
զատ զատ ցեղերու բածնուած էր, որոց իւրա-
քանչիւն իր աւանն ունէր և ցեղապետը կամ
դատաւորը։ Ապրակիւսին մահուանէ եաք՝ մեծ
խուովութիւններ ծաղեցան և երկրն մէջ անիշ-
խանութիւնը ափիեց։ Անզդամ մարդիկ սկսան
տկարները կեղեքել ու կողոպաէլ։ Այն ատեն
ժողովուրդն ուաք ելաւ և ուզեց որ կանոնաւոր
կառավարութիւն մը համարական է։

Դիովի . — Այս անկարգութեանց ժամանակ՝ Դիովի անուն խելացի մարդ մը կար Սարաց մէջ որ իր արդարասիրութեան համար մեծ յարդունէր : Իր զիւղին մէջ երբ վէճ մը պատահէր՝ զիւղացիք՝ փախանակ իրարու գէմ կուռելո՞ ինչպէս որ կ'կուռէին միւս զիւղերուն մէջ Դիօվիին կ'դիմէին , և այս գատաւորը նոյս գատան իրաւունքու կ'կարէր : Իր իմաստութեան համբան այնքան մեծցաւ որ Սարաստանի ամէն կողմէն նորա մօտ կ'զային և խօսքին կ'հնալզնդէին : Սակայն Դիօվիկ՝ թէե համեստութիւն կ'դասէր՝ փառասէր մարդ մ'էր . ուստի միաքը դրաւ հնարքով՝ մը Սարաց թագաւոր լինիլ : Իր գատաւորի պաշտօնէն հրամեցաւ տուաւ , ըսելով թէ՝ չկրնար իր կեանքն անյըննել ուրիշներուն զործոց պարապելով՝ մինչդեռ իրեննելն երեսի վրայ կ'թողուր : Այն ատեն նորէն շատ չարիք պատահեցան : Իմաստուն մարդիկ խօրհուրդ ըրին և գային ժողովրդեան կողմէ Դիօվին աղաչեցին որ իրենց թագաւոր լինի : Դիօվիկ՝ նախ մերժեց՝ բայց ՚ի վերջէ թաղն ընդունեց և նորա արժանի եղաւ . վասն զի Սարաստանը զօրացուց ու ծաղկեցուց :

Ամենէն առաջ՝ Դիօվի այլ և այլ ցեղերը միացուց , քաղաք մը շինել տուաւ բլրի մը վրայ եօթնապատիկ պարիսպով , որոց ամէն մէկը տարբեր զոյն ունէր և անտանեց Եղագարան : Յետոյ Դիօվիկ ժողովուրդը նոյն պարիսպներուն մէջ փախադրեց , իրեն յատուկ թիկնապահ զօրք ասհմանեց և հրաման տուաւ որ ոչ ոք իրեն մօտենայ և նայի : Այս կարդը հաստատեց որպէս զի ժողովուրդն իրմէ երկնչի և իրեն գէմ ոչ

ոք դաւ գնէ : Դիօվիկ՝ թէե միապետ մը դարձաւ՝ բայց իր իշխանութիւնն իմաստութեամբ վարեց : Ամէն տեղ կարդ կանոն հաստատեց և տէրութիւնը ծաղկեցուց :

Փրառորդ և Կիտառը . — Դիօվիկի յաջորդեց իր որդին Փրառորդ որ՝ փառասէր ու պատերազմասէր լինելով՝ իր տէրութեան սահմաններն ընդարձակել ուղեց : Նախ Պարսից վրայ քաւեց ու նուաճեց և Սար-Պարսկական տէրութիւնը հիմնեց . ասպա իր գէնքը նաբուզուուսարին գէմ զարձուց , որ նիսուէի և Բարելոնի վրայ կ'տիրապետէր , և շատ զօրք ունէր : Աւասի Փրառորդի գէմն ելաւ , և երկու բանակներն իրարու հանդիպեցան Ռաֆէ ըստած ընդարձակ դաշտին մէջ , Տիգրիս զետին ափանց մօտ : Փրառորդի զօրքը յաղթուեցաւ և ինքը թշնամեացը ձեռքն ընկնելով՝ սպաննուեցաւ :

Իր որդին Կիտառը աւելի մարտասէր եղաւ . և իր հօրը մահուան վրէժը լուծել ուղեց : Մեծ բանակ մը կազմց և նիսուէ քաղաքը պաշարելու դնաց : Սակայն նոյն միջոցին թափառական վայրադ ժողովուրդներ , Սկիւթացիկ՝ որ նրուսից դաշտերն ու Սիակերիա կ'բնակէին՝ Կովկասու լեռներէն իջնելով՝ բոլոր Սարաստանն արշաւեցին : Այս Սկիւթացիք սոսկալի երեսիթ մը ունէին և զերելով՝ զերիկելով ամէն տեղ անապատ կ'գարձնէին : Կիաքսար այս վայրի ժողովրդոց արշաւանքն իմանալով՝ նիսուէի պաշարումը վերցուց և բանակն առնելով Սկիւթացոց գէմ վազեց : Բայց չկրցաւ վանել զայն Սարաստանէն : Սկիւթացիք բոլոր Արեմանեան Ասիոյ կողմէը

տարածուեցան հեղեղի պէս և ամէն տեղ առեւ
բելով Եղիպտոսի սահմանը կանկ առին, ուր
Պատմէտիքոս թագաւորն ընծաներով սրսաց զայնս
և չթուղոց որ առելի առաջ երթան : Սկի թա-
ցիք առան ութ տարի Մարաստանի տիրեցին : Ի
վերջէ՝ Կիաքսար տեմնելով որ անկարելի է նո-
ցա յաղթել բուռն զօրո թեամբ՝ խորամանկու-
թին բանեցոց : Իր զլիսաւոր հպատակացը հետ
գաւաղբութին մը կազմեց և Սկի թայի մեծա-
մեծները ինչնչպի մը հրափելով դինովցոց և
բոլորն ալ սպաննել առաւ : Այսպէս Մարք
ազատեցան այն բարբարս ժողովուրդէն որ այն-
չափ չարիք հստոցեր էր իրենց և Կիաքսար
իր առ ջի վրէ ժինով բութեան խորհուրդն՝ ի գործ
զնելու համար այս անդամ սահմանակից իշխա-
նաց հետ միացաւ և Կինուէի վրայ քալելով
զայն կործանեց :

Աժդականի և Կիւրոս . — Կիաքսարի յաջօրդեց
Աժդականի որդին : Այս իշխանը Մանդանէ ամսոն
գուստը մ'ունէր զոր կամրիս՝ Պարսից կուսա-
կալին հետ կարգեց : Քիչ ատենէն երազին մէջ
տեսաւ որթետունկ մ'որ իր աղջկան ծոյշն ել-
նելով բոլոր Ասիան կ'ծածկէր : Աժդակակ մա-
ղերը կանչեց և այս երազին մինութիւնը պա-
հանջեց : Երբ ըսին նմա թէ Մանդանէ ծնե-
լիք որդին է որթն որ բոլոր Ասիայ տիրելն
ետև իր թագն ալ պիտի զրաւէ, Աժդակակ իր
գուստը Պարսկաստանէն բերել առաւ որդէս
զի նորա ծնելիք որդին սպաննէ : Երբ Ման-
դանէ ծնաւ իր որդին՝ Աժդակակ Արքակին յանձ-
նեց նորածինն և հրամայեց որ զանի մեռցնէ :

Արքակ այս անմեղ մանկիկն իր ձեռօքը սպան-
նել չկամելով թագաւորին մէկ հովուին կ'տայ
որդէս զի տանի ամայի լեռ մը թողու վայրի
զազանաց որս լինելու համար :

Երբ հովին, որու անունն էր Մէրքառառէ՝
իր անակը զարձաւ՝ իր կնոջը յայսնեց Արքա-
կին հրամանը : « Եսն միջոցին հովուին կինը՝ որ
մեռած զաւակ մը ծնած էր՝ աղաւեց իր ամու-
սին որ արքայազն մանկիկը նորա տեղ պա-
հեն : Եւ իրօք՝ Մանդանէի որդին հովուին առ-
նը մեծցաւ ինամօք, իր անունն էր Կիւրոս : Օք
մը Կիւրոս՝ տան տարու լինելով՝ իր տարե-
կից ընկերներուն հետ խաղալու ատեն՝ սոք զինք
թագաւոր ընտրեցին : Ազնուականի մ'որդին չու-
զեց նմա հնազանդիլ : Այս ատեն Կիւրոս հրա-
մայեց իր թիկնապահ զօրաց որ զանի զանակո-
ծեն : Գանհաչար տղուն հայրն իսկոյն դնաց Աժ-
դակակին զանգատեցաւ : Թագաւորը շուտ մը
հովին ու որդին առ չեք հանել տալով . « —
Կոչչպէս յանդկնեցար, ըստ Ափւրոսին, զու-
որ իմ մէկ ստրոկիս որդին ես, այդպէտ ծե-
ծել տալու աղնուականի մ'որդին » : « — Տէր
իմ, պատասխանեց Ափւրոս, ես արդարութեամբ
վարուեցայ, զի զին աղաքը զիս թագաւոր ընա-
րեցին, վասն զի ամենէն արժանաւորը կ'սեպէին
զիս . ամենքն իմ պատուէ բներս կատարեցին .
միայն մէկն անսաստեց . ես ալ զայն պատեցի :
Եթէ այս որդը պատմոյ արժանի կ'զանէք՝
պատրաստ իմ ձեր հրամանին » : Այսպէս խօ-
սելու ատեն՝ Աժդակակ կ'զիսէր Ափւրոսի կեր-
պարանն որ իրենին կ'նմանէր . կ'զարմանար նո-
րա անվըով և ապնիւ պատասխանին վրայ և

այլ և այլ կասկածներ իր մոտքին մէջ կ'ծաղին։
Հարց ու փորձ կ'ընէ հավին և՝ ի վերջէ զաղտ-
նիքն երևան կ'հանէ։ Աժդահակ թէ և կ'զայրա-
նայ, բայց իր զայրոյթը կ'ծածկէ և սոսկալի
վրէծ մը լուծելու համար սուտ ուրախ կ'լինի
թռող դանելուն։ Այս ուրախութիւնն Արքակին
կ'հաղորդէ և կ'պատուիրէ իր որդին պալատը
դրկելու որպէս զի նորատի իշխանին հետ խա-
զայ, և միանդամայն ինքն ալ իրեն սեղանակից
լինի, պահանջառելով թէ զից զոհ սփտի մա-
տուցանի թռուն անվաս մնալուն համար։ Ար-
քակ թագաւորին հրամանը կ'կատարէ։ Աժդա-
հակ դաղմնի կ'հրամայէ որ Արքակին որդին
մորթեն և կտոր կտոր ընեն։ Երբ սեղանի ժամը
կ'հանի, թագաւորին ոչխարի միս կ'մեծարեն,
իսկ Արքակին իր որդուոյն մարմինը։ Ճաշէն ետք՝
Արքակին կոզմվ մը բերին որու մէջ իր որդուոյն
դլու խը, ուաքն ու ձեռքը կային։ «— Արդեօք
կ'ճանչնաս այս երեխ միսը», հարցուց անոր
դաղմանասիրտ թագաւորը։ Արքակին դոյնը նե-
տեց, սիրտէն արիւն քալեց, բայց իր այլայ-
լութիւնը զսպելով, պատասխանեց թէ կ'ճանչէ
և թէ թագաւորն ինչ որ մնարէ իրեն ախոր-
մելի է. բայց իր վրէծը հանելու համար պա-
տեհ ժամանակի սպասեց։

Աժդահակ նորէն մողերուն խորհուրդ հար-
ցուց. և երբ սոքա ըսին թէ երազը կատարուե-
ցաւ, քանի որ իր թռուն լնկերակցացը կողմէ
թագաւոր ընտրուեր էր, Աժդահակ զարսկաս-
տան իր ծնողացը զրկեց Կիւրոսը։

Արքերուն Առի վեհակ (600). — Կիւրոսի երեցած ժա-
մանակը չորս գլխաւոր ժողովութեներ կ'տիբէին Արեմոնան
Ասիյ վայ. Այսինքն, «) Մորտ, որոց թագաւորն էր
Աժդահակ և սորու իշխանութիւնը Հալիս զեւէն մինչեւ
ինգոս կ'սորածուեր. — բ) Քաղցրեացիւ կամ Բաբելո-
նաց, որոց թագաւորն էր Պալտազար, և առ Միջագե-
տաց, Արինյ և Պաղեստինի վայ կ'տիբէր, այս է՝ Տիգ-
րիսէն մինչև Միջերկրական կ'եղիւեր. — չ) Զայի, որոց
թագաւորն էր Տիգրան Ա. և առ կ'տիբէր Կովկասու հա-
րաւային երիբենելը՝ մինչեւ Ասուեստանի ասհմանները.
— դ) Լիքուացիւ որ Փարք Ասիոյ մած մասին տէրն էին
մինչեւ Հալիս և որոց թագաւորն էր Կրետան։

ԳԵՐԱԿՈՒՅՔԻ ԳՐԸՆՔ

Գ.ԼՈՒԽԱ ԺԵ.

կիւրասին միւշն կումբիւս բ.

(560-530 R. U.)

Պարսէկ : — Այս ազգը կ'բնակէք Մարատ-
տանին հարաւային կողմը կ անուած երփիրը՝ Պար-
սից ծոցին վրայ : Տապ ցեղէ կ'բաղկանար . ո-
մանք Երկրադործութեամբ կ'սպարապէին , այլք
Հօվուական թափառաշը ջիկ կեանք մը կ'վարէին :
Իրանի ազգաց մէջ՝ Պարսիկը մած համբաւ ու-
նէին իրենց արխասրատ թեան և յանդգնութեան
կողմէ : Իրենց հազուստը կենդանեաց մորթն էր ,
չաբքաշ էին և բնաւ զինի չէին խմեր : Արեաց
միւս ցեղերուն սկէ՞ թէ և Ասորեստանի թագա-
ւորաց կ'հպատակէին , բայց անզուսազ և անկախ-
ինաւորութիւն մ'ունէին :

Ակերու . Մարտաց ու բունենքնեան կողմանութեան . — Երբ
Կիւրոս Պարսկաստան զարձաւ՝ իր ծնողքը զինքը
մեծ խնամք զաստիարակեցին , այնպէս որ քիչ
ատենէն իր խելքովն , արդիս Ծեամին ու պատե-
րազմական տալանդովը բոլոր իրեն տարեկից
ընկերները գերազանցնեց , և իր ազգին անկա-
խռովինը ձեռք ձգելու միջոցները մտածեց :

Աւոտի նախ ամենուն համարումը զբաւելու ջաւ
նաց և ապա յաջողեցաւ բոլոր Պարսից ցիր ու
յան ցեղերը միաս որելով՝ նոցա պետք լինիլ։
Նոյն միջոցին Արբակ՝ որ Աժահակէն վրէժ
լուծելու մեծ փափաք ունէր, դիսեց որ Կիւ
րոս փառասէր և քաջ էր, ու անոր զրեց որ
իր հաւուն՝ Աժգահակայ գէմ ապստամբի՛ պա-
տեհ առթիւ նմա օգնելու խոստանալով։ Կիւ-
րոս՝ Արբակին յորդորը յօժարակամ ընդունեց,
մեծ բանակ մը կազմեց և Մարտասան արշաւե-
լու պատրաստուցաւ։ Երբ Աժգահակ իմացաւ
իր թուռան ապստամբութիւնը զօրքը Արբակին
յանձնեց որ Պարսից գէմ քալէ՛ Քայլ Հազիւ
թէ երկու բանակներն իրարու գէմ եկան՝ որ
Արբակի զօրքը կիրասի կազմ անցան՝ իրենց
զօրքապետին խորհրդուված։ Այն ատեն՝ Աժգահակ
սասարիկ կատալելով՝ սպաննել տուաւ այն մողերն
որ իրեն խրատեր էին կիւրոսն աղաս թոյլու։
Յեայց նոր բանակ մը պատրաստեց և նորա
զլուին անցնելով՝ Պարսից գէմ քալեց։ Բայց
Տակաստամարտն ու թաղը կորօյս և ինքն ալ
թշնամուցն ձեռքը գերի ընկատ։

Կիբեռոս, Ավագովից նախառորդ. — Աժգահակին
յալթելով՝ Կիւրոս Խնդրովի և Օքտոսի կողմերը
զանուող բոլոր Արեայ Տողովրդոց թագաւոր և
Պարսից տէրութեան Հիմնադիրն եղաւ։ Բայց
նայն միջոցին ուրիշ թագաւոր մը նորա դէմ
պատերազմելու կ'պատճառատեր, և այս թա-
գաւորն էր Կիբեռոս, որ երեսելի էր իր անքառ
հարստութեանց պատճառաւ։ Այս կրեսոս Աժ-
գահակայ աղջականը լինելով ոչ միայն նորա

վրէմը հանել այլ և Պարսից նորածին սպառ-
նալից զօրութիւնը խորտակել ուղեց : Բայց պա-
տերազմը սկսելէն առաջ՝ Կրեսոս Դէլֆին մարդ
զրկեց որ պատշաճն խորհուրդ հարցընէ : Պատ-
գամը պատասխանեց թէ՝ Ծեծ պէտութիւն ճը պէ-
տի հրձաներ , Ենէ պատքառազն Յերանորիչը : Այս
յատով՝ Հալիս զետէն մայսու և Սարաց եր-
կին արշաւեց : Կի բռու թշնամոյն գէմ ելնե-
լէն առաջ՝ կ'երեկ թէ Հայաստան մասւ , Տիգ-
րան թագաւորն իրեն նիզակից ըրաւ և ապա
Կրեսոսը գիմաւորելու զնաց : Սակայն Ճակատա-
մարտին վախճանն անորոշ մնաց , վասն զի եր-
կու բանակներն իրարմէ զատուեցան գիշերը վր-
այ հանելով : Կրեսոս Սարգիկէ քաշուեցաւ
և կարծելով թէ ինքն յաղթութիւնը տարած
է՝ զօրաց մէկ մասն ալ արձակից : Կիւրոս՝ այս
բանս իմանալուն՝ յանկարծ Սարգիկէն պաշտ-
րելու վազեց : Կրեսոս իր ձիաւոր զօրոք թշնա-
մոյն գէմ ելաւ և Թէշտը՛ զիւղին մօտ արիւ-
նահեղ կոխւ մ'եղաւ : Կի բռու յաղթեց , Սար-
գիկէն առաւ , Կրեսոսը զերի բանեց և հրա-
մայեց որ զանի փայտակոյափ մը վրայ այրեն ,
ինչպէս որ կ'պատմէ Հերոդոտոս : Իսկ Կրեսոս
փայտակոյափն վրայ ենելով պառաց . «Ո՛ Սուլն ,
Սուլն» : Երբ Կիւրոս այս աղաղակին ի-
մասար հասկրնալ ուղեց՝ գժբաղդ թագաւորը
պատմեց թէ՝ անդամ մը Սոլոն իմաստուն ա-
թենացին՝ իրեն այցի եկած լինելով՝ իր զան-
ձերը նորա առջե պարզեր և հարցուցեր էր թէ
արդեօք իրմէ առելի երջանիկ մարդ մը տեսած
տներ : Սոլոն պատասխան առեր էր թէ «Սարդ
ճը ու իտուն ինչո՞ւ երջանիկ համարել էր վերջին

չանչն առանդէլուն առաջը : Այս խօսքին Ճշմար-
տութիւնը հիմնակ փորձով տեսնելուն՝ Կրեսոս
Սոլոնի անտոնը յիշեր էր : Կիւրոս այս բացա-
տրութիւնը լսելով՝ բաղդին անկայնութեան վը-
րայ մնածեց , Կրեսոսի գէմ տուած վՃիռը
չգործադրեց , այնուհետեւ նորա հետ վեհանձ-
նութեամբ վարուեցաւ և շատ պարագայից մէջ
նմա խորհուրդ հարցուց :

Կիւրոս Բաբէլոն կ'առնու : — Կիւրոս Լիւդա-
ցոց աէրութիւնը կործանելէն ետև՝ բոլոր Փոքր
Ասից տիրեց : Ապա Հայոց Տէրբան թագաւորին
հետ Բաբելոնի վրայ քալից և երկար ատեն
զայն պաշարելէն ետև՝ հնարքով մ'առաւ : Եփ-
րատ զետն՝ որ Բաբելոնի մէջէն կ'անցնէր՝ փոս
մը բանալ տալով գարձուց , այնպէս որ իր զօր-
քը նոյն զետին ցամքած Ճամբէն հոյակապ քաւ-
զաքը հասան , մինչդեռ բնակիչները հանդէ ս
կ'կատարէին ու իերու խումով կ'զուարձանային ;
և զայն առին (338) :

Հրէից աղբարութեան հրովարդուկը . — Քանի մը
տարի ետք՝ Կիւրոս Հրէից աղաղակնքը լսելով
թոյլ տուաւ որ Պաշտօնին երթան և Երուսա-
լիմի տաճարը վերականգնեն : Զօրաբարելի ա-
ռաջնորդութեամբ 42 հազարի չափ Հրէ այք մեկ-
նեցան և այսպէս իրենց երկարատեւ զերութիւ-
նը վերջացաւ :

Կիւրոսի պատրերաշը Սէւնացուց դէմ . — Կիւ-
րոս բոլոր Արևմտեան Ասիզ տիրելէն ետև՝ իր
զէնքը Յաքսարտէս զետին հիւսիսային կողմը բնաւ-
20

կող Սկիւթացւոց դէմ գարձուց : Այս զետէն անդին անցնելով՝ Պարսից թաղաւորը փախչիլ ձևացուց և իր բոլոր պաշարն ու զինին այն տեղ թողուց : Սկիւթացիք իսկոյն Պարսից ետքեւն ընկան, նոյս բանակատեղն իջան, լաւ մը կերան խմեցին ու քննացան : Կիւրոս այն առաեն իր զօրբով ետ գարձաւ, մի շաա Սկիւթացի կոտորեց ու զերի բռնեց, նոյնպէս և իրենց Թոնիւր թագուհուոյն որդին, որ ինքզինքը յուսահատութենէ սպաննեց : Այն ատեն թոռմի թագուհին իր վրէ ժուծելու համար Կիւրոսն օրոգայթի մը մէջ նետեց և նորա բրոլոր զօրքը ջարդեց : Կ'ըսեն թէ այս թագուհին Կիւրոսի դլուին արինալի տիկի մը մէջ դնել տալով, ըստ . «Մահուանէդ ետե՛ կշտացիք այն արեամբ՝ որու այնքան ծարափ էիր կինդանութեանդ ժամանակն» : Այս յանդիմանութիւնը թէ և անսպորոյն՝ ամէն աշխարհականաց կարելի է ուղղել, որ մարդկային ազգի պատուհաններն եղած են : Կ'ըսուի նաև որ Կիւրոս բնական մահուամբ մեռաւ և իր զերեզմանը Պիերսպոլիսէն յիսուն մղնն հեռի՝ Բատարչութեաւ (Մորկապ) կ'զանուի :

Այսպէս Կիւրոս պարսկական հղօր տէրութիւնը հաստատեց որ Յաքսարտէս զետէն մինչեւ Եղիպատ և Խնդոս զետէն մինչեւ Եղէական ծովը կ'տարածուէր՝ իր մէջը պարոնակելով Մարաց, Պարսից, Բաբելացւոց պետութիւնները :

ԳԼՈՒԽ ՃԶ

Կամբէւս և Դուռէն :

(530—500)

Կամբէւս . — Կիւրոս երկու որդի թողուց անդրանիկն էր Կամբէւս՝ որ իր հօրը յաջորդեց, և կրասերը Շներդ որ մի քանի զաւառներու կուսակալ եղաւ : Կամբիւս՝ բարկասիրտ, անգութ, զինեսէր մարդ մ'էր : Իր հօրը պէս երկիրներ նուաճելու մտօք՝ պատերազմ հրատարակեց Եղիպտոսի Ամասիս թագաւորին գէմ որ իր գուստը նմա տալու մերժեր էր : Եղիպտոսի կողմն արշաւելով՝ Պէլուսիոն քաղաքն առաւ, իր բանակին առ շն շաներ, կատաներ ուրիշ կենդանիներ զնելով՝ որ Եղիպտաց ոց պաշտելի էին : Երբ Ամասիսի որդին Փասմնէն սէր հօրը յաջորդեց՝ Կամբիւս կոխը շարունակեց, սոսկալի Ճակատամարտ մը տեղի ունեցաւ . Եղիպտացիք խոյս տալով՝ Մեմիփս պատմնեցան : Կամբիւս Փասմնէն սը զերի բանեց, ի սկզբան զանի պատուով պահեց, բայց իմանալով որ իր աթոռը ձեռք ձգելու համար փորձ կ'փորձէ, զանի սպաննել տուաւ :

Կամբէւս անձները . — Երբ Կամբիւս Եղիպտոսի տիրեց՝ բոլոր շրջակայ ժողովու բոներն իրեն հնազանդեցան : Աւգեց նաև Ափրիկէի մէջ աւրիշ երկիրներ նուաճել, մանաւանդ Կաբէւտնն՝ որ Փինիկեցի ծաղկած զաղթականութիւն

մ'էր , այլ սկըսք էր ծովու կողմէ յարձակիլ նորա դէմ . բայց Փիւնիկեցիք մերժեցին իրենց նաերը տալ : Կամբիւս այս խորհրդէն ետ կենալով բանակ մը կազմեց և Ամմոնի Օտական առաքեց , որ նշանաւոր էր թէ հարստութեան և թէ Արամազդ Ամմոնի մեհեանին կողմէ . բայց այս բանակն անապատի աւագներուն մէջ բոլորովին անհետ եղաւ . յետոյ Եթովպիոյ թագաւորին դեսպան ողարկեց որ անձնատոր լինի իրեն : Եթովպացիք դեսպանը սպանեցին : Կամ բիւս այս բանիս վրայ կատղելով նոր բանակ մը հանեց , որ բաւական սպաշար չունենալով սովամահ կորաւ և ինքն ալ Եղիպատոս վերագրածաւ : Այս ձախորդութեան վրայ զրեթէ խելքը թուաւ , և Թերէի խեղճ ժողովրդեան վրայ իր բարկութիւնը թափեց : Սոքս իրենց Ապիս կովին հանդէսը կ'կատարէին . Կամբիւս կարծեց թէ իր պարտութեան վրայ կ'ինդան . ուստի Ապիս կովը ձեռօքը սպաննեց , քուրմերը ծեծել տուաւ և քաղաքն աւարի տուաւ : Այսուհետեւ իր անզ թութիւնը չափ չունեցաւ . իր եղայրը Ըմբոն ու Սերովէ քոյրը մահու դատապարանեց : Եղիպատոս շէնքերը կ'կործանէր , դիքը կ'այրէր և քուրմերը կ'հալածէր : Վերջապէս օր մ'իմանալով որ Պարսկաստանի մէջ ապստամբութիւն մը ծագեր է , իսկոյն ձամբայ ելաւ որ ապստամբները պատժէ . բայց երբ ձի կ'հեծնէր , դաշոյնով ինքդինքը վիրաւորեց և քիչ ատենէն մեռաւ (522) :

Հերթ ճէֆ : — Երբոր Կամբիւս Եղիպատոսի մէջ իր անզ թութիւնները կ'շարունակէր , մող

մ'որ իր Ըմբորդ եղօքորը կ'նմանէր , այս նմանութիւնէ օգուա քաղելով՝ թագաւորական աթոռը կ'ելնէր : Այս ապատամբութիւնը զրդուողը մողերն էին , որ Մարաց մէջ զօրաւոր դաս մը կ'կազմէին և 'ի Պարսկաստան մեծ ազդեցութիւն ունէին : Մարք Ըմբորդին օգնեցին որպէս զի Պարսից իշխանութիւնը թութաւեն : Սուտ Ըմբորդ տարի մը չթագաւորեց , վասն զի պալատէն դուրս չելնելուն կասկածներ զրգուեց : Այն ատեն եօթն պարսիկ իշխաններ դաւադրութիւն մ'ընելով պալատը մտան , խարէութիւնն երեւան հանեցին , Ըմբորդ մողին գլուխը կտրեցին և բոլոր քաղքին մէջ սպարտցուցին , որպէս զի ժողովուրդը հասկընայ որ Կամբիւսի եղայրը՝ բուն Ըմբորդ չէ այն , այլ խարեբայ մը : Այն ատեն Պարսիկներն այս խարէութեան վրայ կատղելով բոլոր մողերը սպանեցին , և այս է կորորած հոդուոց ըսուածը :

Դարէն Աշոտառէայ . — Հերոդոտ կ'ըսէ թէ Ըմբորդ մողին մահուանէ ետք՝ եօթն դաւադիր նախարարները , որոց մէջ կ'դանուէր և Դարէն , խորհուրդ ըրին թէ ինչ կերպ կառավարութիւն հաստատեն Պարսկաստանի մէջ , հանրապետութիւն , աղնուապետութիւն թէ միապետութիւն : Սեծ մասը նախադաս սեպեց այս վերջին ձեն և որովհետեւ օրինաւոր ժառանգ չկար , որոշեցին որ առաւոտ կանուխ երթան արեւը պաշտէն և որու ձին որ առաջ զինջէ այն թագաւոր լինի : Իր ձիապանին հարտարութեամբը Դարէն , Աշոտառպէի որդին՝ թագաւոր կ'ընտրուի , որ Մեծն Կիւրոսի դստեր Ատոսայի հետ

կ'կարգուի օրպէս զի իր իշխանութիւնն աւելի ամբացընէ :

Չմերդ մողին թագաւորութեան ժամանակ Պարսկաստանի մի շատ նահանգները ապստամբեր էին : Դարձէ բոլորն ալ հնազանդեցուց և իր աէ բութիւնը քսան մարզպանութեան (զաւառ.) բաժնեց : Կոյնապէս հրամայեց Հրէից որ երթան Երուսաղէմի տաճարը կանգնեն : Բայց իր թագաւորութեան ատեն ամենէն նշանաւոր գէպքը Բաբելացոց ապստամբութիւնն եղաւ : Վասն զի սոքա Պարսից բանութենէ ազատելու համար զլուխ քաշեր էին, Բարելոնն ամրացընելով : Դարձէ տարի մը պաշարեց քաղաքն և զկնալով առնուլ՝ ետ պիտի դառնար յուսահատ՝ երբ Զոպէրոս՝ եօթն իշխաններէն մին, թագաւորին հետ խօսքը մէկ ընելով՝ այս հնարքը մտածեց : Քիթն ու ականջները կտրեց և Բաբելացոց գիմացն ելաւ արինլուայ, իրեկ փախտական : Բաբելացիք իրօք կարծելով թէ Զոպիւրոս Դարձէ հի անգթութեան զոհ եղած է, յօժարակամ զինքն ընդունեցին և գունդ մը զօրաց հրամանատար կարգեցին որ երթայ Դարձէ հին վրէմն առնու : Այս սուտ փախտականն ի սկզբան քանի մը յարձակութմեր ըրտ և պաշարողները զարկաւ, որով Բաբելացոց վատահութիւնն աւելի ևս դրաւեց և բոլոր զօրաց սպարապետ եղաւ : Այն ատեն Զոպիւրոս քաղին գոները բացաւ և Դարձէ հի անձնատուր եղաւ :

Այսպէս Բաբելոն երկրորդ անգամ Պարսից ձեռքն անցաւ : Դարձէ պղնձեայ դոները վերցուց, պարիսպներն ալ փլել տուաւ որպէս զի

Բարելացիք վերստին չապտամբին : Յետոյ նոյն քաղքին կուսակալ կարդեց Զոպիւրոսը, որա քաջութիւնը վարձատրելու համար, թէ և իրօք նենդութիւն էր . բայց հին ատեն այսպիսի զորածեր արիւթեան գործեր կ'սեպուէին :

Դարձէ արշակունյակը Սկիլբացոց դէմ . — Դարձէ իր տէ բութիւնն ամրապնդելէն ետեւ՝ միտքը գրաւ՝ իր նախորդացը պէս՝ աշխարհակալութիւններ ընել : Նախ իր զօրութիւնն Եւրոպայի դէմ գարձուց, և ուղեց Սև Ծովուն հիւսիսային կողմը բնակող Սկիլբացոց վրայ յարձակիլ : Բայց կիւրոսի բռնած Ճամբոն Հետեւեցաւ, այլ Շոսփորէն Թրակիա անցաւ, իսուարուս՝ գետին (Դանուր) վրայ նաւէ կամուրջ ձգեց և զօրացը հետ Սկիլբիա արշաւեց : Բայց Սկիլբացիք իրենց սովորութեան համեմատ՝ Ճակատ առ Ճակատ պատերազմիլ չուղեցին, այլ երկինն աւերելով հիւսիսային կողմերը քաշուեցան, այնպէս որ Պարսիկները միայն ամայի անսպատ մը տեսնելով իրենց առջև՝ ստիպուեցան՝ Դարձէ հի հրամանաւ՝ ետ դառնալ : Դարձէ հիւսիսակողմը չարշաւած Դանուրի կամրջին պահպանութիւնը Յունաց յանձներ էր, որ Փոքր Ասիա և Թրակիա զանուռով յոյն զաղը թականաց զլիսաւ որներն էին : Թրակիոյ կուսակալ՝ Մէլքէտորէս, խորհուրդ կ'տար յոյն պաշտօնակացն որ Դանուրի կամուրջը կործանելով Դարձէ հի զօրաց հետ ՚ի կորուստ մատնեն : վասն զի, կ'ըսէր, Դարձէ Սկիլբացոց կողմէ յաղթուելով՝ իր վրէմը պիտի առնու Յունաց չարիք հասցընելով . բայց Սկիլէտէ կու-

սակալն այս առաջարկութեան դէմ կեցաւ յայտս
նելով որ եթէ Պարսից իշխանութիւնը կործանի
իրենց պաշտօնն ալ պիտի գաղրի : Ուստի Պար-
սիկները յաջուղեցան ազատելու : Դաքէ՛ և Ասիա
գարձաւ , իր զօրաց մէկ մասը Թրակիա թողւ-
լով : Այսպէս Պարսիկներն եւ բոսպա ոսք կո-
խեցին և Յունաստանի տիրելու մեծ փափաք ու-
նէին :

Դարե՛ հ աւելի յաջողութիւն գտաւ Ասիոյ
արևելքան կողմը . իր տէրութիւնը մինչեւ Խն-
դոս զետը տարածեց և շատ՝ զօրացուց : Բայց
Քրիստոսէ ՅՈՒ տարի առաջ էր որ առաջին ան-
գամ Պարսից իշխանութիւնը զօրաւոր թշնամեաց
Հանդիպեցաւ : Յոնիայիք ապստամբեցան Դար-
ե՛ հի դէմ և Յունաստանն ո օյնութիւն գտան :
Այն ատեն սկսան Մարտիսն պարերազմունքն որով
Ասիա Եւրոպայի հետ Ճակատեցաւ : Այս նշա-
նաւոր դէպեքը Յունաց պատմութեան լնթաց-
քին մէջ պիտի տեսնենք :

ԾՐԱԳԻՐ ԱՇԽԱՏՀԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐՍՈՍԱՆ ԵՒ **ՊԱՐՍԿԱՍԱՆ**. — **Մարտունի** սահման է հիւսիսէն Կասպից ծովն ու Հայաստան. առեւնուաբէն՝ բռն Ասորեստան. Հարաւէն՝ Պարսկաստան. արեգն Լքին՝ Պարզն և սաստան. — Կասպիան Ըլբին իր բռնը հիւսիսային մասը կ'ծածկէն: Անդ կ'գտննուին կոր: Վերու և աղջ գետերը: Գլխաւոր քաղաքներն են Ելբրուն և Հայունի:

Պարսկադպուհի սահմանն է հիւսիսին՝ Արարատան. Հարաւեն՝ Պարսից ծոցը. արևելքին՝ Կրմանիսա. արևմտքին՝ Բաբելոնիսա. Հիւսիսին և արևմտաքի կողմէ ըստ

Հեռանում են; Գլխաւոր քաղաքներն են. Պետականին, Բա-
սարդարությունը և Շահ:

Սակայն հետզգեստէ Պարսկաստանի սահմաններն ընդուարձակեցան ամեն կողմէ: Ա. Գարեջի օրով այս պետութիւնը քանի նախարարութեան բաննուուելով՝ յատուկ յատուկ մարզպաններու ձեռաօք կառավարուեցան: Ասիոյ մեջ գլխաւոր նահանգներն էին. Պահանա, Պատաշնախ, Պետական, Լեռու, Կարս, Կիլիս, Կողովունիս, Պաշտին, Փետին, Առաքեսպան, Բայրութ և այլն և այլն:

ՄԱՐԱՅ ԵՒ ՊԱՐՍԻՅ ԳԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Բարդ, կուռ-լորսին-ին. — Մարք զեղլ ու կնամարքի էին. Պարսիկը ժուժկալ ու չարբաշ; Սակայն կիւր բոսի ժամանակ մարական պերճանիքն ու ջայլավահները Պարսից մէջ առաջ, երբ սրբ ամասն ուրիշ ուղղվորդոց հետ յարաբեռութիւն հաստատել: Այս պատճեռացիկ կանոնաբարոց մարգիկը որոց կերպուրը հաց և ընդեղէն էր, ըստելիքը՝ ջուր և անկողննը հող ու թաղիք, փոքր առ փոքր թուլացան և ընտիր կերպուր, դիմք, ճոխ մուշտակներ և ամեն տեսակ դիւրակեցութեան միջացները, կինառեն: Պարսից կուռ-լորսին-ին՝ Գարեջէն առաջ բացաձակ մաստեռութիւն էր, վերջէն բարեխառն եղաւ մարզպանաց իշխանութեամբ: Սրբա ևս տեսակ մը անկախ իշխաններ էին, նահանգներ կ'կառավարէին ուր հարկ կ'հանեն: Վերջին այլաբան զօրացան որ շարունակ ներքին պատերազմներ զրպանով բռն վեհաւետիք դէմ պետութեան կործանան ըստ մասին պատճառ. Եղան, իսկ Պարսից մասպեսն ամէն ժամանակ մէջ որդուց, Ըստն Շահ կ'կոչուեց. իր ձեռքն էին հաստակացն նեւքը, պատիւն ու կեամբը. Իր աբրունիկը կերպ մը փառաւուր ու պերճ քայլաց էր ուր հազարառ ազնուակնեան, մանկլսաւիկ ու կանափ կ'բնակէին, իր հումաններն ու կիրքը կասարելու պարասա, և երկրպագելով նմա կը մերձնացին իրեւ երկնային էակի մը:

Արօն. — Հին կրօնից մէջ Պարսիցն ամենէն ընտիրն
ու մարտըն էր: Ի սկզբան Արտ ու Պարսիկ ազգերը (Ա-
րքեր) բնապաշտ էին: Ա էր լէն, կիաքսարի օրով, նշանա-
ւոր մարգարէ կամ օրհնադիր մ' երեւան եւա: այս էր
Զարդուուր, որ Հենր-Ակներ (բանն կենածի) զբովկ

Նոր կրօն մը սորվեցոց Պարսից: Սոյն զորէն միայն քառակի մը կոտրելու մասցած են: Զրադաշուն երկու սկզբունք կամ ասուած կ'ընդունէր. մին ուրիշութ, միւսը Ահրիան (Արշմ): Սուրբ, բարի սոյն էր Արմեղդ, չար սոյն՝ Արշմ: Բարի ասուածը սոսեղծեց մարդը, և ամէն ինչ որ բարի է աշխարհին մէջ անկից կ'բղիի, այսինքն լցու, կենդանութիւն, անմահութիւն: Իսկ վետ, հիւանդութիւն, մահ Արշմէն կ'ծագին: Երկուքն ալ համազօր այլ հակամարտ են և իրենց հայր ունին Զրուանն (Կրոնոս. անսահման ժամանակ): Որմիզդի պետութիւնն է իրուն, երկրագործ և լուսաւոր ժողովրդոց երկիրը: Արշմինն է Տոռոս, վանաբանակ բարբարոսց երկիրը: Առաջինն իր վեց ապաւորող հրեւտակներն (ազատը) ունի, որ Անշառութիւն կ'ըստին, որ բարութեան, ճշմարտութեան, արդարութեան, բարեպաշտութեան, հարստութեան և անմահութեան ոգիներն են. կան նաև ուրիշ անշամար բարի սոյներ էլքուր անուն որ բոլոր տիեզերաց երեսը սփռուած են, և սոցու դեմ կ'մաքարին գժոփիք (խարսանն): Ոգիներն որ դարձեն կամ ու կը կուլուին: Սակայն վերջապէս Որմիզդ օրին մէկը պիտի յաղթանակէ Միհր Հզրը միջնորդին մեռօք, և Ահրեմանը խաւարյին բնակրանը պիտի փակէ:

Այս էր հին Պարսից զաւանած կրօնը: Անհաշտ թշնամի էին կոռոց. և իրենց պաշտամունքն որ շատ պարզ էր, արձանաներու առջև, մէշէաններու մէջ էին կասարեր, այլ բաց առելու, լեռներու գագաթը, բնութեան մէջ կ'աղջոթէին առ Որմիզդ, որու նշանակն էր հուրը: Այս հուրն անշէջ պահէւոր պարտաւոր էին մոները, որ զատ զամ մը կ'կազմէին և մեծ ազգեցութիւն կ'բանեցը-նէին թագաւորին ու ժողովրդեան վրայ:

Աւուելուք. — Պարսից պետութեան մէջ խիստ զատապաշահ ու ծաղկած քաղաքներ կային: Անորեսամանի, Խշիպտոսի և Փիսնիկէի տիբելով՝ Պարսիկը տիբացան նաև նոցա ճարտարութեան, վաճառականութեան և առուելուց: Երկրագործութեան գծազրութեան մէջ ալ շատ յառաջ զացին: Իրենց նշանաւոր մարմարէ սիսներով պալամերն ու մէշէանները՝ որ Եկրասանի, Պերսեպոլի, Շօշի մէջ կ'գտնուէին, ցցց կ'առն որ Ճարտարապետութիւնը քանդակագործութեան մէջ յաջողակ էին, Հակայաձև արձաններ՝ որ թեաւոր ցուլէր էին մարդկային դէմքով, չափէն առելի մեծ՝ թագաւորի կամ երեսէի մարդու քանդակուած կերպարաններ, կ'երևէին Պերսեպոլի մէջ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ ԺԷ.

Հային պաշտ Արտայ:

(3000—2000 Ք. Ա.)

Այրաբար. — Հին ատեն Այրաբար անուամբ Վլիշուէր այն երկիրը միայն որ հիւսիսէն Գեղարացի լճին և հարաւէն Բաղաւետաց կամ Վանայ ծովուն միջնը կ'զտնուի և մէջ տեղէն կ'անցնի Երասմի գետը: Բայց հիմակ Արաբարուն աշխարհն ըսելով կ'իմացուի բալոր Հայաստանը. իսկ Արարատ լոկ նահանդ մ'է որ զրեթէ Հայաստանի կերպոնը գտնուելուն Սէլշաշէտրէն ալ կ'անուանի:

Բնակչութ. — Այրաբարայ նախկին բնակներն էին Նոյայ որդիկը ըստ Ս. Գրոց: Նորա հետո զիետէ շատնալով սկսան չորս կողմէ սփորի: Ոմանք հիւսիս զարլիին և կովկասոս բաղմաթիւ ցեղերը կազմեցին, ոմանք հարաւ գացին և Սենաարայ գաշտերը տարածուելով զանազան տէրութիւններ կանգնեցին, այլք Կասպեան լեռները բնակնելով Բակրը հասան: Կովկասեան ցեղերու մէջ անուանի եղան Սէիթապէտի, Վիրէ, Ալանի, որ Արեաց, այսինքն Յաբե-

թի սերունդէն էին : Սակայն Այրարատայ կողմը բոլորովովն անքնակի չմնացին : Յաբեթի և Սեմի ցեղերէն խառն բնիկներ ալ լեռներն ու հովիաները տուն աեղ հաստատեցին, ինչպէս Գոմերէան, Աստանաղէան, Թորդոմէան և այլ ցեղեր :

Հայկ . — Մեր Խորենացի պատմիչը կ'զրէ թէ՝ Հայ ազդին հիմնադիրը Հայկ եղաւ : Այս Հայկը կորովի, արփասիրած հակայ մ'էր և Թորոգոմի որդին : Նոր նոր աշխարհներ տեսնելու և տիրելու եռանդով՝ Հայկ իր նախնիքը յԱրարատ թողուց՝ Մաստի լերան մօս, և ինք ուրիշ զաղթող քաջաց հետ դէպ 'ի Աենաար զնաց : Բայց երբ Բաբելոնի աշտարակը կիսակործան մնաց՝ մեծ խառնակութիւն ընկաւ այս ահազին զործը վարող դիւցազանց և բանորներու մէջ, այնապէս որ սկսան իրարու դէմ պատերազմիլ : Այն ատենի դոռ հսկայից մէջ մեծ հռչակ հսմեց՝ իր բոնաւորութեան և զօրութեան համար՝ Նէբրովն կամ Քէլ անուն որբարդը : Սա վայրի զազնաց դէմ որպելէն ետև՝ իր գէնքը գարձուց իր որսակից քաջաց դէմ, շատերը զսպեց և իր իշխանութեան ներքեւ առնորով՝ Աստերատանի ընդարձակ թագաւորութիւնը հաստատեց, որում մայրագալզան էր Բաբելոն :

Հայկ մերժեց հնազանդիլ Բէլայ, վամն զի աղաստաէր էր . միշտ կ'իշշէր Արարատայ աղատ լեռներն ու սարերն ուր իր պատանեկան կեանքն անցուցեր էր և առիթ մը կ'փնտուէր վերադառնալու հայրենիքը : Այս առիթը զտաւ և իր փափաքն 'ի կատար հանեց՝ բոնակալին դէմ իրաւամբ ապստամբելով : Բաբելոնի մէջ

մեծ ընտանիք մ'ունէր Հայկ և Արմենակ որդին ամենէն քաջն ու սիրելին էր : Ուստի առաջ իր որդին ու թուունքը, նայնայի բոլոր կուսակիցներն, որ իր գրօշակին ներքե մաեր էին, և երեք հարիւր հոգւոյ զունդ մը կաղմելով՝ ելաղմեց Արարատայ կողմը : Հասաւ Հայկ Բնուանեաց ծովուն արևմտեան դին դալարաւէտ լեռի մը մօտ (թերեւ Արատոս) այն աեղուանքը (Մոկք) հին բնիկներ զտաւ նուաճեց և գաշտավայրի մը մէջ ընակութեան համար տուն հաստատելով՝ Արմենակին կարծու որդւոյն յանձնեց որպէս զի այն սահմանները պահպանէ : Խոկ խոք Հայկ իր զընդու յառաջ անցաւ գէպ 'ի Անայ ծովուն առ ընմուեան կողմն ու լեռնադաշտի մը վրայ ընակեցաւ և զայն Հայք (զաւառ) * անուանեց : Նոյնպէս զիւզ մը շնիւեց և իր անուամբը Հայկալէն կոչեց : Նոյն լեռնադաշտին հարաւային կողմը զանուառ լեռին ստորոտը (Սասունք) զանուածքիւոր բնակներն ալ ինքնայորդոր դիւցազնին հնազանդեցան :

Հայկայ յաղթեանուէ Բէլայ դէմ . — Սակայն Հայկ իր աղղաշէն զործն առանց պատերազմի զլուի չափախ կրնար հանել, վասն զի իր ետևն ահաւոր թշնամի մ'ունէր, որ երբ իմացաւ թէ Հայկ հիւսիսային լեռները քաշուեր է, իսկոյն իր որդին, ուրիշ քանի մը մարդերով առ Հայկ ուղարկեց : Այս պատպամաւորները Հայկալէն եկան և դիւցազնին ըսին . — «Ինչո՞ւ մեր զեղեցի աշխարհը թողով եկար այս սառնութ և

* Տուրուրերան նահանգի մէջ :

ցուրտ տեղերը բնակեցար : Մեղմէ այդ վես ու սառ զռողութիւնք , հնազանդէ Բէլայ , գար Հիր Բաբելոն և ուղած տեղդ խաղաղ ու հանդիսակ կեանք մը վարէ» : Հայկ պատասխանելով թէ՝ աւելի լաւ կ'սեպէ սառնամնեաց մէջ ազատ ապրիլ քան թէ մեղկոթեան մէջու բոնու որութեան ներքեւ անազատ , պատղաման որները ճամբեց : Երբ Բէլ այս ծանր պատասխանն առաւ սաստիկ զայրոյթ զգաց և անմիջապէս զօրքն առաւ ու գէպ՝ ի Աբրամար քալեց՝ յուսալով որ Հայկ իր զօրութեան առ չե ահարեկ պիտի հնազանդիք : Կազմոս Բէլայ դալը լսելով շուտ մը ճամբայ ելաւ Հայկին միանալու համար , և առջեն առ թանգակներ զլիեց այս պատղամով . — «Գիտցիր , ո՞ւ մեծդ զի ցաղանց , Բէլ անհամար արի հսկայից զլուխն անցած քեզի գէմ պատերազմի կ'ոյայ . լսեցի որ իմ սահմաններուս կ'մօտենայ և ընդ փայթ ելայ որ քովդ դամ . տատի շուտով պէտք եղածը խորհէ» : Հայկ այս լուրն առնելուն չչփոթիր , այլ քաջ զիտնալով որ ազատութիւնը զիւրադին չէ , միտքը կ'զնէ ցմահ մաքառիլ բռնաւորին գէմ : Խսկոյն կ'հաւաքէ իր որդիին ու թուունքը , որ՝ թէ և քիչոր՝ քաջ աղեղնառներ էին , և այս փոքրիկ գունդը ծովակի մը (Բղնունեաց) եղերը տանելով՝ կ'ըսէ . — «Այս պատերազմին հետ կապուած է մեր բաղդը . անվեհեր մնանք . երբ թշնամնոյն բանակին գէմ ճակատ դնենք ջանանք բոնակալին ամրացած կողմն ուժդին զարնել , կամ մնանինք , և թողնա մեր կալուածոյ տիրանայ , կամ մեր բազկին զօրութիւնը ցոյց տալով նմա ցիր ու ցան ընենք իր բանակին աղատութեան յաղթանակ կանդնենք» :

Ապա Հայկ իր արիական գունդը յառաջ շարժեց և լեռնագաշախ մը վրայ ճակատ յարդարեց եռանկիւնի ձեռվ : Իր աջ կողմը կեցոց Աբամակ , Խոր ու Մահամառ որդիքը , ձախ կողմը կառունն և սորա հուժկու որդիքը : Երբ Տեռուէն դիմեց որ Բէլ իր ահազին բանակն ետին թողլալ ամրազէն ջոկատով մը ընդ առաջ կ'քալէ շուտ մը իր քաջաց հրամայեց պատերազմի սկսիլ : Երկու կողմէն ուժդին կ'զարնուին և շատ մարդիկ տապասա կ'ընկնին : Բէլ այս անակնկալ յարձակումէն շուարելով բլրի մը վրայ կ'ուղէ ելնել և՝ իր թիկնապահ զօրաց մէջ պատսպարուելով սպասել որ բանակն ամբողջ համնի : Հայկ կ'իմանայ նորա միտքը և յառաջ նետուելով Բէլայ կ'մօտենայ , իր լայնալիք աղեղը կ'լարէ այնպէս ուժդին որ նետը թուելով Բէլայ պղնձէ զրահը կ'ծակէ և կրնակէն դուրս կ'ելնէ : Բէլ անշունչ դետին կ'տապալի ու կը մեռնի : Իր զօրքն ալ ահ ու գողով ցիր ու ցան կ'լինին :

Հայկ այս նշանաւոր յաղթութեամբ իր իշխանութիւնը և նոր ազդ մը հիմնեց , որ իր անուամբը Հայ և տիրած երկիրն ալ Հայուառան կոչուեցաւ : Պատերազմի գաշտը Հայք անուանեց որմէ նոյն գտառը Հայոց Յոր * կոչուեցաւ . իսկ Բէլին ընկած վայրը գերեւննուն : Նորա դիակը Հայք դաւար փոխարել տալով հրամայեց որ բարձր տեղ մը թաղեն , այնպէս որ իր սերունդը տեսնեն և յիշեն միշտ թէ՝ ճշմարիտ աղատասիրութեան և քաջութեան ուժով պիտուննամ մ'անդամ՝ կրնայ կողծանիլ :

* Առաջապահութան հաճախաբի գով :

Արմենիւ . — Հայկ իր փոքր ժողովուրդը դեռ բաւական տարի կառավարեց նաև հասլեպական իշխանութեամբ և իր որդիիքն ու թոռունքը յատուկ երկիրներու մէջ տեղաւորեց որպէս զի շենցընեն ու զարդանան . իսկ իր իշխանութիւնն Արմենիւ որդւոյն թողուց : Արմենի հօրենական կալուածքը տարածելու համար՝ իր Խոր ու Մանաւառ և սորա Բաղ * որդւոյն ձղեց Հարք զաւառն և ինք իր տունով գէպ՝ ի արևելեան հիւսիսի կողմերը լեռնապատ ու ջրարրի գաշտ մը զնաց կայան հաստատեց : Նոյն տեղին ամենէն բարձր լեռն անուանեց Արտեած իսկ շինած աւաններն Ո՛վ Արտեածու :

Իր Արմայիւ որդին ալ նոյնպէս չնցուց այն կողմերը : Արմատիւ քաղաքը շինեց Երասի գետին մօտ, որ իր Արտառ թոռան անուամբն այսպէս կոչուեցաւ : Իր Շաբա որդին ալ, որ շատ զաւակներ ունէր և շատակեր էր, Արագածու հիւսիսային կողմն արգաւանդ ու ջրաւաս զաշտ մը զրկեց և այս զաւառը Շաբայի անունով Շեքանի կոչուեցաւ :

Ամասիա . Գեղամ . Հարբա . — Հետզետէ յաջորդող նահապետներն ալ նոյն աշխարհաշէն ընթացքը բռնեցին : Ամասիա՝ իր Գեղամ, Ցուշի ու Փառափ որդւոյց համար զատ զատ տուն ու զիւղ շինեց բարձր լեռի մը մօտ որ իր անուամբ Մասիս կոչուեցաւ : Երբ Գեղամ իր հօրը յա-

* Արքա Հիմ զրին Խոռիսուունի, Մանաւազեան և Բաղնունեաց նահապետութեանց :

† Թէ քո Շաբայի որկորն է, մը Շեքանից ամեւաբն չէն : Արտառ նոհանք :

Ջորիեց՝ իր Հարմաց որդին Արմատիւ թողուց և իր անեցիքն առնլով գէպ՝ ի հիւսիս ծովակի մը եղեցքը զնաց : Այս ծովակը Գեղամ անուամնեց, և շինած աւանը Գեղամաննի, ուր ինք բնակեցաւ : Այս տեղ ծնաւ իր Սէսակ որդին որ կորպի, անձնել ու քաջ մարդ մ'եղաւ : Գեղամ այս որդւոյն ալ շատ մարդ ու ինչք մալով Երասի գետին սահմանները բնակեցուց : Սիսակ բազմաթիւ շինքեր շինեց այն գաշտին մէջ զոր իր անուամբ Սէտիւ կոչեց : Գեղամայ յաջորդեց Հարմաց որ Արմատիր նստաւ . թոյլ կեսանք վարեց և իր օրովը զրացի ժողովուրդներն առիթ զտան Հայտառանի սահմաններն արշաւելու և հայկական կարգն ու սարքն աւրելու :

ԳԼՈՒԽ ԺԸ.

Արմատ Գլուխ Անուշառան :

(2000—1900)

Արամ . — Հայաստանի երկրորդ հիմնադիրն եղաւ Արամ : Արթուն, միր, հայրենասէր ու քաջապիտ մարդ մ'էր : Երբ իրեն մեծ նահապետ հայոց գլուխն անցաւ, զիտեց որ իր հօրն օրով մօտակայ թշնամնները չորս կողմէն Հայաստանի սահմանները կտիսէր, գրաւեր ու հարկաւառ ըրեր են : Աւստի միտքը գրաւ այս թշնամնները վանել : Յիսուն հազար քաջ մարդիկ զջ

ժողվեց զինեց և ամենէն առաջ Մարաց Կէմ տար իշխանին դէմ զնաց, նորա երկիրներուն ափս ըեց, զանի բոնեց և Արմակիր բերելով՝ հրամայեց որ պարսպին աշխարակն հանեն ու նորա հակոբէն զամեն :

Նոյն միջոցին Նիսոս Բաբելոնի գահն ելաւ : Փառասէր թագաւոր մ'էր . Արամայ քաջուածիններն իրեն ծանր կ'երսէին : Թէպէտ կը փափաքէր հին վրէժներ լուծել և հայոց նաև հապետն իր լծին ներքեւ առնուլ, բայց կ'երկամտէր և Արամ նորա սիրառ շահելու համբան դաւ, այնպէս որ Նիսոս նորա մարդարատէ վարսակալ մ'ուղարկեց և իր երկրորդն անուանեց :

Արամ իր աղջաշէն դործերը շարունակեց ։ Իմանալով որ Ասորոց Բաբլոն անուն իշխանը Հայաստանի մէկ մասը նուաճեր՝ ժողովուրդը կը կեղեգէր, իսկոյն զօրքն առաւ և նորա գէմ զնաց, յաղթեց և նորա երկիրները կադմոսին ցեղին յանձնեց : Արամ այս երկու թշնամիները չնշելուն ետե՛ կապադովլիոյ Պայտակի իշխանին գէմն ելաւ, որ Հայաստանի վրայ քալելու կը պատրաստուէր : Վանեց զայն մինչև Սիջներպականի մէկ կողմին և նորա երկիրներուն մէկ մասին տիրեց : Այս կողմերը Մշակ անուն կաւսակալ մը դրաւ և հրամայեց որ բնակիչները հայերէն սորվին ու խօսին : Մշակ քաղաք մը շնուց Մշակ անուն, որու յոյները Մաքաբ (Աեսարիա) կ'ըսէին :

Այսպէս Արամ Հայաստանի թշնամիները սանձեց, Հայկական աշխարհն ընդարձակեց, նահապետական իշխանութիւնը զօրացուց և օ

աւարաց մէջ մեծ համբաւ հանեց, այնպէս որ օտարներն սկսան մեր աղջն ու երկիրն Արաման, Արմէն, Արծնէն անուանել :

Արամ . — Արամին յաջորդեց Արամ որդին, որ գեղջնի կոչուեցաւ, վասն զի ոչ միայն հայրենասէր հողի, պարզ ու համեստ վարք ունէր նա, այլ և մարմնական կորով ու շնորհ : Թէև իր հօրը պէս մարտասէր չէր, բայց հայոց աշխարհին պաշտպանութեան համար իր արիւնը տալու պատրաստ կ'գտնուէր :

Իր օրովը՝ Նիսոսէն ետք՝ Ասորեստանի գահն ելաւ Շամփրամ, փառամոլ ու տռափոտ թագուհին, որ՝ ինչպէս արդէն տեսանգ, երեսլի աշխարհակալուհի մ'եղաւ : Իր տէրութեան սահմաններն ընդարձակելուն ետե՛ աշքը Հայաստանի վրայ գարձուց, բայց լաւ զիսնալով որ հայերը զիւրաւ չեն նուաճիր, մտածեց հնարքով մ'որսալ Հայոց մեծ նահապետն և նորա երկրին տիրել : Մանաւանդ երբ լսեց նորա զեղեցկութեան համբան աելի ևս բորբոքցաւ իր խորհուրդն՝ ի կատար հանելու : Աւտոի մի շատ պարգևներ զրկեց Արային և առաջարկեց որ իրեն հետ կարգուի, զինք բոլոր Ասորեստանի աելու ու թագաւոր ընելու խօստանալով : Հայոց նահապետը բացէ ի բաց մերժեց այս ինդիրը, վասն զի նորա մէջ ծովակ մը, հայկական աղղին կորուսոր տեսաւ : Ասկից զատ՝ Արայ իր Նուարդ կնկան հաւատարիմ էր, և օտարի հետ միութիւնը՝ իր առաքինի բնաւորութեան և հայոց ընտանի կենաց ու օրինաց ներհակ էր, թէև այդ օտարը թագուհի անդամ

լիներ : Շամփրամ միշտ կ'յուսար . քանի մ'ահա գամ պատղամասորներ ուղարկեց որ Արայն համոզեն , բայց իր պարզեներն ու խոստումներն անօգուտ եղան : Այս դիմադրութիւնը թագուհու կիրքն առելի վառեց և զօրացը զլուխն անցնելով Հայաստան մտաւ որպէս զի երկիւղ աղդելով իր նախակին հանի : Հասաւ Արարատ լերան մօտ և բանակը դաշտի մը մէջ յարդարեց : Ապա իր զօրապետաց ապագրեց որ Արայն ողջ բունն և իրեն բերեն : Հայկազն նահապետն իր քաջերը ժողվեց և թշնամոյն դէմն ելաւ , և այս պատերազմին մէջ զի ցազնաբար կուռելով մեռաւ : Այս դոյժը սուզերու մէջ ձգեց Շամփրամը , որ անմիջապէս հրամայեց որ դիւցազնին մարմինը զիակներուն մէջ փնտռեն զմնեն և իր պալատին մէկ անկինը պահեն : Իր հրամանը կատարուեցաւ :

Բայց հայկազոննք իրենց մեծանձն նահապետին մահուան վրայ զայրանալով՝ վրէժ լուծելու պատրաստեցան առելի մեծ զօրութեամբ : Շամփրամ կ'շփոթի . ձայն հանել կ'տայ թէ դիք Արայի վէրքը լիզելով (Արաէզ) պիտի կենդանացնեն : Աւելորդապաշտ հայերը կ'հաւտան այս խօսքին և զէնքը վար կ'դնեն : Սակայն Արայի մարմինը կ'քայլայի կ'հսուի և Շամփրամ կ'հրամայէ որ զայն փոսի մը մէջ նետեն զաղանի և վրան ծածկեն : Յետոյ իր մէկ սիրականը կ'զարդարէ և հայոց նահապետին տեղը պահելով՝ կ'համբաւէ թէ դիք նմա ողի ու շունչ տուխն : Այսպէս հայք կ'խարուին , Շամփրամ կ'յաջողի նոցա խարկութիւնն իջեցնելու Հայաստանի տիրել :

Ինչպէս արդէն զիտեհնք՝ աշխարհաշէն թաղուհի մ'էր Շամփրամ : Հայաստանի զանազան կողմերը պարտեցաւ և նորա բարեխառն ու գեղեցիկ օկը , շքեղ լեռները , գալարուտ հովիաներն ու գետերը տեսնելով զայլեցաւ : Հոյակապ քաղաք մը շնեց Բանոնեաց ծովոն մօտ բարձր լեռնակի մը ստորոտը , որպէս զի ամառն այս տեղ անցընէ : Քաղաքը զարդարեց զեղցիկ ապարաններով ու պարտէ զներով , պարփակներով պատեց , Համբաներ բացաւ , Վանայ գետին ամբարտակը շնեց , նոյնպէս լեռնակին զաղամին մասսիկ բերդ մ'որու վրայ ցարդ կ'աւեմուին ու տառերով արձանագիրներ : Երեւելի հնագէտներ այս ուղղացւ տառերը կարող եղան կարդալու :

Ամբողջ . — Այսպէս հայերն առաջին անդամ Ասորեստանցոց իշխանութեան ներքե ընկան : Բայց Շամփրամ նոցա սիրտը շահիլ ուղեց Արայի որդին Կարբուռ Հայաստանի վրայ կուսակալ զնելով : Կարդոս սոսկ անուամբ նահապետ էր և Շամփրամին կամաց հնազանգ , այնպէս որ երբ այս թագուհին իր նիմուաս որդւոյն դէմ , որ ապստամբեր էր , պատերազմի գնաց , իրեն օգնութեան կամչեց Կարդոսն որ այն կուռին մէջ զարնուելով մեռաւ , և իր որդին Ասորեստանը գերի մնաց :

ԳԼՈՒԽ ԺԹԻ

ԱՆՆԱԿԱՆ ԳՐԱ ՊՐԵՄԱ:

(1900—655)

ԱՆՆԱԿԱՆ . — Այս ԱՆՆԱԿԱՆ զդօն ու ձարսար պատահի մ՛էր : Բաւական ժամանակ Կիշտեի արքունիքը մնաց նա անշուք ու թշուառ վիճակի մէջ , մինչև որ իր անուշ և խոհական բնաւորութեամբը կուսակիցներ շահելով՝ զերութենէ ազատելու հնարը գտաւ և հայրենիքը վերադարձաւ : Հայք ցնծութեամբ ընդունեցին զինքն և նորէն իրենց բնիկ նահապետական իշխանութիւնը մասսամբ ձեռք ձգեցին : Անոշաւան հոդ տարաւ Ասորեստանի տիրապետութենէ հասած չարիքը ջնջել և նախկին կարդ կանոնները հաստատել : Ինք Սօս անունն ալ ունէր , վասն զի Արմաւրի Սօսէնէրու անտառին նուիրուած քուրմ մ՛էր , և հայք այդ անտառին մէջ կրօնական պաշտօն կ'կատարելին և ոսաերուն սոսաւինէն այլ և այլ զուշակութիւններ կ'հանէին :

ԱՆՆԱԿԱՆ ՆԱԿԱՊԵՐԴ . — Անոշաւանէն ետք՝ հայկական յաջորդութեան թելը կ'կորսուի : Միշատ նահապետներ հետպհետէ կառավարեցին հայ ժողովուրդը՝ բայց այս նահապետաց անուանիքը կան , արարքն անյիշատակ մնացած են : Այս անյիշատակութենէ չհետեկիր որ այս մարդիկ գանդաղ կամ աննշան էին . վասն զի սոցաօրով , ինչպէս որ կ'երեի , Հայաստան շեն էր , առ աններ ու զիւղեր շատցեր էին , իսկ հանդարս

ու երջանիկ պիտի լինէր ժողովուրդը՝ որ թերեւս ընտրութեամբ իր պաղապետները կ'հաստատէր : Եւ որովհետեւ սոքա ընդհանրապէս անփառասէր էին և պատերազմներ ըրած չեն , իրենց առ մնին օդասակար գործերն ալ դրուելու արժանի չեն սեպուած , ըստ հին սովորութեան : Այս նահապետական շրջանն ալ զրեթէ 1200 տարի տեսեց՝ մինչև Պարոյը : Սակայն սոյն շրջանին մէջ քանի մը նահապետներ կան որոց ժամանակները պատահած մի քանի դէպարեր Խորենացին և այլ պատմիչներ կ'յիշատակեն , ինչպէս :

Սուր . — Սորա ժամանակը Յեսու Աւետեաց երկիրը մասնելով՝ Քանանացիքը կ'վանէր ու կը ցըռէր : Քանանացի փախստական իշխան մը Քանանիք Գնիուռնէ անուն՝ Հայաստան եկաւ . և իրմէ սերեցաւ Գնիուռնէաց նախարարութիւնը :

Զարմայր . — Այս նահապետին օրովը Տրոյայի նշանաւոր պատերազմը պատահէցաւ , զօր Յոյները մլեցին Տրոյացոց Պրիամոս թագաւորին գէմ և Տրոյա քաղաքը տասն տարի պաշարելէն ետև առին : Պրիամոս ինչպէս ուրիշ զրացի ազդեցէն , նոյնպէս Զարմայրէն օդնութիւն ինդրեց : Զարմայր երեսուն հազար հայկաղն զօրքով՝ Տրոյա դնաց և այն տեղ հելլենացի քաջերէն սպաննուեցաւ :

Ակայուրդէ . — Ասորեստանցոց Սենեքերիմ թագաւորին որդիկին Աղրամել և Սամսասր իւ *

* Աբերունէիւ և Գնուռնէիւ :

ըենց հայրը սպաննելով՝ Հայաստան փախան
Սէպարդի նահապետին օրովը։ Այս նահապետը
սիրալ ընդունեց սպան իշխանազոնքն ու նոցա
յատոկ բնակութեան տեղ տուաւ։

ԳԼՈՒԽ Ի.

ՊԵՐԵՐԵՆ ԳՅԱԼ ԱՆԱԿ և ԱՆԻԼԵՎՈՆ-ԲԵՐ ԵԱՅՆԱԿ:

(655—331—151)

Պարոց։ — Սինչե Սկայորդիին ժամանակը
Հայաստանը կառավարողները նահապետ կ'ըստու-
ին, վասն զի ինքնադլուխ իշխան չեին, այլ
ծերեռուն խորհրդով ազգին զորձերը կ'վարե-
ին։ Բայց երբ օր ըստ օրէ շրջակայ ժողովս րդ-
ները զօրանալ ու բռնանալ ոկսան՝ Արամին օ-
րէն՝ հայ գոհութիւներն ալ յատոկ զօրք պահե-
լու և՝ ՚ի հարկին՝ մեծ նահապետին օդնելու կը
միանային որպէս զի թշնամին վանէ, մինչեւ որ
Պարոց՝ տեսնելով որ Հայաստանի Հարստ ային
կողմերն Ասորեստանցիք մերթ ընդ մերթ կ'աս-
պատակեն՝ պատէ հ ասիթ մը կ'փնտուէր որ այս
երկիրներն ալ օտար լիէ փրկէ և թշնամնաց
ահարկու երեւելու համար արքայական շուք ու
պատիւ ստանայ։ Այս առիթը պատահեցաւ երբ
Կիաքսար՝ Մարաց թագաւորն՝ իր հօրը Փրա-
ւորդին վրէ ժը լուծելու համար՝ Նինուէի Սար-
դանաբար Բ. թագաւորին դէ յ պատերազմ

Հքատարակեց և շրջակայ իշխաններէն զատ՝
յատկապէս Բաբելոնի կուսակալին և Պարոյը
նահապետին մարդ դրկեց և նոցա օգնութիւնը
ինդրեց, յայտնելով որ եթէ յաղթեն ոչ մի-
այն իրենց երկիրները բոլորովին անկախ պիտի
լինին այլ և արքայական թագ ու զաւազան պի-
տի կրեն։

Պարոյը յօժմարակամ ընդունեց այս առաջ-
արկութիւնը։ Արէն Սարգանաբար Բ. իր ան-
կարդ ու հեղղ ընթացքովին ամէն հպատակաց
զգորհութիւն պատճառեր էր, և երբ Կիաքսար
իր նիգակակիցներուն հետ գնաց Նինուէն պա-
շարեց՝ Սարգանաբար անօդնական մնաց ու տէ-
րութիւնը կորցու։

Այսու հետև Պարոյը՝ նահապետի անունը
թողով թագաւորի անունն առաւ, ինչպէս նաև
իր յաջորդները, որոց մէջ անուանի եղան։

Հրաւեայ։ — Այս թագաւորն այսպէս կ'կո-
չուէր՝ պայծառ երես ու հրափայլ աչքեր ու-
նենալուն համար։ Կ'ըսուի թէ սորա ժամանակը
Շամբատ անուն հրէայն Հայաստան եկաւ բնա-
կեցաւ։ Շամբատի ցեղէն էր Բագարանք՝ որմէ-
ծագեցաւ Բագրատունեաց մեծ նախարարութիւ-
նը*, որ վերջն պաշտօն ստացաւ Արշակունիի
թագաւորաց զլուխը թագ կապելու։

Տիկրան Ա. — Հայկազուն թագաւորաց մէջ
առաջն կարգը կ'բռնէ Տիկրան Ա. Ոչ միայն

* Այս նախարարութեան ընակութեան տեղերն եղան,
նախ Սովետ, ապա Կոմիտէտ, Արշակունի գաւառներն, ին
գեղէ Շերտէ և Ան քաղաքը,

երեւելի եղաւ նա իր արիութեան ու խոչեմութեան, այլ և կենցաղադէտ ու աշխարհաշէնքն բնաւորութեանը համար: Դիտելով որ Հայաստանի նահապետական հին պարզութիւնը, կարգն ու օրէնքը բաւական չէին հայրենի սահմանները պահպանելու, նոր կարգ կանոն ու ռազմական արուեստ հաստատեց և ամենուն աշարժու: Հայոց բանակը զօրացուց ու կարգաւորեց: Զիաւեր, աղեղնաւոր, պարսաւոր զունքեր կազմեց, որք ամուր զրահ ու վահան կ'կրէին: Երկրագործութիւնն ու վաճառականութիւնը՝ որ երկրի մը հարստութեանց դլաւոր աղջիւներն են, ծաղկեցոց նա, այնպէս որ Հայք սկսան օտար հեռաւոր երկիրներու հետ առուտոր ընել և քիչ քիչ պերճութեան ու դիր կենաց սովորիլ:

Այս ներքին բարեկարգութիւններն ընելին եաւ Տիգրան՝ որ պատերազմական եռանդ ալունէր, միաքը գրաւ Հայաստանն ասպատակող թշնամիները կոտորել և նորա սահմաններն ընդարձակելով՝ ապադայ յարձակումներու դէմ ապահովել: Հայաստանի այն մասերը՝ զոր օտարները յափշտակեր էին, աղատեց և Փոքր Ասիոյ յունական քանի մը դաւառներ իր իշխանութեան ներքեւ առաւ: Ապա կիւրոսի հետ բարեկամութեան դաշնիք գրաւ, վասն զի դուշակեր էր որ Պարսից տէրութեան այս հիմնադիրն իր փառասիրութեամբը կրնար իրեն վտանգաւոր դառնալ եթէ նորա հետ չնիզակցեր:

Նոյն ատենները Մարաց վրայ կ'ափրէր Աժդահակ, որ բնաւ չէր քաշեր Տիգրանայ կենուց յաջողութիւնը, մանսամնդ այն դաշնիքը

ըսր կոնքը էր կիւրոսի հետ: Եւ արդէն յայտնի է թէ այս կիւրոս թռունէն նա ո՛չափ կ'երկընչէր: Աւստի մաղաղար հոգի ու սարսափի մէջ լինելով՝ թէ արդեօք իր աէրութիւնը ձեռքէն պիտի յափշտակէն, շարագուշակ երազներ կը տեսնէր և իր մողերը կոչելով խորհուրդ կը հարցյնէր ու կ'ըսէր: — «Երազ տեսայ սառապատ լեռ մը, որ անշուշտ Հայաստանն էր: Սորա զաղաթին վրայ կին մ'երեք որդի ծնաւ: Մին առիւծի մը վրայ նստած՝ դէպ՝ ի արեմուտ կ'վազէր, միւսն ինձ մը հեծած հիւսիս կ'արշաւէր, երրորդն՝ որ վիշապի մը վրայ էր, իմ աէրութեանս կոլմը կ'յարձակէր: Վիշապին ելայ՝ բայց յաղթուելով ընկայ: Այս յաղթողը միայն Տիգրանը կրնայ լինիլ, որ մեր Տիգրանաւունքն իստիւ մասեւ տնիծ: Բոլոր մողերն այս վրայ զալու միաբ ունին: Բոլոր լու համար տեսակ տեշանակ կարծիք յայտնեցին, բայց Աժդահակ և ոչ ասկ կարծիք յայտնեցին, բայց Աժդահակ և ոչ մէկուն հաւանեցաւ, վասն զի ինք չար խօրհ հուրդ մ'ունիր: Միաըք գրաւ Տիգրանին քոյրը Տիգրանաւունքն իստիւ մասեւ տնիծ: Աժդահակին սպաննել և սորա ձեռօք Տիգրանը սպաննել տալ:

Աւստի շատ անդին ընծաներով նամակ մ'ուղեց նա Հայոց թաղաւորին և Տիգրանու հին խընդիր գրեց, յայտնելով թէ այս միութեամբ աւելի հաստատուն պիտի մնայ իրենց տէրութիւնն և թշնամիներն իրենց դէմ յարձակելու չպիտի համարձակին: Տիգրան Աժդահակին իստիւ պատրեց, առօք փառօք Մարաստան ուղարկեց իր քոյրն որ Մարաստանի արքունեաց մէջ առաջին թաղուհի եղաւ: Սկիզբները շատ մեծ պատիւ տեսաւ, բայց քիչ ատենէն Աժդահակ

իր նենգաւոր խորհուրդը նմա յայտնեց և պահանջեց որ Տիգրանուհին կերպով մ'իր եղբայրը սպաննելու ձարը դանէ , սպառնալով որ եթէ մերժէ՝ մեծ անարգանայ ու մաշուան պիտի դատապարտոի : Տիգրանուհին առ երեսս հաւանութիւն ցցուց , բայց դաղմնապէս վանդոն իմացուց եղուրն , ու աղաւեց որ զինքն այս անզդամ մարդոն ձեռքէն ազատելու միջոց մը դանէ : Աժդահակ կարծէր թէ իր փափաքը պիտի կատարուի . ուստի մարդ զրկեց Տիգրանին խնդրելով որ աեստթեան համար սահմանակից վայր մը դայ : Բայց Հայոց թագաւորը նորադաւաճանութիւնն արդէն դիտէր : Խսկոյն բանակն առաւ , որոց մէջ Վիրք և Ազուանք ալ կային , ու Մարաստանի վրայ քալեց : Կիւրօս ալ իրեն միացաւ : Պատերազմն երկարագեց այնչափ որ Տիգրանուհին միջոց դատաւ խոյս տալով Հայաստան դառնալու : Աժդահակ յանկարծակի գալով՝ զօրքն առաւ ու Տիգրանին դէմն ելաւ : Պատերազմը շատ բուռն եղաւ և 'ի վերջէ Հայոց թագաւորը յաղթեց և անբաւ աւար ու շատ դերի առնչով դարձաւ Հայաստան : Տիգրան՝ Աժդահակայ կինն Անոյշ , զոր Գողթ թան երդիչները վիշապաց մայր կ'կոչէին , և ազնուական ընտանիքներ Երասին դետ բնակեցուց : Նոյնպէս Տէ՛րանակերտ աւանը շինեց Տիգրան և իր քրոջը տուաւ զայն 'ի բնակութիւն :

Այս յաղթութենէ ետք՝ իսկն ևս կիւրոսին քննեց Բաբելացւոց թագաւորութիւնը կործա-

* ԵՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ :

նելու և այսպէս Հայոց զօրութիւնն ու փառքն աւելցընելով՝ իր թագը Վահագն որդուցն թողոց :

Վահագն . — Տիգրան ունէր ուրիշ երկու որդի՝ բայց ու Տիգրան : Բայց Վահագն անուանի էր իր շահատակութեանց կողմէ : Դա հայ Հերակլէս՝ մ'էր , որու վրայ վիխասամներ երգեր * շինած էին զոր բամբամմբ կ'նուագէին : Կ'ըսէին թէ վիշապներու դէմ կառեր և յաղթեր է : Վարցիք նորա արձանը կանոննելով՝ կ'պաշտէին : Նորա ցեղէն յառաջ եկաւ Վահագնակեց նախարարութիւնը :

Վահագն . — Հետզհետէ Վահագնի յաջորդեցին քանի մը թագաւորներ որոց արարքն անյայտ մնայած են , մինչև Աշա , որ Ծամբրամակերտ քաղաքը նորոգել աւալով՝ իր անուանը Վահագն կոչեց : Վահագն որդին Վահագն անուանի է Աթձն Արքան . իր դէմ մղած պատերազմով : Ալէքսանդր Մակեդոնացոց թագաւորն էր , որ Պարսից դէմ յոյն աղջին ունեցած վաղեմի վրէ մը հանելու և հին աշխարհի տիրելու փա-

* Երկներ երկին և երկիր ,
Երկներ և ծիրանի ծով ,
Երկն ի ծովուն ուներ զկարմրիկ եղէգնի և

Ընդ եղէգան փող ծուխ Ելանէր ,
Ընդ եղէգան փող բոց Ելանէր ,
Եւ 'ի բոցոյն պատանեկիկ վաղեր :

Կա հուր հէր ուներ ,
Ապա թէ բոց ուներ մօրուս ,
Եւ աչկոնքն էին արեգակունք :

ուասիրութեամբ՝ Ասիա արշաւեր և հետզե՞ռ
տէ քանի մը նշանաւոր ճակատամարտներ տա-
լէն ետև՝ յաջորդեր էր Պարսից Դարեհ (Կողո-
ման) թագաւորին երկիրները նուածել, և զանի
հալածական վասնել: Դարեհ նեղը մանելով՝
վերջն Ճիզ մ' ըրաւ իր պետութիւնն աշխար-
հակալին ձեռքէն աղատելու և հայոց Վահէ-
թաղաւորէն ալ օդնութիւն խնդրեց: Հայկացն
թագաւորը մտածելով որ իր տէրութեան շահը
կ' պահանջէր Պարսից հետ միանալ օտարին
դէմ՝ մեծ բանակ մը դրկեց Դարեհ հին զօրավիզ:՝
Խոկ Ալեքսանդր Արտէլ ճակատամարտին մէջ
մեծ յաղթանակ մը տանելէն ետև՝ Մարտասան
ու անիից Հայաստան արշաւեց և տիրեց: Բայց
Վահէ քիչ ատենէն նորա լուծն ուղեց թոժուել:
Այս ատեն Ալեքսանդր, որպէս զի Վահէին
զօրութիւնը կոտրէ և Պարսից բրած օդնու-
թեան ոին առնու, նորա դէմ՝ քալեց. Վահէ
Հայաստանի աղստութեան համար՝ բոլոր զօրքը
ժողվեց և Մակեդնացի աշխարհակալին դէմ՝
վազեց. բայց իր արիական գործն՝ որով իր
անձն հայրենեաց զօնէց, ակնկալած արդիւնքը
չունեցաւ: Ինք պատերազմի դաշտին մէջ՝ առիւ-
ծի պէս՝ պատերազմելով մեռաւ, Մեծն Ալեք-
սանդր Հայաստանի տիրեց և Հայկացն ուրու-
թեան կործանեց (331):

Հայաստան Ալեքսանդրաց նէր+ւ. Ալեքսան.՝
Այսպէս երկրորդ անդամ Հայք օտար իշխա-
նութեան ներքեւ ընկան, Ալեքսանդրի աշխար-

հակալութեամբ: Բայց այս աշխարհակալն Հայոց
սիրաը շահէլու և ապստամբութեան առաջն
առնլու համար, Մինչու անուն հայ իշխանն նոյսա
վրայ կուսակալ կարգեց: Այլ այս բաւական
չեղաւ երկրին մէջ խաղաղութիւն հաստատե-
լու. վասն զի հայ բանարքէներ՝ ամուր տեղուանք
քաշուած՝ կ' մաքառէին մերթ իրարու և մերթ
օտար բանակալաց գէմ: Այս շփոթութիւններն
աւելցան երբ Ալեքսանդր մոռնելով՝ իր զօրա-
պետներն սկսան իրարու ձեռքէ յափշտակել իր
ձգած ընդարձակ երկիրները (323):

Արդուուրու. Արդաշէս. Արդաշանչու. — Այս
խոռովութիւններէն օգուտ քաղելով՝ Արդուուրու
հայ իշխանը Հայաստանի տիրեց, մինչեւ որ
Մէծն Անդրէնու Ասորուց դահն ելնելուն մեր
հայրենիքն իր իշխանութեան ներքեւ առաւ և
զայն երկու կուսակալութեան բաժնեց: Մէծ
հայրէն Արդաշէս հայ իշխանին տուաւ, Փուր հայրէն՝
տրիշ իշխանի մը: Սակայն վերջէն երկուքն ալ
զլուին քաշելով Անահիգոսէն հոռմայեցոց հետ
զաշնակցեցան (180):

Այս միջոցին էր որ Կարքեգոնացի Աննիպաւ
մեծ զօրքակետը Հայաստան փախաւ և սարա խոր-
հրդով՝ Արտաշէս շնիեց Արդաշանչու քաղաքը:

Այս Արտաշէսի որդւոյն՝ Արդաշանչուոյ առ-
տեններն էր որ Պարմէւր ըստած ազգը Հայա-
ստանի տիրապան, և այսուհետեւ սկսաւ Արշա-
կունէաց իշխանութեանը:

ԱՐԵՎԱԿՈՒՆԻՔ

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՎԵՐԱՇՎԱՐ ԳՐԱԴ ՏԵՇԻՆ Բ.

(151—90)

Պարբեն . — Սկիւթիոյ անապատներուն մէջ զօրաւոր ազգ մը կար Պարբ կամ Պարբն անուն։ Այս ազգը շատ գարեր աննշան մնաց և Ալեքսանդրի իշխանութեան ներքն մնաւ։ Վայրեւնաբարոյ, չարքաշ, քաջամարտիկ ժողովուրդ մ'էր այս Պարբն ժողովուրդ։ Իր մէջն ելաւ։ Արշակ անոն քաջասիրատ երիտասարդ մ'որ Մակեդոնացի իշխանութիւն գէմ շարունակ պայքարելով հետպհետէ իր զօրքը շատցուց և Բանլքադքին (ուո խարա) մէջ թագաւորեց։ Բայց իր փառափրութիւնը սովաւ զոհ չեղաւ, այլ սկսաւ աւելի ևս յաւած զնայ, այնպէս որ Մակեդոնացի տիրապետները հալածեց իր երկրէն և իր անամբ Արշակունեաց հարատութիւնն չիմնեց։

Մէջն Արշակ . — Այս Արշակին թուը Մէջն Արշակ աւելի եւս տարածեց իր իշխանութիւնն և մինչեւ անդամ Աելեկացոց մակեդոնական սիժը կուրեց և իր հզօր բազուկը ձգեց Բահչէն մինչեւ Կովկաս, Հնդկաստան, Պարսկաստան, Բակտրիա, Հայաստան։

Երբ Արշակ Մէջն Հայաստան մտաւ, Հայք գէմ չկեցան, այլ նորա միացան որ Յոյները բոլորավլն իրենց երկրէն վանեն, որ շատ անիշտութիւններ և բոնութիւններ կ'զործէն։ Բայց այսպէս վարուելով՝ միայն բոնակալ փախցին, մինչդեռ պարտաւոր էին մաքառիլ նոր աշխարհակալին գէմ։ Այսպէս Արշակունիք տէր եղան Հայաստանի, թէ և նորա մեծութիւն ու պայծառութիւն բերին, բայց նորա նախկին պարզութիւնը խանգարեցին և նոր կարդ նոր կանան գրին։

Վաղարշէ . — Արշակ իր Վաղարշէն եղբայրը Հայոց վասյ թաղաւոր կարգեց՝ իր վերին իշխանութեան ներքեւ և ինք զնաց նիստէի արքունիքը բնակելու։ Վաղարշակի աէրութեան սահման ցցուց կովկասէն մինչեւ Պաղեստին, Ատրպատական նահանգէն մինչեւ Փոքր Ասիրա : Անմիջապէս Վաղարշակ հոդ տարաւ իրեն յանձնուած երկիրը բարեկարգել և իր լուծն Հայոց հաճելի ընել։ Ազգայանիստ քաղաքն ըրաւ Մէջն, և ամենէն առաջ ուղեց իմանալ թէ ուսկից կ'ծագին Հայք և ո՞ք են հայ նախարարներն ու աւագանին։ Բայց որովհեաւ Հայաստանի մէջ զրաւոր պասմութիւն մը չկտաւ, Մար Աբաս Կոտոբնա անտամը ասորի մ'իր քովը կանչեց, որ խելայի և հմտաւ մարդ մ'էր և նման նամակ մը տալով իր եղբօրն ուղարկեց։ Այս նամակին մէջ Վաղարշակ կ'աղջէր իր եղբայրն որ նիստէի արքունիք գիւանը Մար Արքասին բանայ որպէս զի իր փափաքած պատմութիւնը փնտուէ։ Արշակ իր եղբօրը խանիրը

կատարեց և Մար Աբաս Հայկազնոց ցեղին պատմութիւնը գտաւ, ասորի և յոյն լեզուով զրեց ու Վաղարշակին բերաւ : Արշակունի թագաւորը շատ գոհութեամբ ընկունեց և հրաման տուառոր զայն արքունի զանձը պահեն խնամօք . իսկ սոյն պատմութեան նշանառը մասերն ալ արձաններու վրայ դրոշմել տալով հրապարակները կանդնեց որ ամէն մարդ կարդայ :

Նոյն միջոցին Մորչելէնքու անուն իշխանն որ կապագովկինց վրայ կ'տիրէր, այլ և այլ կողմէ զօրք գումարե լով բանակ կ'կազմէր որպէս զի Վաղարշակին վրայ քալէ : Վաղարշակ այս պատրաստութիւնը լսելով՝ չսպասեց, այլ ինքը շուտ մը թշնամոյն դէմ զնաց : Այս Մորփիւղիկու կորովիլ մարդ մ'էր, ամուր զրաշնէր հագած էր և կոտին ժամանակ շատ մարդ սպաննելով՝ Վաղարշակին մօտենալու կ'ջանար որ զանի ևս սպաննէ : Բայց Հայոց քաջերն իսկոյն հասան և Մորփիւղիկուը զարկին սպաննեցին : Զօրքը ցիր ու ցան ըրին և այսպէս կապագովկիս Հայոց ձեռքն անցաւ :

Այս պատերազմը լմացընելէն ետե՛ Վաղարշակ Հայաստան գաւնալով՝ սկսաւ ներքին բարեկարգութեան հոդ տանիլ : Նահապետական հին կարդն ու հաւասարութիւնը բոլորովին ջնջեց . արքունական նոր նոր կանոններ հաստատեց : Նախ իր արքունիքը կազմեց, ամէն բանի զատ զատ պաշտօնատէրներ դրաւ : Երկու շարար կարգեց . մին պաշտօն ունէր ուղղութեան հրաւիրել թագաւորն՝ եթէ անիրաւ վճիռ կամ հրաման մ'արձակէր . միւսն արտօնութիւն ունէր թագաւորն արդարա թեան հրաւիրել, երբ

չարաղործ մը պատմելու անհոգ դանուէր : Քաղաքացւոց ու դիւղացւոց մէջ խորութիւն մոցուց, այնպէս որ Հայկէն մնացած հին տանտէրներու . և իր հետը բերած զօրապետներուն նախարարութեան աստիճան շնորհէց, որ իրենց յատու կ հողերն ու իրաւասութիւնն ունէին և որք տեսակ մ'ապագական իշխաններ դարձան : Բազարաստ իշխանին արտօնութիւն տուաւ որ Արշակունի թաղաւորաց գլուխը թագ դնէ, և նախորդիր անուանեց, որովհետեւ Հայաստան զալուն՝ ամենին առաջ Բաղարատ իր կողմն անցեր և իրեն օգներ էր . իր ցեղն ալ Բաղրադունի կոչեց : Վահագնի ցեղին կամ Վահագնեց քրմութեան պաշտօն տուաւ, Արմաւրի մէջ արեգական և լուսնի արձաններ կանցնեց, Մուրացան կամ Մարցան նահապետն թագաւորութեան երկրորդ անուաննեց և Հայաստանի այլ և այլ սահմանները կողմնակալներ կարգեց :

Վաղարշակ քաղաքներ ու զիւղեր շինեց : Խնք շատ որդիներ ունէր : Նոցա բնակութեան համար Հաղպենից գաւառը սահմաննեց և իր քովը միայն անդրանիկ որդին Արշակը պահէց : Այսուհետեւ Արշակունի թագաւորները սովոր էին արքայազուն իշխանները Հաշուենից զատան ուղարկել, որպէս զի արքունիքը մնալով խոռվութիւն չհանեն : Վաղարշակ՝ Բաղարատ իշխանը սախակց որ կուռք պաշտէ, բայց նա որ հրեց էր, իր կրօնին մէջ հաստատ մնաց : Այսպէս տէրութիւնը կարգաւորելն ետե՛ Վաղարշակ Մծբին քաղաքը մեռաւ :

Արշակ Ա. — Աղաղարշակայ յաջորդեց Արշակ
Ա. որ ջանաց իր հօրն օրինակին հետեւըլու :
Շատ բարեկարպութիւններ ըստաւ և Հայաստանը
ծաղկեցուց : Ինք արիստիրա էր և զգօն : Իր
օրովը Պոնտացիք ապստամբեցան և Հայոց գէմ
պատերազմի ելան : Արշակ յաղթեց Պոնտացոց
և այս յաղթութեան ինչոն Սև ծովան եզերըը
կոթող մը կանգնեց : Ապատմն թէ Արշակ օձի
արեամբ միաւուած նիզակ մ'ունէր : Անզամ մը
այս նիզակն այնպէս ուժգին նետեց կոթողին՝ որ
գնաց նորա մէջ խրեցաւ : Պոնտացիք այս ար-
ձանը՝ իբրև աստուածային զործ՝ երկար ժա-
մանակ պաշտեցին : Բայց երբ Արշակին որդին
Արտաշէսը նոյս գէմ պատերազմ մղեց, Պոն-
տացիք բարկանալով ծովը նետեցին արձանը :

Արշակ ալ Բաղրատունիները բանագատեց որ
Հռեից կրօնը թողան ու. կուռք պաշտեն : Եղբ
սոքա յանձն չառին, երկու հոգի սպաննեց : Այն
ատեն միւսները յանձն առին միայն շաբաթ օ-
րերն որսի երթալ և քանի մը մնալիս կամ օ-
րէնքներ թողուլ :

Արտաշէս Ա. — Արշակունի թագաւորաց մէջ
Արտաշէս Ա. իբրև մեծ աշխարհակալ կ'յիշուի :
Իր օրովն Հայաստան քաղաքական բարձր դիրք
մը սաացաւ, և իր իշխանութիւնը հերաւոր աշ-
խարհներ տարածեց : Արտաշէս փառասէր էր
և միանդամյն հեռատես, և ամէն բան կան-
խաւ պատրաստեց որ իր նպատակին հասնի :
Այն ժամանակ Պարթևաց վրայ կ'թագաւորէր
Արշական, որ՝ իր նախորդաց պէմ պատուով և
արքայական իշխանութեամբ առաջնը կ'սեղ-

ուէր, իսկ Հայոց թագաւորն իր երկրորդն էր :
Արտաշէս այս թագաւորական առաջնութիւնը
նորա ձեռքէն առաւ, Պարսկաստանի տիրեց,
այն տեղ իր պատկերով սուակ կոխել տուաւ
և յատուկ պալատ մը շնեց :

Այնուհետեւ իր որդին Տիգրանը՝ Վարագ ա-
նոն աղնուականին յանձնեց՝ որ զինուորական
արուեստին քաջավարժ էր՝ որպէս զի նորա մօտ
մարզուի : Այս Վարագն Հրազդան գետին կող-
մերը բնակեցուց՝ նմա տալով հողեր ու գիւղեր,
և իր ցեղը Վարագնունի կոչուեցաւ : Արտաշէս՝
իր Արշամ աղջիկն ալ Մինրդաբայ կոտ թեան
տուաւ : Այս Միհրդաբը Վարաց իշխանն էր և
գանձասի վրայ կ'տիրէր :

Այս կարգագրութիւններն ընելէն ետե՛ Ար-
տաշէս անհամար զօրք ժողվեց ու գէպ ՚ի ա-
րևմուտ զնաց : Փոքր Ասիոյ երկինները նուա-
ճեց . Արտեմիսի, Հեթանուայ և Արտեմիսի պղնձա-
ձայլ արձանները Հայաստան ուղարկեց որ Ար-
մաւրի մէջ կանգնեն : Յետոյ բազմաթիւ նա-
ւերավ Յունաստան անցաւ, և շատ երկիններու
տիրեց . սակայն երբ աւելի յառաջ երթալ ու-
ղեց՝ իր զօրացը մէջ մեծ յուղմոնք ծաղելով
սկսան զիրար կոտորել : Արտաշէս ալ խոյս տա-
լու ատեն՝ իր զինուորներուն ձեռօք սպաննուե-
ցաւ :



ԳԼՈՒԽ ԻԲ,

ՏԵՐԵՆ Բ. Է. ԳՈՎՈՒ ԱԲԴԱՐ :
(ՊՊ-Թ. Ա. Յ-Թ. Ե.)

Տէ՛րան Բ. — Խոչպէս Արամ Հայկաղանց՝
Խոյնպէս Տէ՛րան Բ. Արշակունեաց ժամանակ մեծ
շուք ու փայլ տուաւ հայ անուան, այնպէս որ
օտար աղյաց մէջ մեծ համբաւ հանեց, մաս-
նաւորապէս հռոմայեցոց դէմ մղած պատե-
րազմաց համար : Տէ՛րան Բ. իր հօրը պէս փառ
ուասէր, պատերազմանէր ու վեհանձն էր, սա-
կայն ամբարտաւ անութեամբը շատ անդամ իր
տարած յաղթութեանց պատուղ չքաղլց : Իր
հօրը կենդանութեան ժամանակ արդէն թագա-
ւորական իշխանութիւն կ'վարէր, և երբ նա մե-
ռաւ, անմիջապէս զօրք ժողվեց և Յոյնեն՝ որ
Հայաստան արշաւելու կ'պատրաստուէին, զար-
կաւ և վանեց : Եւ որպէս զի թշնամիք իր ա-
շխատեան սահմանները չկոխեն, կապագովկից
կառավարութիւնը Միհրուտին յանձնեց :

Կառոց մշնէաններ . — Տիկրան Հայաստան դառ-
նալով այլ և այլ կողյ մեհեաններ հաստա-
տեց : Այս կուռքերը Յունաստանէն քերուած
էին : Արամաղրաց (Արմիղը) ոսկեզօծ արձանն Անի
քաղքին մէջ կանգնեց, Անինատինը՝ թիւն աւա-
նին մէջ, Անահիտին՝ Երիվայի մէջ, Հեքիստին՝
Բագաւինջ զեղը, իսկ Վահագնէ (Հերակլէս)
արձանն արդէն Աշտիշատ փոխադրուեր էր Ար-

մաւրէն՝ և Վահունի քուրմերուն ձեռօք Վահեւ
վահեան մեհեանը գրուած էր, ուր կային նաև
Ասորին և Անահրայ արձանները : Յեաց Տիկրան
հրաման հանեց որ ամէն նախարարները
կողյ պաշտօն մատոցանեն . ՚ի սկզբան Բաղ-
րատունիք դէմ կեցան, բայց վերջը յանձն ա-
ռին . Ասուդ անուն իշխանին լեզուն կտրել տուաւ
կուռքերն անաբգելուն :

Տէ՛րան Բ. ՚ի պատրէթուղը հառմայեցոց դէմ . —
Միհրուտ որ անհաշու ասելութիւն ունէր հռո-
մայեցոց դէմ և իր պատերազմական հանձա-
րին համար մեծ համբաւ կ'վայելէր, Տիկրա-
նաց օգնութեամբը սկսեր էր իր Պոնտոսի տէ-
րութիւնն ընդարձակել : Կապալովկից վրայ իր
որդին Արքարանը ճագաւոր կարգեց՝ հռոմայե-
ցոց դրած իշխանը վրնտելով : Այս ասեն կա-
պակովկացիք հռոմայեցոց կ'բողոքեն և կ'աղա-
շեն որ իրենց օգնութեան համնին : Նորա Սէլլա-
զօրապեալը կ'ուղարկեն զօրքով, որ Արփարաթը
կ'վոնաէ և աեղն առջի իշխանը կ'զնէ : Այս
ատեն Միհրուտ սրտմտելով Տիկրանին հետ
կապակովկիա կ'վալէ, բոլոր երկրին կ'ափրէ
և իր յաղթութիւններն յառաջ կ'քշէ : Հռո-
մայեցիք՝ որ շարունակ Տիկրանին դէմ թշնամի-
ներ կ'գրգռէին, Սիլային տեղ Լուսուլու զօ-
րապեալ կ'ուղարկեն, որ Միհրուտամին կ'յալ-
թէ մասնութեամբ : Միհրուտ Տիկրանին կ'ա-
պաւինի և կ'յորբորէ որ իր բոլոր զօրքով հռո-
մայեցի զօրապեալն դէմ քալէ : Տիկրան մափկէ
չըներ, բայց Լուկուլոսին ինսկիրն ալ կ'մերժէ
և Միհրուտամը նորա ձեռքը չյանձներ, այլ զանդ

մը զօրքալ զոնտոս կ'արձակէ : Լուկուլսոս իսոյն Տիգրանակերտ կ'ղիմէ և զայն կ'պաշարէ : Տիգրան՝ որ երեք հարիւր հաղար զօրք ուներ, հռոմայեցի զօրապետին դէմ կ'ենէ . բայց նուրա բանակին քիչւորութիւնը տեսնելով կ'ըսէ . «Եթէ իրեւ դեսպան եկած են սոքա, շատ են, իսկ եթէ իրեւ թշնամի, քիչ են» : Եւ բոլորովին անհոգ կ'մնայ իր զօրաց արիութեան և յաղթութիւնը տանելու վստահ լինելով : Լուկուլսո յանկարծ Հայոց բանակին վրայ կ'յարձակի և զայն ցիր ու ցան ընելով Տիգրանակերտը կ'առնու : Տիգրան իր սխալմունքը կը ճանչնայ, վերսալին զօրքը կ'ժողվէ և հռոմայեցի զօրապետին ետեւն կ'երթայ, որ Տիգրանակերտը թալլէլէն ետեւ սկսեր էր Հայաստանի ներսերը քալել և Արտաշատ քաղաքն ալ պաշարել : Հայոց թագաւորը նորա հանդիպեցաւ Երշտակէ* գետին մօտ՝ և սաստիկ պատերազմ սկսու . ՚ի վերջէ Լուկուլսո ստիպուեցաւ քաշուիլ, վասն զի զօրացը պաշարը պակսեցաւ, և զնաց Միջագետաց Սծբին քաղաքը պաշարեց, որ բաւական դիմանալէն ետեւ թշնամեցն ձեռքն ընկաւ :

Բայց նոյն միջնցին Տիգրան Հայաստանի արեմտեան կողմէն երթարով իր կորուսած երկիրները նորէն ձեռք կ'ձգեր, և Միջրդատ ալ Գառիսո հռոմայեցի զօրապետին դէմ կ'կրուէր և նորա զօրաց մեծ ջարդ մը կ'տար . նոյնակէս յաղթեց Տիգրան զօրապետին՝ որ նոր զօրքավ Գառիսուի տեղն եկեր էր պատերազմի : Լու-

* Եփրատ գետին մէկ ձիւով, Արշակ գեղին անուամբ :

կուլոս այս ձախորդութիւններն իմանալուն շուամ մը պատերազմին դաշտն հասաւ՝ բայց իր բանակին մէջ խովովութիւն ծագելով չկըցաւ Հայոց գէմ պատերազմիլ :

Մյազէս Տիգրան վերստին կապաղովկիոյ տիշրեց . Միջրդատ ալ Պանտոսն առնելէն ետեւ սկսաւորէ օր յառաջնամալ և հռոմայեցւոց ծանր հարուածներ տալ :

Մէհրդատ ու Պանտէսս . — Հռոմայեցիք՝ որ միշտ յաղթական ենթելու սովորած էին, երբ իմացան որ իրենց զօրքը Հայաստանի մէջ սաստիկ ջարդ մը կերեր է, յետին աստիճան զայրացան և Լոկուլսան ետ կոչելով՝ անուանի Պանտէսս զօրապետը Միջրդատաց ու Տիգրանայ գէմ կըկեցին : Եթէ Միջրդատ ու Տիգրան միշտ միակամ ու միաբան խորհելով թշնամեց դէմ ամէն սպարադայի մէջ շարժէին, անտարակցս անսպարելի պիտի մնային, բայց երկուքն ալ վէս էին ու կամասէր և գժբաղկաբար իրենց ոյժը բաժնելով՝ նոյն նպաստակին զիմելու ելեր էին ։ Ուստի Միջրդատ դարձեալ առանձին ճակատ յարդարեց Պանտէսսի գէմ, բայց իր բոնած գիրքն անյարմար լինելով յաղթուեցաւ և Տիգրանին քովի եկաւ : Տիգրան երես դարձաց և Միջրդատ Կոռչէս զնաց որպէս զի Տիսփսարնակ ժողովուրդներէն զօրք ժողվելով այս անզամ չէ թէ Պանտէսսի վրայ քալէ, այլ Եւրոպա անցնի և հռոմայեցիքը Հռոմի մէջ զարնէ : Մեծ ու յանդուղն էր այս խորհուրդը ; բայց ինչ օգոտտ որ իր զօրապետներն ու Փառնակ որդին իրմէ ապատամբեցան և զինք բերդի 25

ով մէջ պաշարնեցին : Եթիհրդատ յուսահատ՝ իր ասլանորչ որդին անիծեց և նախ իր ընտաճեաց թոյն խմցուց և ապա ինքն ալ առաւ : Բայց թշնը չաղդելուն սրով ինքզինքը սպանեց : Այսպէս Միհրդատ՝ որ հոռմէական պիտութեան ահ ու սարսափ ազգեր էր՝ իրեններուն մատնութեամբ ընկաւ :

Տիգրան Պամպէոսի հետ ի հաշուուի . — Երբ Միհրդատ Պամպէոսին գէմ կ'աստերազմէր, Տիգրանին համանուն որդին ալ իր հօրմէ ապստամբեր էր՝ հոռմայեցոց գրգռութեամբ, և իր հօրը դահը յափշտակել կ'ուզէր : Պարթեաց Արշեալ թագաւորին օպնութեամբն Արտաշատ քաղաքը պաշարեց, բայց երբոր զայն առնշու չյաջողեցաւ, այս ասիրատ որդին Պամպէոսին դիմեց, այն միջոցին որ նա Տիգրանին վրայ կը զար, և զանի Հայաստան մտցուց : Տիգրան տեսնելով որ չորս կողմէն թշնամիները զինք պաշարեց են, իսկ էմո թիւն սեպեց Պամպէոսին հետ հաշտուիլ . տասի նորա բանակը զնաց և մեծ պատուվ բնունուեցաւ : Այս հաշտութեամբ Տիգրան հոռմայեցոց թողոց Մեծ հայաստանէն գուրս ստայցած բոլոր երկիրները, ինչպէս Կիլիկիայի, Կասպադովկիայի մէկ մասն ու Գաղատիան : Տիգրան իր որդւոյն հետ ալ հաշտուցաւ՝ Պամպէոսի միջնորդութեամբ, և նմա Փոքր Հայքը ու Ծոփաց դաշտու տուաւ : Միհրդատի մահուան լուրն առնլով՝ Պամպէոս ձոռմ դարձաւ ու իր տեղը Գաբէտասոս զօրապեան Ասորոց վրայ կուսակալ կարգեց :

Տիգրան Գաբէտանուի և Կրտսոսի կ'յաղնէ . — Բայց Պարթեաց հաշտութիւնը հոռմայեցոց հետ երկար չուեց : Տիգրան միշտ հին օին ունէր նոցա գէմ, ուստի նորէն զէնք առաւ և Գարփանսա զօրապեալին վրայ քալից : Գարփանսու Եղիպատոս փախաւ և հոռմայեցիք նորա տեղ կրտսոս զօրապետը դիմն, որ յետին ծայր ապահ ու ընչասէր մարդ մը լինելուն՝ նախ զնաց Երուսաղէմի տաճարին բոլոր զանձերը կողոպաեց և ապա Պարթեաց գէմ քալից : Տիգրան Պարթեաց Արշէղ թագաւորին հետ հաշտուեցաւ, որք Սուրբն իշխանը Կրտսոսի գէմ զրկեցին : Սուրբն հոռմայեցիք բանակը կոտորեց և Կրտսոս ալ սպաննելով նորա բոլոր կողոպաած զանձերն առաւ ու Հայաստան զրկեց : Հայոց Փարագրան զօրապեան ալ Ասորոց երկիրը նուաձեց :

Այսպէս անդուլ պատերազմելով անցուց Տիգրան իր թագաւորութիւնը, Արևելեան մեծափարթամ թագաւորի, փառամոլ ինքնակալի և անխանջ պատերազմողի անուն ձգեց Տիգրան՝ այնպէս որ հոռմայեցիք պատմիներ դրեթէ Տիգրանով Հանչցած են Հայաստանը (36) :

Արդարաց Ա. — Տիգրան արժանաւոր յաջորդ մը չունեցաւ : Եթ որդին Արքաւուն՝ անհոգ ու զօսասկէր մարդ մը լինելով Հայաստանի թշնամիներն ալ սկսան զօրանալ և շատ չարիք հասցընել : Մահան անդ հոռմայեցիք պատեհ առիթ զտան Հայաստանը նուաձելու, և Անտոնինու որ Հուոմի Ետապետութէն մին էր, Ասիա եկաւ, Ասորոց տիրեց և Պարսից վրայ քալից Արտաւազդէն օգնութիւն ինդիրելով : Արտաւազդ խօսք

տուաւ, բայց զաղմնի Պարսից օդնեց, և Անտոնինոս յաղթուելով Եղիպառ զարձաւ՝ որ հոռմէական սկառութենէ իրեն բաժին ընկած էր: Երբ իմացաւ նա Արտաւազգայ երկդիմի ընթայցքը՝ վրէծ առնել ուղեց և շատ զօրքով Հայաստան արշաւեց: բայց արիաբար կուռելու տեղ՝ Արտաւազգը խարդախութեամբ ձեռք ձգեց, ոսկի շլթայի զարնելով Եղիպառ տարաւ և կանի Կիւռապարը թաղուհոյն պարզեց՝ իբրեւ յաղթութեան նշանակի: Վազա վերստին Հայաստան գարձաւ, իր որդին Ալէքսանդրը Հայոց վրայ թագաւոր դրաւ և իրեն անունով ստակ կոխեց այս դրոշմով. Անդնէնոս յաշնո՞ւ Հայութանի:

Արտաւազգ քանի մը տարի զերութեան մէջ ֆնալէն ետք զիխատուեցաւ. Կլէսպատրա թագուհոյն հրամանաւ: Օտար պատմիչներ շատ դուեստներ կ'տան Արտաւազգայ, որու համար կ'ըսեն թէ բարեկիրթ, բանահիւր էր և թէ ողմերդութիւններ ալ շնած էր:

Արշամ. — Արտաւազգայ մահուանէ ետք Հայոց նախարարները՝ Պարսից Արշէղ թաղաւորին հետ՝ Տիգրանայ եղբօրորդին Արշամը թագաւորական գահը հանեցին, օտար թշնամիները վանելով: Բայց նոյն տարին Արշէղ մեռաւ. և իր աթոռն Արտաւազգի փաքրիկ որդւոյն թողուց Արշամ կ'փափաքէր բոլորովին հոռմայեցոց լուծը թոթուել. բայց որովհետեւ իրեն նիզակակից չունէր, Հռոմի Օգոստոս կայսեր զեսպան զրկեց և խոստացաւ Հարի վՀարել: Օսպան զրկեց և խոստացաւ Հարի վՀարել:

իր հայրենի իշխանութեան մէջ թողուց: Առաջին անգամ Արշամին օրովին է որ հայր հարկատու միացին հոռմայեցոց:

Արշամին ետք՝ քրիստոնէութիւնը մոտաւ Հայոց մէջ. նոր թուական մը սկսաւ: Աւստի այս տեղ կ'կարենք հայ սպասութեան թելը. և զբիս բ. ճաման մէջ հին պատմութեան վերաբերող միւս Արշակունի իշխանները պիտի աեսնենք:

ՄՐԱԳԻՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԸԿԱՆ

ՀԱՅՈՑԱԽԱՆ. — Հին Հայաստան՝ որ առաջին հայէտ ազն նահապեաց ժամանակ սահմանափակ էր, հետզհետէ թէ Հայկազոնն և թէ Արշակունի թագաւորաց աշխարհակալութեամբ ընդարձակելով՝ մեծ տարածութիւն մը ստացաւ, պինգսու որ հիմնակն մինչեւ Կողքին ու Կուր գետերը կ'անակը, հարաւուն մինչեւ Ասորեստան, արեւելքին մինչեւ Աղուանիր ու Կասպից ծովը, արևմտուարէն մինչեւ Պանտու ու Գամբրը (Կապագովկիա):

Հայոց աշխարհը լւանաւ է ու կիմն սաստիկ ցուրտ հիմնացին Կողմերը, բայց արքաւ անդ ու ջրաւետ ըլուրներ, ձորեր ու փոքրեր ունի որ օգը Կ'բարեխաննեն, մասնաւոր հարաւային կողմել:

Գլխաւոր լեռներն են, Արտաւազ կամ Մասիք, Տեղու, Կոբու, Արտաւազ, Դաղիձու, Երդու, Երդու, Երդու, Սաւասեւ, Ալիս, Գրիգոր, Արտաւազ, Քառու, Եալին:

Գլխաւոր գետերն են, Երդու, Տիգրէ, Երդու, Ճարտի, Ախուրէտան, Կուր, Գայլ, Հրազդան, Մարտան, Արդու, Տիգրէ, Քառու և այլն:

Գլխաւոր ծովակներն ու լիճերն են, Բաշնաւեց, Գեղալույ, Կոտուուց: Ա անյ ծովուն մէջ չորս կղզի կան. Աղբամար, Արտաւազ, Կոտու, Ալի: Գեղամաց ծովակն մէջն է Աւան կղզին:

Հայաստան երկու զիխաւոր մաս Կ'բաժնուի. Փուր հոյտ ու Մեծ հոյտ: Փոքր հայոց զլիս, գետ. Մելքա և Ալի:

Հորս նահանդ ուներ. Ա. հայտ, Բ. հայտ, Գ. հայտ և կազմակերպությունը սրբություն կամ կիբեռություն, ե-դրսեալ ապրեն:

ԱԵԾ Հայք տասն հինգ նահանգ ուներ. Բարձր հայութ, Տարբեր հայութ, Ազգութ, Տարբեր հայութ, Մասկութ, Կորմանութ, Պարսկականութ, Ալառութ, Անդամանութ, Արքութ, Փայտաբարենութ, Արքութ, Գանձքութ, Տաշութ և Արքութ:

6020 203-8

ԳՐԱՄԱՆԱՊԻ	ԳՐԱՄԱՆԱՊԻ *
Դարձանագիր	Անդ բերդ, թագուհուն, Ա-նելու-
Եկեղեցիք	երես, Թէւ, Խ-ի. (այժմ
Դեղջան	Բ-ին-էնիզ.
Մանանագիր	Ծերե, Խ-ու
Ապեր	Արեց, Ա-ը-րուն-ուն, Բ-ի-բեր-
Կարճն	Կ-ին, Ա-ը-շ, Լ-ուն-իւր.

20220207 2034

Հաշտեանը	Ալուսայ, արքերի մահ Տիգրեակե
Պարտառուն	Գողջն, Աբրն.
Բալահովիս	Բարձր, Մեծէթուր.
Ծոփք	Նորիթուր, (Ծոփքարդին), 2 գլխաւուր.
Հանձիթ	Խորբերդ, Շաղալանուր, Հ-

WJ 2418

ՏԱՐԱՔԵՐԱՆ

Տարոս Եղբայր, Առաջ, Հայեցի, Օչ
Աշխատա, Արհետ, Դիմուն
Աշմանիկ Եղբայր, Երեխ, Ծովածու

* Φιέκ λιαν φωηρωφήσερ αγος διωρφίσεν μερος οπρ εργιστον-
νειαργ. Εγραψαντινή πε βιωρφιστονήνη ήτανωνηδηγ. Στικιστινηκ
χρηματωδησεν, αυλακωνητηρινησθινη χρηματεινης ζωωμαρη οφι μεν-
φωαργ. ερημη ηλιαν αγος απετη ζηντζωνωνακενηφ, αγνακεν οπρ ζωη
αγωνιστηθειεωνη μηριαν μενοικηρωνη αλη διωριαγκ:

ԳՐԱՎՈՐ ԳՐԱՎՈՐ	ԳՐԱՎՈՐ ԳՐԱՎՈՐ
Հարբ	Մահապետ, Հայութն, Հեծ- բեռն.
Վարպանուսիք	Խըմ, Արքի, Բաղել.
Բազումնիք	Զարկւոր, Արքել, Արքաբեց,
Ազիզնիք	-----
Ազատունիք	Գալուստ Աքանչ, Թափ-

ՄՈՒՀ

Եղայր
Զերմանոր կամ Շատախ Աղբաշնեւ.

ԿՈՐՃԱՑՔ

Կորդուք (քիւրտ)

ՊԵՐՎԱՀԱՅՐ

Զ արեւ Հ աւան
Զ արեւանդ
Հ եր

ԳԵՐԱՊՈՒՏՎԱԿԱՆ

Ուշտունիլը	Առաջեւ, Մարդունիբոր, Կարմելի-
Տուր	Աղա-ն, Աբրու-մեր.
Առաքերանի	Բերդիք, Ար-եսոր, Ար-ե-.
Առնայտան	Տ-եր-ո-ր, Տա-մե-յո-.
Անձեւեաց	Կ-ա-դր-ո-ր, Հ-ա-դ-ո-ւ-ն-.
Երրունդունիլը	Հ-ա-յո-յո-ր, Հ-ա-յ-ո-ւ-ն-.
Արտաղ կամ Շաւարշան	Ա-ս-տ-ո-ր, Մ-ո-ս-.
Ազգակ	Հ-ո-ր-ա-յ-ի-բ-ո-ր, Ա-ր-բ-ո-ւ-ն-.
Ճուռակ	Գ-ի-ռ-ո-ր, Մ-ո-ս-ո-ւ-ն-.
Գողթն	Զ-ա-ռ-ո-ս, Ո-բ-է-լ-ո-ր, Ա-դ-ո-ւ-ն-.
Կախճաւան	Կ-ա-խ-ճ-ո-ւ-ն-.
Վարանդ	Մ-ո-ս-ո-ւ-ն-.

ԱՐԵՎԻ

ԵՐԱԾՈՒՅԻ	ԵՐԱԾՈՒՅԻ
ԳՐԵԱԾՈՒՅԻ	ԳՐԵԱԾՈՒՅԻ
ՇՎԵՆԿՐ	ՇՎԵՆԿՐ
ԲԱՂԵ	ԲԱՂԵ

ԳԼՈՒԽ Ք ՀԱՅ

ԳԼՈՒԽ Ք ՀԱՅ

ՀԱՅ
ԱՐԵՐԿԱՅ ԱՅ ԱՅ
ԴԱՅ ԱՅ

ԱՐՑԱԽ

ՄԻԱ ՀԱՅ ԱՅ
ՎԱՐԴԱԿԱԿԲ

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

ՈՒՏԻ

ԳՈՒՏԻ

ԳՈՒՅԻ

ՇՈՒՄԻ

ԳՈՒՅԻ ԱՐԺ

ՀԱՅՐԱՄԻՐ

ԱՐԺԻՆ ՀԱՅ ԱՅ ԱՅ
ՀԱՅ ԱՅ ԱՅ

ՏԱՅ

ՏԱՅ ԱՅ ԱՅ ԱՅ
ԱՅ ԱՅ ԱՅ ԱՅ

ԱՅԻՒՄԱՏ

ԱՅ ԱՅ ԱՅ ԱՅ
ԵՐ ԵՐ ԵՐ ԵՐ
ԵՐ ԵՐ ԵՐ ԵՐ
Կ Կ Կ ԿԲ Բ Բ Բ
Բ Բ Բ Բ
Բ Բ Բ Բ

ԲԱՋՐԱԿԱՆԴ

Բ Բ Բ Բ
Բ Բ Բ Բ
Բ Բ Բ Բ

ԾԱՎԱՐԱԿԱՆ

Ա Ա Ա Ա
Ա Ա Ա Ա
Ա Ա Ա Ա

ՄԱՍԱԿԱՐ

Օ Օ Օ Օ
Օ Օ Օ Օ
Օ Օ Օ Օ

ՎԱՐԱԿԱՐԱՆ

Ա Ա Ա Ա
Ա Ա Ա Ա
Ա Ա Ա Ա

ԿԱՊՈՎԻ

Ե Ե Ե Ե
Ե Ե Ե Ե
Ե Ե Ե Ե

ՎԱՐԱԿԱՐԱՆ

Գ Գ Գ Գ
Գ Գ Գ Գ
Գ Գ Գ Գ

Այս ։ — «Աակնի հայկազունի կ սկզբան բնապաշտ է ին լուս թեան զօրութիւնները կ պաշտէին և ասուածութեան քրայ աղա զաղափար մունէին։ Իրենց պաշտամնն տեղեն էին լեռներու զագաթներ, անսասներ, ինչպէս Արմենական տնկած ռուեաց անսաւը։ Բայց ժամացէանէ հայկազունի պարզութիւնը կրուսն և սկան արեւ, շառակն ու աստղերը պաշտեւ և նոցա համար, յատուկ մէջեանները ու բարինները լինել մանաւանդ երը Պարսից, Ճնդկացոց, Բարելցուց և Յունաց հետ յարաբութիւնն հասասնեցին նոցա աստղաններն ալ հայկական բնին դից հետ միացուցն։

Հին հայոց գլխաւոր դիբն էին, Արմագր, Տեր, Միհր, Արեւ, Անաներ, ինչ դիցուհին, Անահիր, Արտիկ, Կապուհի, և այլն։

Արմագր գերազան աստուածն էր, բոլոր տիեզերաց արարիւ ու կինդանարար Էակը, որմէ ճանած էր Միհր, հոռը, կրակի աներեւոյթ նշանը Միհր քաջերու պահապան էր և պատարազմի մէջ յարթուղներուն պակ կ'չնորդէր։ Արմագր, որու ազգին էր Կապուհի, յատուկ հըեւտուկ մ'ունէր Տեր, որ մարդոց վրայ կ'չսկէր, նոցա բարի ու վատ գործերը զբքի մը մէջ կ'զրէր և մեռաղյուններուն հոգին Արամագրայ առջև կ'չանէր գատելու համար։ Ուստի գիտութեան ու գլուխութեան աստուածն էր Տեր։ որու ռամփօրէն դրա անունը (քրոջը առնել) կ'ասպի հայր։ Վաղարշապատի մօմ տաճար մ'ունէր, ուր քարմերը բրուգին պատարազմ կ'հարցընեին և երազներու մէկնութիւն կ'ինսդրէին։

Արտիկ (Ափրոդիտէ) Վահագնի կինն էր ու կանանց պատարագ։ սական դիցուցն անձնէն շատ պատի վզիւղը և աղպային մեծ աստուածուհին էր Անահիր (Աստերի ըստ յանաց). Միկեղա ըստ բարելցուցոց)։ Սական չէր նմաններ նա Բարելցուցոց շուայու Միկեղա պին, այլ Հայոց մէջ ուրիշ ընութեամբ կ'պաշտուէր։ Անարատութեան, չամեսուութեան, զգաստութեան զիւցին էր և աղգին հոգածու ու խնամատար։ Էրիզոցի մէջ ունեցած արձանին անունն էր սահմանար, սահմանար։ Տարին մի անգամ ամառն՝ այս դիցուցին համար հանդէս կ'կատարէին հայք և վարդ ու աղասին կ'սուիրէին։ (Արգագալու)։

Սպար էին հին հայոց դիմաւոր աստուածները։ Վերջն ուրիշ դից արձաններն ալ ընդունեցան և սոց նմանող հայկական դից մէջեաններու մէջ դրին, ինչպէս Անդաս, Ապաւուն, Հեթեսուս։ Սերտիւն, Հեթուն և այլն։

— Հայկազնն ժամանակը մինչև
Արայ՝ կառավարութիւնը հանձաղեցրածն էր: Այսինքն
ահա մեկ ցեղ իր յաստեկ տանակը կամ շեղապետն ու-
նէր և նորա հրամանին կ'հնազանդէր: Տանտերն իր սահ-
մանին մէջ ազատ էր: Ինք կարգի կ'գնէն իր գիւղին կամ
աւանին գործերը, լասապահութեան կ'կարէր, տեղդյուն զար-
գացման և պաշտպանութեան հոգ կ'ատանէր, և ցեղովին
ընտրուած խորհրդակից ձեւերն ունէր: Սակայն պարա-
ւոր էր նա ևս իրեն նման ցեղապետներուն հետ' Հայա-
տանի մէջ հանձաղեցրէն հնազանդիւ, և նորա վերին բ-
րաւասութիւնը հանչալվ' ի հարկին նմա օգնել խոր-
հրդուու ու ջրբոյք: Այս օգնութիւնը կ'պահանջէր մէջ
նահապեսն երեւր Հայաստանի մէջ կարեւր կարգադրու-
թիւն մ'ընելու, երբ անսասան ցեղապետ մը պատճեւու,
երբ օսար թշնամեց դէմ պատերազմ բանալու պէտքը
տեսնէր: Հայք շատ գարեր սոյս պարզ նահապետական
վարչութեամբ յառաջացան: Հարբացի թշուլութեամբ հնի
կարգն ու մեւ ըստ նանդարեցան: Արամ եղաւ առաջննոր՝
ճանր պարագաներէ ստիպեաւ: Իր վայ նահապետու-
թիւնը կերպ մ'ինքնիշանութեան դարձուց որպէս զի կա-
րող մինի օսար ասապահնիւթերու դիմագրելու: Հայ ցեղա-
պետներն ըստանու արիւնութիւնն ու շահաստակութիւնները
տեսնելով լուս կեցան սյու փոփոխութեան վրայ և թշու-
լութիւն որ նա Հայաստանը վասնագէ ազատէ: Իր յաջրդ-
ները Հայաստանի ինքնօրինութիւնը պահէցին, Ասորես-
տանցու պաշտպանութեան ներքեւ, մինչ որ Պարոյր՝
գրեթէ միապետութիւն հաստացէց՝ իր վլւիր թագ
դնելով:

Իսկ Արևած ՄԵԾ՝ Հայաստանի տիբանալով՝ բոլորով վիճակը հին կառավարութեան ձեռն, և Վաղարշակ և Պատրիք գիւղացիքը զեկերով՝ շատ մը նախարարութեաններ կարուեց՝ նոցա ընդարձակ Երկիրներ տալով և արքունիք պաշտօններ ու իր զօրութիւնն ոնցա աջակցութեամբ հասանակ լով՝ Բայց նախարարական իշխանութիւնն որչափ ատեն որ թագաւորներն իմաստուն են հզօր էին՝ հնագանդ մնաց թագին, իսկ Երբ սոքա ընկան, իւրաքանչիւր նախարար տեսակ մ'ինքնազուի իշխան իր նահանգնեն վրայ, ապա ապաստիք դարձաւ թագաւորին գէմ, և Հայաստանի պառակտնան ու կործանման դլխառոր պատճառն.

Գրաւունութեան . — Հայր ի իրենց դիւցազնական ժամանակներն ունենալով՝ ունեցած են նաև դիւցազնական քահանական շնորհներ :

արդին մըքի հասած չէ, այլ խորենացին քանի մը անգնն հաստաձներ իր պատմոթեան մէջ՝ ի լոյց աւանդած է: Այս կոտրեթեն կ'երիք որ Տօնիկառակ բաւական յասագաղ գաղաց է ին մասպէս, և վեզեր, եթե՛, շաշաց է, առաջին ունեն որ զիցարական ու պատմական դէպիկրո, կարապիքը քաշամարմութեամբ կը լատ հաւատարմութեամբ կը պարունակի ին:

Առաջնական և լավագույն պահանջման հիմքն է: — Առ հասարակ սուսպիլութեան, Երկրագործութեան արշէսար շատ ծաղկած էր Հայաստանի մէջ: Երկրին ընութիւնը կ'ապահանջը բար ամեն հայ գարդ լինի սրբու, որ ամեակ մը մարդանք էր պատեսացազի: Խամսն աւ: Թագաւոր, իշխան ու գեղացի վայրի կենդանիներ որսալու մէծ յաջողակութիւն սուենին, որն դը լաւորակէն Հայակիվան լեռը: Կողովիտ գաւառը, Մասեաց ոսն կ'դանուեին: Արտաշէս Բ-ի օրով մանաւանդ Երկրագործութիւնը շատ յառաջ զնաց: Հայաստանի մէջէսաները, արձաններն ու դասակակերպները ցայտ կ'ստան որ Հայոց յետամանց չէին սակած ճարտարագործութեան ու արձանագործութեան մէջ, թէեւ իեւնց դրացի ազգաց մէծագործութեան չէին հասներ: Հիմն հայոց մէջ Երևանի էին վիպասաններն ու գուշանները, ի մասնաւորի Գողթման երգիւներն, որ բամբակներով կ'երգէին հին դիւցազնց արարքը:

Իսկ վաճառականութեան մէջ բաւական յառաջ զացած էին հայք և օտար ազգաց Հետո ի վաղոց թէ ցամաքային և թէ ծովային յարաբերութիւն հաստատեր էին։ Մասնաւանդ Փիննիկեցիք, Բարելսբաշիք սամատար Հայստա-սանի զանազան վաճառքներ կ'ընդուռեին, նոյնպէս չըշա-կայ ժողովուրդներն և փիսարքներն ուրիշ ապրանք կ'ու-ղարեին։ Հայստատանի գետերը հազրդակցութեան մրցոցներ էին Կասպից ծովառն, Ալարսից ծոցին Հետո։ Հայստատան կ'արտադրեր ցորեն, գարեն, աղ, գուշ, բարեկամ, արջառ, ոչչար, ձի, չորի, որդան կար-մր, գինին, տառակ, որ քանունեաց ծավեն կ'ենէն, հայ-կակ և այլն։ Հայկազանց ժամանակ ծամանակ քաճառաւաշահ քաղաք-ներն էին Արմամեր, Արսաշտա, Վան։

ՎԵՐՋ



ՎՐԵՊԱԿՐ

ԵՐԵՎԱՆ	ՏԵՂԻԿԱՆ	ՍԻՐԱԿ	ՌԱԴԻՔԻՆ
25	8	Քաղաքական	Քաղաքային
33	25	Միջազգայտաց	Միջազգետաց
33	12	Յարարակու	Յարարակու
35	14	Տնելիքոր	Տնելիքոր
45	8	Երրին	Երկրին
57	24	ԴՐԵՆԱՅ	ԷՐԵՎԱՆ
83	3	(պակաս)	ՍԱՀԱՅՈՒՆ ՎՃԱՐԵց որ
			մանկիկը զորովա-
			դութ կնոջ տան :
»	20	Աշտանակակիր	Աշտանակ
84	3	Հերան	Հերաս
96	00	Յուղա, Մակաբէ	Յուղա Մակաբէ
149	31	Մէայնուն	Մէրիւնուն
135	27	Հայլեամ	Հայլեամ
138	23	Քարքեղոն	Կարքեղոն

ՑՈՒԿ ԳԼԽԱՑ

88

ԵՎՀԱՅՆՈՒԹ ԳԻՏԵՐԸ

ԱՌԱՋԵՆԻ ՄԱՐԴՈՒԿ . — ԶՐԱԾԵՂԵՂԵՆ առաջ . —
ԶՐԱԾԵՂԵՂԵՆ էրու : — ՄԱՐԴԿԱՑԻՆ ՑԵՂԵՐ . —
ՑԵՂԵՂԻՆ բայց անուշ : — ՄԱՐԴԿԱՑԻՆ ԼԵԶՈՒՆԵՐ .
ՍԵԽՈՒՆԻ ընդունելի : — Արեայ ընդունելի : — ՄԱՐԴ-
ԿԱՑԻՆ ԿԵՆՑԱՐ . — Ապրուսոր . — Արուեսոր . —
Կրթութեա : — ՄԱՐԴԿԱՑԻՆ ՀԱԿԵԲՈՒԹԻՒՆ . —
ԸՆԴՈՒՆԵԼԻ : — Հայրենի հող . — ԼԵՂԱ . — Կրծ .
Օքէն . — Պարորի : և ի բատուն : — Օքիայ պէտ-
րւ . — Օքէնորիր ու վիճակետ : — ԿԱԲԱՎԱՐՈՒ-
ԹԻՒՆ . — Սէլչը . — Կառավարութեան յլէր : —
ԾՐԱԳԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ . — Ասիս . — Ադ-
րէլի : — Եւրոպ Երև 9

ԳՐԱՄՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆՔ

Արևելեան Հին ժողովուրդք 36

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՅԵՑԻՈՅ

ԳԼՈՒԽ

Երես

Ա. Աշխարհիս արարչութենէ մինչև Ար-	
բահամ	39
Բ. Արքահամեն մինչև Մովսէս	44
Գ. Մովսիսէն մինչև Թագաւորք	59
Դ. Թաղաւորներէն մինչև բաժանումը . .	74
Ե. Խորայէլի բաժանումէն մինչև զերու-	
թեան վախճանը	84
Զ. Պարսից ափրազետութենէ մինչև Քրիս-	
տասի ծնունդը	93
Ծրագիր աշխարհագրական — Մովսի-	
սական օրէնք . — Զոհ և տօն . —	
Կառավարութիւն . — Գրականու-	
թիւն	97

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՐԵԱՏԱԿՑԻՈՅ

Է. Առաջին թագաւորութենէ մինչև Սար-	
դանաբալ	101
Ը. Երկրորդ թագաւորութենէ մինչև Կի-	
նուէի կործանումը	107
Ծրագիր աշխարհագր. և այլն	110
Թ. ԲԱԲԵԼԱՑԻՔ ԿԱՄ ՔԱՂԴԵԱՑԻՔ	113

Կրօն . — Կառավարութիւն . — Աշ-	
ձառականութիւն	114

8r

534

12013

669